 ամեն բանըդ կարգով գործէ .  
 որ հողւոյդ նաւն անցնի ծովէն ,  
 ազատ մընայ փորձու թենէն :

ճ . ճ . ճ .

Ճըշ մար տու թիւ նրն | է | մի | ան փա փոխ |  
 և | յա շի տե նա կան , և | մէկ | բան | մը | կա  
 բող | շէ | ա նոր | յող թե ըու . միշտ | յող  
 թող | է | ա մենն | բա նի . ա նոր | հա մար | ը  
 սաւ | Քը բիս տու . ևս | ևս' | ճա նա պարհ ,  
 ճըշ մար տու թիւն | և | կեանք : Ա պա | ճըշ  
 մար տա սէր | մար դը | Քը բիս տա սի | է , ոչ |  
 սուտ | կը սի բէ , ոչ | խա բէ ու թիւն | և | ոչ |  
 կեղ ծա լո բու թիւն , զի | այս պի սի | մար  
 դը | սա տա նայ ին | է' որ | սը ամեն | հայ ըրն |  
 է . իսկ | ճըշ մար տու թիւ նը | կը խայ տա  
 աւ կէ | զայն պի սին , ու | կը փա աւ լո բէ |  
 ճըշ մար տա սէ ըր . ա նանկ | որ | ճըշ մար  
 տու թեան | ճամբ բայ էն | դարս | շեղ ընր , ա



դէկ | բան | կը սի բէ . ու | հո դեւ լոր | և | ի մաս  
 տան | ան ձանց | հետ | կը տես նուի | միշտ :  
 ճէն ճանապարհ քեզ ցուցանէ ,  
 չըհետանալ 'ի ճըշմարտէ .  
 ոչ սուտ խոսիլ ոչ երդուրննալ ,  
 զի ճըշմարխան աստուծոյ է :

Մ . մ . ճ .

Մար գըն | է | վա քրիկ | աչ խարհ | ա մեն |  
 կա տա բե լու թեամբ | զար դա բաժ | բա նա  
 կան | հո դուր | և | մըտ քով | լու սաւ լո բաժ .  
 որ | է | ի բեն | ա բե դա կը , և | ա նով | կ'ը սուի |  
 պատ կեր | աստուծոյ , իսկ | մար մի նըն | ու  
 նի | ջուր , բոյս , կեն դա նի : Ա պա | ա մեն |  
 մարդ | նախ պի տի | մը տա ծէ | թէ | մարդ |  
 եմ , ան մահ | հո դի | ու նիմ , եր կըսող | պի  
 տի | մը տա ծէ | թէ | քը բիս տո նեայ | եմ , և |  
 մը կըր տու թեամբ | Ա դա մայ | ըս կըր քը նա  
 կան | մեզ քէն | ա դա տած | եմ , ու | Քը բիս  
 տա սի | ա նուամբ | զը բոչ մած | եմ | և | ան  
 դամ | և դամ | եմ | Յի սու սի . եր բող | մահ |  
 կայ ' պի տի | մեռ նիմ , և | աստուծոյ | պի տի |  
 հո մար | տամ | և թէ | բա բի | է | դորժ քըս | և  
 բանի | է | ին ծի , և թէ | չար ' վայ ինձ :

Մենքն մըտքիդ խմայ կուտայ ,  
 մահուան վըրայ միշտ մըամբտա .  
 մեզայ բաներ միտքը չըդայ ,  
 մարդ ևս մարդու վայլածն արա :

Յ . յ . յ .

Յոյսն | է | աս տու ածա բա նա կան | աս ու  
 քի նու թիւն , որ | աս ուս | կու դայ | կեն դա  
 նի | հաւատ քէն . որով հե տե | ու | որ | ճըշ  
 մար տու թեամբ | կը հաւատայ | աս տու ծոյ ,  
 պէտք է | որ | բո լոր | սըր տով | յոյս | ու նե  
 նայ | աս նոր | ո զոր մու թեա նը | և | հաս տատ |  
 յու սով | աս պաւի նի | ո զոր մած | ըս տեղ ծո  
 զին , որ | զին քը | չը պի տի | կոր սըն ցը նէ .  
 զի | բա բե գոր ծայ | հա մար | ար քայ ու  
 թիւն | խոս տա ցեր | է . աս հա | այս պէս | սէ  
 ըն | ալ | կը բոր բո քի . աս նանկ | որ | միշտ |  
 կը վա վա քի | որ | եր թայ | մի ասայ | ըս տեղ  
 ծո զին | հեա | յաւի տե նա կան | սի բով . ուս  
 տի | հաւատք | յոյս | սէր | միշտ | կա պուած |  
 են | ի բա բու | հեա :

Յին յոյս տայ քեզ յաստուած յուսա ,  
 մի կըտրեր յոյսդ երբ ցաւ մը դայ .  
 եթէ յաջող եթէ ձախորդ ,  
 ամեն մէկ բանն աստուած կուտայ :

Ն . ն . ն .

Նա խան ձը | գէշ | մո լու թիւն | է | որ | կը  
 բա կի | նը ման | կ'այ բէ | նա խան ձոտ | մար  
 գը | ու բի շին | բա բեա ցը | վը բան . աս մե նե  
 ւին | այ լոց | աս զէ կու թիւ նը | չու զեր . կը  
 տըրտ մի | թէ որ | մէ կին | աս նու նը | կամ | բա  
 նը | գո վեն . թէ որ | ձեռ քէն | դար , աս զէ կու

թիւ նը | աշ խար հէս | կը վեր ցը նէր | որ | մար  
դու | շըլ լայ, որ | է | զի ւա կան | բը նու թիւն :  
Ս, պա | ա մեն | քրիս տո նեայ | պէտք է | որ | աս |  
մն լու թե նէ | հե ոու | փախ չի | ու | բա ըի | նա  
խանձ | ու նե նայ . եր բոր | այ լոց | վը բայ | ա  
ղէկ | բան | տես նէ | ին . քըն | ալ | հե տե շի | որ |  
ու նե նայ , և | բա ըի | ա նուն | աս տուա ծա  
պաշտ | ըլ լայ | աշ խար հիս | վը բայ :

Նուն նախանձին համար կ'ըսէ ,

թէ կըրակի շատ նըման է .

նախ ունեցողը կը խանձէ ,

ապա այլոց սիրաը կ'երէ .

Ծ . 2 . 2 .

Ծը նորհ . քըն | է | ձը ըի | պար դե | աս տու  
ծոյ , որ կու տայ | քրիս տո նէ ից . որ պէս զի |  
բարի | ըլ լալով | վըր կու թեան | հաս նին, ու |  
Քը ըիս տո սի | չար չա բա նա ցը | պը տուղ  
նե ըը | վայ ե լեն . ա պա | ա մեն | մար դու | հար  
կա ւոր | է | շը նորհ . զի | ա ունց | շը նոր հաց |  
մարդ մը | շը կըր նար | ար դա բա նալ , ու մեղ  
քէ | սըր բը շիլ , ար քայ ու թեան | որ դի | ըլ  
լալ : Ուս տի | պէտք է | միշտ | շը նորհ . խըն  
զրեւ | ա բար չէն , ու | ան շը նորհ . շը մը  
նալ . զի | ան շը նորհ . մար դը | սա տա նա  
որս | կ'ըլ լայ | կը կոր սուի | յա շի տեան :

Ծան շնորհազարդ ասէ եղիւր ,  
ու նայն մարմնոյդ մի հետեիր .

չնորհօք փըրկչին կըրնաս միայն ,  
վեր ելլելու յերկնից խորան :

Ո . ո . ո .

Ու սու մըն | է | տե զե կու թիւն | ա մեն |  
հար կաւոր | բա նե բու | և | դի սու թեանց ,  
ո բով | մար դը | սոր ված | և | լու սաւո բած |  
կ'ըլ լայ . իսկ | ան ուս | չը սոր ված մար դը |  
ան բա նի | նը ման | կ'ապ ըի , ու | թէ | մարդ  
կայ ին | ըն կե բու թեան | և | թէ | բո լոր | աշ  
խար հի | ծան բու թիւն | կ'ըլ լայ . ուս տի |  
հար կաւոր | է | որ | որ չափ | կ'ապ ըինք' ա զէկ |  
բան | սոր վե լու | ջա նանք . ա պա | ով | որ |  
փուծ | բա նե բու | և տե է | ըլ լա լով | չու զեր |  
բան | սոր վիլ' կոյր | կը մը նայ , և | մար դու | սի  
բեղի | չը կըր նար | ըլ լա լու . ա նանկ | որ | ա  
մե նը | իր մէ | կը փախ չին , և | մարդ | ե բե  
սը | չը նայ իր :

Ոն հետեէ կ'ըսէ ուսման ,  
և մի ըլլար անուս անբան .  
քանզի ուսմամբ և հանճարով ,  
մարդը միայն մարդ կը ճանչնան :

Չ . չ . չ .

Չար չա բան քըն | Յի սու սի | ե զաւ | բո  
լոր | աշ խար հիս | հա մար , ո բով | բա ցուե  
ցաւ | ար քայ ու թեան | դու ոը | ա մեն | հա  
ւա տա ցե լոց . և | ա մեն | քրիս տո նեայ |  
պար տա կան | ե զաւ | որ | բա ըի | ըլ լայ | ու |



ար քայ ու թեան | հաս նի . նա և | միշտ | Յի  
 սու սի | խա չըն | ու | ցա ւը | միտ քը | բե բէ | և |  
 համ բե բէ | ինչ | ցաւ | որ | ու նե նայ . ոչ | հը  
 պար տա նայ , և | ոչ | բար կա նայ | այ լոց | վը  
 բայ . ամեն | նե զու թեանց | զին քը | ար ժա  
 նի | հա մա բի , որ պէս զի | ՚ի հան դեր ձեա  
 լը | նոյն | սուրբ | չար չա բա նայ | չը նոր հօքը |  
 պը սա կուի . ո ըով հե տե | ինչ պէս | որ | ոս  
 կին | կը բա կին | մէջ | շա պա կա նիր , այլ | ա  
 ւե լի | կը մաք բի , այս պէս | համ բե բող | հո  
 գին | խաչ | քա շե լով | ա ւե լի | կը լու սա ւո  
 բի | և | աստուծոյ | հա ճոյ | կ'ըլ լայ :

Չան խրրատ տայ հոս չարչարուէ ,  
 համբերու թինն , միշտ համբերէ .  
 այլոց չարեաց թէ դուն տանիս ,  
 նրման վրըկչին մարդ կը շահիս :

Պ . պ . պ .

Պա տուի բա նըն | է | ճը բա դի | նը ման | որ |  
 շի տակ | ճամ բայն | ցոյց | կու տայ | մար դուս .  
 ա նոր | հա մար | աս տու ած | Ա դա մըն | ըս  
 տեղ ծա ծին պէս | պա տուի բան | տը ւաւ |  
 որ | չը սը խա լի . իսկ | Մով սէս | մար դա բէ  
 ին | ձեռ քով | տը ւաւ | տա սը | պա տուի բան |  
 Սի նա | լե ոը | եր կու | քա բէ | տախ տակ նե  
 բու | վը բայ , որ | հաս տատ | պա հեն | ու | չը  
 մն լո բին : Աս | պա տուի բան նե բը | հը բա  
 մայ եր | են | որ | աս տուծ մէ | ՚ի զատ | ու բիչ |  
 բան | չը պաչ տեհը , աստուծոյ | ա նու նը | պա

րապ տեղ | չը յի շենք , կի բա կի | ասն | օր | չը  
 բա նինք , ծը նող քը | պա տու ենք . մարդ  
 չըս պան նենք , չը շը նանք , չը գող նանք ,  
 սուա | չը վը կայ ենք , բա նի | չը նա խան ձինք |  
 ու | չը ցան կանք : Ա հա | ա սոնք | ա մեն | մարդ-  
 պար տա կան | է | պա հե լու :

Պէն պատուիրանն աստուածային ,  
 պահէ ասէ զերթ դանձ անդին .  
 որ անմօլար երթաս ուղին ,  
 արքայութեան ճանապարհին :

Ձ . Զ . Զ .

Ձեր մե ուն դու թիւ նըն | է | աս տու ած  
 սի բու թիւն , որ | բա ըի | հո գին | ջերմ | սի  
 բով վա ուաւձ՝ կ'ա զօ թէ | աստուծոյ , ու |  
 կը բաղ ձայ | մի ա նալ | ըս տեղ ծո զին | հեա .  
 ա հա | ա սանկ | ջեր մե ունդ | հո գին | նը ման |  
 է | հը բեշ տա կի , որ | մեղ քէ | և | աշ խար հէ |  
 թե թե նա լով | կը վե բա նայ | հո գուլ , ու |  
 աս տուա ծա փայլ | ե բա նե լի | կ'ըլլայ : Ուս  
 տի | ջեր մե ունդ | մար դը | ա մեն | ան դամ |  
 միա քը | պի տի | բե բէ | ըս տեղ ծո զին | բա  
 ըի քըն | ու | սիր տը | բոր բո քէ | աս տուա ծայ  
 ին | սի բով | և | ջեր մե ուն դու թեամբ . ինչ  
 պէս | որ | սուր բե ըը | կ'ը նէ ին :

Պէն ջերմեոանդն ասէ եզիր ,  
 ջերմ աղօթքով տաճար մըտիր .  
 մի ծուլանար հոգևորին ,  
 թէ չէ կ'ըլլաս զիւաց բաթին :

Ռ . ո . ո .

Ռար բի | եր բայ ե ցե բէն | կը նը շա նա  
կէ | վար դա պեա | կամ ու սու ցիչ . աս | մրա  
քով | ա բա բա ցիք | ալ | ոար բի | ա նուն | կու  
տան | աս սու ծոյ : եր բոր | քը բիս տոս | յա  
բեաւ | ու | Մա բի ամ | մագ դա զե նա ցւոյն |  
ե բե ցաւ , մէ կէն | բաբ բու նի | կան չեց , որ |  
նոյն | բա նը | կը նը շա նա կէ . իսկ | ա ու  
քեալ նե բը | ինչ որ | պի տի | հար ցը նէ ին |  
Ֆրիս տո սի , և | ինչ | նե զու թիւն | որ | ու նե  
նայ ին | ոար բի | կը կան չէ ին : Այս պէս | ա  
մեն | բրիս տո նեայ | ինչ | նե զու թիւն | որ | ու  
նե նայ . պէտք է | եր կնա ւոր | վար դա պե  
տին | օգ նու թիւ նըն | ու | շը նորհ քը | խըն  
զրէ , որ | ա զա տի | փոր ձու թե նէ :

Ռան քեզ խրատէ խընդրէ ոարբին ,

լըսէ ըզձայն վարդապետին .

աամիկներէն հեռու փախիր ,

զիանոց ծերոց միշտ ունկըն դիր :

Ս . ս . ս .

Սէ բըն | է | ա ու քի նու թիւն | սի բուն |  
և | գե զե ցիկ , ո բով կը սի բենք | զաս տուած |  
իբ | ան հուն | բա բու թեա նը | հա մար , և | ըն  
կեր նիս | կը սի բենք | աստուծոյ | սի բոյն | հա  
մար . ա պա | աս տուա ծա պաշտ | մար դը |  
պէտք է | նախ | ա մեն | բա նէն | ա ուջ | և | ա

մեն | բա նէն | վեր | իւր | ըս տեղ ծո զը | սի բէ |  
 և | ա նոր | սի բոյն | հա մար | մեղ քէ | վախ չի |  
 ու | բա բէ գոր ծու թեան | հե տե լի . նա և |  
 պի տի | սի բէ | ըն կե բը | և | ա զէ կու թիւ նը |  
 կա մե նայ , ինչ պէս | որ | ի բեն | հա մար | կը  
 կա մե նայ . և | իւր | բա բեա ցը | վը բայ | ինչ  
 պէս | որ | կ'ու բա խա նայ , պի տի | ու բա խա  
 նայ | ըն կե բին | բա բեա ցը | վը բայ . ա հա |  
 այս | է | օ բէնք | աս տուած սի բու թեան | և |  
 եղ բայր սի բու թեան :

Սէն սիրտդ ասէ սիրով վերկէին  
 միշտ բորբոքէ նըման բոցին .  
 չըլլայ թէ սէր սուտ աշխարհին ,  
 միտնէ այրէ սիրտդ ու հոգին :

Վ . Վ . Վ .

Վախ ճա նըն | է | պատ ճառ | ամեն | գործ  
 քի , որ | կ'ը սուի | վախ ճա նա կան | պատ  
 ճառ . զի | ա մեն | բան | մէկ | վախ ճա նի | հա  
 մար | կ'ըլ լայ , և | ա ոանց | վախ ճա նի | բան  
 մը | չըլ լար | աշ խար հիս | վը բայ . ուս տի |  
 նիւ թա կան | բա նե բը | և զան | մար դուս |  
 հա մար . բոյ սե բուն , հան քե բուն , և | ան  
 ա սուն նե բուն | վախ ճա նը | մար դըս | է .  
 իսկ | մար դուս | վախ ճա նը | աս տուած | մի  
 այն | է . զի | մար դըն | ու | հը բեչ տա կըն |  
 աս տուած | ի բեն | հա մար | ըս տեղ ծեց , որ |  
 զին քը | ճանչ նան , սի բեն | և | պաշ տեն , ու |  
 իւր | վա ոա ցը | ար ժա նի | ըլ լան : Ս . պա |

ո բուն | վախ ճան նըն | որ | բա ըի | է , և | բա  
ըի | վախ ճա նի | հա մար | կ'աչ խա աի , ա  
նոր | վեր ջըն | ալ | բարի | կ'ըլ լայ :

վեմն ասէ թէ վախճանդ ըլլայ ,

աստուած միայն ալ բան չըլլայ .

առաքինեաց բըռնէ ճամբայ , **ամբարձուց** — **չովցու**  
հարկաւ վերջըդ բարի կ'ըլլայ **միցոցցոմսեկը** **կուռչ**

Տ . տ . ո .

որով,

Տօն | կամ | տօ նա խըմբու թիւն | կ'ըլ լայ |  
տէ բու նա կան | օ բե բուն | և | սուր բե բուն |  
կա տար մա նը | հա մար . զի | ե կե զե ցին |  
զը բեր | է | որ | ա մեն | քրիս տօ նեայ | տօն | օ  
ըր | ե կե զե ցին | եր թայ | պա տա բազ | տես  
նէ , ու | փա ու աւո ըէ | զաս տու ած , և | հո  
զեւո բա պէս | ու բա խա նայ | նոյն | օ բուան |  
հան զի սին | հա մար , խըն դրե լով | ըս տեզ  
ծո զէն , որ | շը նորհք | աայ | ի բեն | ու | զօ բա  
ցը նէ . որ պէս | զի | սուր բե բուն | նը ման |  
յազ թէ | մար մնոյն | և | սա տա նայ ի , ու |  
ա ու քի նա կան | վար քով | յա շի տե նա  
կան | տօ նա խըմբու թեան | ար ժա նի | ըլ  
լայ , ուր | յա շի տեան | փա ու աւո ըէ | զաս  
տուած :

Տիւնըն ասէ թէ տէր ունիս ,

տիրող տերանց տիեզերիս .

պատուիրանէն չըխտտորիս ,

սըրբոց դասէն դուրս չըվարուիս ,

Բ . Բ . Բ .

Բե նա տես | աս տուա ծա տես | ք սեւ | է .  
դի Յա կոր | նա հա պետ | եր բոր | տե սաւ | հը  
րեշ տա կը , որ աս տու ծոյ | կող մա նէ | հե  
տը | խօ սե ցաւ , իս բոյ էլ | կամ | րե նա  
տես | ք սուե ցաւ . իսկ | քրիս տո նեայ նե բը |  
նոր | իս բոյ էլ | կո չուե ցան , որ | է | նոր | րե  
նա տես | կամ | աս տուա ծա տես : Բայց | աս  
տուա ծա տե սու թեան | փա փա քող | մար  
դը | պի տի | սուրբ | սիրտ | ու նե նայ , հո դե  
ւօ բին | մօտ | քլլայ , խո նարհ , հը նա զանդ .  
և | խա զա զա սէր . ի բըր | թէ | սիր տըն | քլ  
լայ | ար քայ ու թիւն ' աս տու ծոյ | սի բո վը |  
վա ուուած . ա նանկ | հո դին | աս տուած ա  
տես | է | թէ | հոս | և | թէ | եր կին . քը :

Բէն խըրատ տայ խոնարհ եղիր ,  
բարեպաշտօն հըլու ընտիր .  
անճառ լուսոյն երանական ,  
բարի գործով բլաս արժան :

Յ . Գ . Գ .

Յան կա կան | կա բո զու թեամբ | մար դըս |  
կը բաղ ձայ | բա բույն , և | ցաս մեա կան | կա  
բո զու թեամբ | կը փախ չի | չա բէն . բայց |  
շատ | ան դամ | քղ գայ ու թիւ նը | խա բուե  
լով բա բին | կը թո զու | չա բին | կը հե տե  
ւի , ցան կա նա լով | ան կարգ | բա նե բու .  
ուս տի | ա ուա քի նի | մար դը | պար տա կան |

է | որ | ցան կա կան | կա բո դու թիւ նը | չա  
 փի | մէջ | պա հէ . ու | չար | ցան կու թեան | չը  
 հն տեւի , բա բի | բա նե բու | ցան կայ . նոյն  
 պէս | պէտք է | կա նո նով | վա բէ | ցաա մնա  
 կան | կա բո դու թիւ նըն | ալ , որ | ոչ | յան  
 դու զըն | հա մար ձակ | ըլլայ | եւ | ոչ | վախ  
 կտա | վիտ քրո գի . քա ջու թեամբ | դէմ | կե  
 նայ | չա բին , և | հար կաւոր | տե զը | ա բի ու  
 թիւն | ը նէ :

Յոն ցուցանէ քեզ այլ խըրատ ,  
 ցանկականին խըլէ արմատ .  
 զցասմընականն 'ի կարգ պահէ ,  
 առարինի ըլլաա քաջ մարդ :

ի . ւ . . .

իլու ծու թիւ նըն | է | հիււան դու թիւն | մար  
 մնաւոր | և | հո գեււոր . մար մնաւոր | հիււան  
 դու թիւն | կը պատ ճառի | եր բոր | ներ սի |  
 հիւ թե բը | կ'այ լայլին , կամ | ջեր մու թիւ նը |  
 կ'աւել նայ | և | կամ | ցըր տու թիւ նը , կամ |  
 չո բու թիւ նը , և | կամ | թա ցու թիւ նը . թէ  
 որ | դե զով | չը լաւ նայ , մահ | կը պատ ճա  
 ուի , ու | մար մի նը | հող | կը դառ նայ | ուս  
 կից | որ | ըս տեղ ծուած է : իսկ | հո գեււոր | հի  
 ւան դու թիւ նըն | է | զբր կու մըն | չը նոր  
 հաց , տը կա բու թիւն | բը նա կան | կա բո  
 դու թեանց , տը դի տու թիւն | մը տաց , մի  
 ըո բու թիւն | կա մաց , և | ան կար գու թիւն |  
 ըզ գայ ա կան | բաղ ձա նայ : Ա հա | աս | հի

ւան դու թիւ նը | պա տա հե ցաւ | մեղ՝ Ա դա  
մինն | մեղ քո վը , և | աս | հի ւան դու թե նէն |  
ա զատ | կ'ըլ լանք | թէ որ | բա ըի | ապ  
րինք :

Իննըն կ'ըսէ՝ հողւով հիւանդ  
տգիտութիւն կ'ընէ ըզմարդ .  
կապէ գըլխիդ զիտութեան վարդ ,  
որ երևնաս պըսակազարդ :

Փ . Գ . Գ .

Փըր կու թիւն | ե զաւ | աշ խար հի՛ մի այն |  
Քը ըիս տո սի | ան գին | ա բեամբ , որ | թա  
փեց | մեղ | փրր կե լու | հա մար . թէ պէս |  
աս տուած | կա ըող | էր | ու ըիշ | կեր պով |  
մեղ | փրր կե լու | սա տա նայ ին | ձեռ քէն .  
բայց | վասն | ան չափ | սի ըոյն | Քրիս տոս | աշ  
խարհ | ե կաւ | մար դա ցաւ | չար չա բուե  
ցաւ | և | մե ուա . հո գին | մար մի նէն | ե լա  
ծին պէս | գը նայ | լիմ՝ պոս | ա զա տեց | մար  
դա ըէ նե բուն | և | ար դար նե բուն | հո գին .  
բա ցաւ | ար քայ ու թեան | դու ուըն | որ | ա  
մեն | քրիս տո նեայ | փրր կու թեան | հա սաւ |  
ու | եր կնայ ին | վառ քե բուն | ար ժա նի | ե  
զաւ | Քրիս տո սի | փրր կա գոր ծու թեամբ :

Փիւրըն փառաց քարող կուտայ ,  
վերին փառաց միշտ փախաբեա .  
բարի գործքով ով որ ջանայ ,  
կըրկին փառաց արժան կ'ըլլայ :



Ք . ք . ք .

Քաղաքա վա րու թիւ նրն | է | զե զե ցիկ |  
ու սու մրն | մար դոյ , որ | կը սոր վե ցը նէ |  
զին քը | ճանչ նալ , մե ծե բուն | պա տիւ |  
տալ , և | մար դա վա րու թեամբ | շար ժիլ :  
Քաղաքա վար | մար դուն | ա մեն | դործ քրն |  
ու | բանը | շը նորհ քով | պի տի | ըլ լայ . խօս  
քը | ա նոյշ , ճայ նը | խո նարհ | և | շար ժուած  
քը | շը նոր հա լի . ա նանկ | պի տի | վա րուի |  
տա նը | մէջ | ինչ պէս | որ | կը վա րուի | դուր  
սը . միտ քը | պի տի | զը նէ | որ | ա մեն | տեղ |  
ան թան . վեր ջա պէս | նը ման | քե բո բէ ից |  
պի տի | սի բե լի | ըլ լայ | ա ս տու ծոյ | և | մար  
դու | քաղ ցըր | կե նա կցու թեամբ :

Քէն քարողէ վերջին խրրատ ,  
ընտիր եղիր կըրթըւած մարդ .  
քաղաքավար և բարեպաշտ ,  
գիտուն խոհեմ և շնորհազարդ :

Ե . և . ե .

Եւ բո պա | աշ խար հիս | շորս | մա սին | պըղ  
տի կըն | է , բայց | շատ | մեծ | է | խել քով | գի  
տու թեամբ | և | բաղ մա մար դու թեամբ .  
իր ի մնա տուն նե ըր | բո լոր | աշ խարհ | կը  
լու սա լո բեն , և | իր | հը զօր | թա գա լոր նե  
ըր | աշ խար հի | կա նոն | կու տան : Սա կայն |

ա ռաջ | շատ | տը գէտ | է ին | եւ ըս պա ցիք ,  
 ա մե նեւ լին | բան | շիյ տէ ին . եր բոր | ա ըս  
 բա ցիք | եւ ըս պա | ան ցան | ու | տի բե ցին | ըս  
 պա նի այ ի՝ . քիչ | քիչ | ու սուս | սոր վե ցու  
 ցին | եւ ըս պա ցուց , որ | ըս կը սան | ծաղ  
 կիլ | ու | ի մաս տուն | զըր քե ըսվ | լը ցին | է  
 բենց | աշ խար հը . եւ ըս պա | տաս նը վեց |  
 աշ խարհ | կը բաթ նուի :

Եւն է կիսատ եչէ հնարած ,  
 այլ խըրատ տայ ուսանողաց ,  
 եթէ կիսատ դուլ միտք ունիս ,  
 ջանքով ըլլաս աղէկ սորված :

0 . 0 . 0 .

Օ ըէն քըն | է | կա նոն | աշ խար հի , և | ըս  
 ըր | աշ խարհ | օ ըէն քով | կը կա սա վա ըուի .  
 ա նոր | հա մար | եր բոր | մար դըն | ըս տեղ  
 ծուե ցաւ , սա տու ած | ի բեն | բը նա կան | օ  
 ըէնք | զը բաւ | խըղճ մը տան քը , որ | ա նոր |  
 ըու սով | շի տակ | եր թայ | ան սը խալ . ես  
 քը | տըւաւ | մով սի սա կան | օ ըէն քըն | ու  
 պա տուի ըս նը , որ | նոյն | բը նա կան | օ ըէն  
 քին | վը ըայ | հաս տա տաթ | է . նոյն պէս | տը  
 ւաւ | Ֆը բիս տոս | աւե տա ըս նա կան | օ ըէն  
 քը՝ ո ըով | օ բի նա պահք | վըր կու թեան | կը  
 հաս նին | ու | կը պը սա կուին | ա ըար չէն .  
 իսկ | օ բի նա զանցը | կը դա տա պար տին .  
 զի Ֆրիս տո սի | օ ըէն քը | հաս տա տու թիւն |  
 է | բը նա կան | և | զը ըս կան | օ բի նաց :

Յն օրէնք տայ օրուան վրայ ,  
որ փուճ բանով կորած չըլլայ .  
օրինապահ տվ որ ըլլայ ,  
օրէնքն իրեն շքնօրհր կուտայ :

Ֆ . ֆ . ֆ .

Ֆի լո սո ֆոս | կը թարգ մա նի | սի բող |  
ի մաս տու թեան . բայց | ճըչ մա ըիա | ի  
մաս տա սէ բը | պի տի | ու նե նայ | ա զէկ |  
վարք | և | սէր | ա ու քի նու թեան , կա տա  
բե լու թեան , և | ա տուած պաշ տու թեան .  
ա նանկ | որ | ի բըր | ե բա նեալ | հո զի | ապ  
բի | աչ խար հիս | վը բայ , ա մե նուն | սի բե  
լի , ազ գին | պար ծանք | և | աջ | հա ճե լի :  
Ս,յս պի սի | լա ու թեանց | ե տեւ է | ման կու  
թե նէն | պէտք է | հե տեւ լիլ , բարի | սո վո բու  
թեանց | փափա քող | ըլ լալ , և | ի մաս տա  
սի բու թեամբ | լու սա ու բիլ , ու | մին չև | ծե  
բու թիւն | բա ըիա նուն | ըլ լալ , ա պա | ա  
տուա ծայ ին | ան ճա ու լի | փա ուայ | ար ժա  
նի | ըլ լալ :

Ֆէն ֆիլոսոֆ ասէ եղիր ,  
ճանչիր զաշխարհ մի քուն լինիր .  
ըստեղծողին գործոց նայէ ,  
անճառելեաց միշտ փափարէ .





## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԻՆԻ ՕՐԻՆԱԿԱՅ

— — — — —  
Պ . ԻՆՏԵՆՍԻՎՆԻ :

Ի իննեսիրոս բռնաւորը օր մը վաճառաւորն ելաւ , տեսաւ որ ամեն վաճառական տեսակ տեսակ ապրանք կը ծախէ : Հոն պատահեցաւ փիլիսոփայի մը , հարցուց թէ հապա դուն ինչ կը ծախես : Ան ալ պատասխանեց եթէ ես իմաստութիւն կը ծախեմ :

Կրկնեց Գիտնեսիոս . քանի՞ով կը ծախես : Ըստու փխլխտօփայն թէ վեցհարիւր դահեկանի : Մէկէն հանեց վճարեց : Բսաւ փխլխտօփայն . Ա.Ֆ.Ն գործար խոհեճո-Ռեաճի գործէ , ու Բշար վերջը հրաժէ . ահա աս է իմ ապրանքս : Աս խօսքս մեծ բան շերենալով Գիտնեսիոսին՝ սկսաւ սօփորաբար բերան առնել , և նեղանալով ամեն անգամ՝ ըսել :

Եղաւ որ իրեն իշխանները թշնամանալով կաշառք տուին իրեն սափրիչին , որ երբոր զինքն ածիլէ , վարպետութեամբ վիզը կըտրելով սպաննէ բռնաւորը : Երբոր գնաց իրեն քով սափրիչը , Գիտնեսիոս առանց բանը զխանալու բարձր ձայնով կանչեց . Ա.Ֆ.Ն գործար խոհեճո-Ռեաճի գործէ ու Բշար վերջը հրաժէ : Սափրիչը կարծելով թէ Գիտնեսիոս բանը իմացեր է՝ ինկաւ ոտքը թողութիւն լանդրեց որ կեանքը շնորհէ իրեն : Ան ատենը Գիտնեսիոս իմացաւ իմաստութեան գինը թէ ինչ թանկագին մեծ բան է եղեր : Երանի անոր որ ունի ու զխտէ յարգը իմաստութեան . զի պատճառ եղաւ իրեն ազատութեանը :

Գանձ իմաստութեան դանձ անկըչոելի ,  
պարզ և տէրունեան ընծայեալ բանի .  
զոր ոչ երկրաբարչ միտք մարմնասիրի ,  
և ոչ շքնչաւորն առնու ՚ի յարգի :

Քոյդ մըտաց տըւաւ այն դանձ տէրունի ,  
քեզ հաւատացաւ յարգել անթերի .  
ճոխասցի ՚ի քոյդ դանձարան սըրտի ,  
ճոխանալ այնու միտք քո և հողի :

Բ • Աշխատասիրութիւն :

Օգոստոս կայսրը թշնամեաց գէմ մեծ յաղթութիւն կատարելէն ետև փառաւորապէս Հռոմ դարձաւ : կայսեր գէմն ելաւ հռոմայեցի մը ունելով ձեռքը կաշաղակ թռչուն, որուն սորվեցուցեր էր աս խօսքս խօսելու . Ողջո՞ւնէ՞մ զքեզ կայսրդ յաղբող վեհաժամ : կայսրը աս բանս թռչունէն լսելով զմայլեցաւ, ու հրամայեց որ ծանր գնով գնեն :

Եւքը այսպիսի խօսող թռչուններուն սէր ձգելով քանի մը հատ գնեց : Ռամիկ արուեստաւոր մը աս բանս լսելով ինքն ալ առաւ կաշաղակ մը . ու սկսաւ վերի խօսքը սորվեցընել մեծ գթուարութեամբ, որ ետքը ծախէ կայսեր : Բայց որովհետև թռչունը գթուար կը սորվէր՝ տէրը շատ անգամ նեղանալով կը կանչէր . Ա՛խհո՞ս աշխատանացս որ կորոսի :

Վերջապէս արուեստաւորը սորվեցուց թռչունին ինչպէս որ պէտք էր, որ ետքի խօսքն ալ միատեղ սորվեցաւ : Օր մը կայսրը երբոր կ'անցնէր աս արուեստաւորին դրանն առջևէն, թռչունը նոր սորված ըլլալով պատուհանէն կը կանչէր . Ողջո՞ւնէ՞մ զքեզ կայսրդ յաղբող վեհաժամ : Վեր նայեցաւ կայսրը ու ըսաւ . ես շատ ունիմ այդպիսի ողջոյն տըւող թռչուններ : կաշաղակն ետևէն մէկալ խօսքն ըսաւ . Ա՛խհո՞ս աշխատանացս որ կորոսի :

Աս բանս այնչափ զարմացուց կայսրն որ հրա-  
մայեց աւելի ծանր դնուի գնեւ ան թռչունը .  
ան ժամանակն ըսաւ արուեստաւորը , թէ յի-  
րաւի շատ մեծ բան է եղեր աշխատանքն որ  
բնաւ չկորսուիր :

Այսպէս աննահանջ ջանք առաքինի ,  
յաղթել բրոնութեանց գիտէ աշխարհի .  
թէ զանխօսն առնէ խօսող ցանկալի ,  
քանի թէ խօսունդ 'ի նոյն կրթեսցի :

Մի յետս ընկըրկիր 'ի գործ պիտանին ,  
որչափ չարատանջ իցէ առնելին .  
զի յոյսն անուշէ զամեն դժուարին ,  
չքննաղ չափակցեալ գործս լը վախճանին :

Գ . Հնարագիտութիւն :

Երևելի իշխան մը լսեր էր որ աստղա-  
բաշխ մը միշտ կը պարծենայ թէ իմ արուես-  
տովս լաւ գիտեմ չեղած բաները գուշա-  
կել : Իշխանը հրաման խրկեց անոր որ գու-  
շակելով իւր չորս հարցմունքին պատասխան  
տայ : Առաջինն էր , Ո՞ր է աշտարհէս մէջ  
դեշտ . երկրորդ՝ Ի՞նչ արժէս ո՞րչափ է . երրորդ՝  
Հի՞նչ էս Ի՞նչ էլ հարածէ՞ . չորրորդ՝ Ես Ի՞նչ բանի  
էլ հաստատման : Աստղաբաշխը զարմանալով այս-  
պիսի հարցմունքի վրայ թողութիւն խնդրեց  
իշխանէն , զի այսպիսի բան միայն անկա-  
րող է գիտնալ : Բայց իշխանը բարկանալով  
սպառնացաւ որ կամ գտիր աստղաբաշխա-



կան արուեստով պատասխան տուր, և կամ  
կը պատուհասեմ գրեղ չարաչար:

Երբոր աստղաբաշխը կը մտածէր տարա-  
կուսած՝ իւր ջաղացպանը ներս կը մտնէ ու  
հարցընելով պատճառը կ'իմանայ: Մի տա-  
րակուսիր կ'ըսէ. առ հարցմունքդ բան չէ.  
ինձի հրաման տուր, հազուատդ հազնիմ,  
ես երթամ պատասխանը տամ: Աստղաբաշ-  
խը ուրախանալով կը հանէ հազուատն ա-  
նոր կը հազցընէ ու կը խրկէ իշխանին: Ջա-  
ղացպանը աստղաբաշխին հազուատովն ազա-  
տութեամբ կ'երթայ շիտակ իշխանին խու-  
ցը կը մտնէ ողջունելով: Իշխանը մէկէն կը  
հարցընէ թէ պատրաստեցիր հարցմունքիս  
պատասխանը: Հրամեբես ըսաւ: Ուրեմն  
ըսէ ինձի՛ կրկնեց իշխանը, ո՛ւր է աշխար-  
հիս մէջ տեղը. պատասխանեց ջաղացպա-  
նը. ոչ միայն պիտի ըսեմ, այլ և պիտի ցուցը-  
նեմ քեզի, թէ որ կամենաս հետս դալ  
դաշտը: Իշխանը հաճեցաւ, ելան զնացին  
դաշտը. ջաղացպանը քիչ մը տեղ ոտքով  
չափեց ու կեցաւ. դարձաւ իշխանին ըսաւ՝  
թէ ահա հոս է աշխարհիս մէջ տեղը. եթէ  
ինձի չհաւատաս՝ չափել տուր աւելի վար-  
պետ երկրաչափի ու կ'իմանաս որ շիտակ է  
խօսքս:

Իշխանը զարմանալով անոր վարպետունքը  
վրայ ըսաւ՝ թէ աւելի դիւրին է քեզի հաւա-  
տալ, քան թէ կրկին չափել տալ. բայց ըսէ  
ինձի՛ իմ արժէքս ո՛րչափ է: Պատասխանեց

Չաղացականը . մեր փրկիչը երեսուն դահեկանի ծախուեցաւ . ապա դուն պէտք է որ արժեա մէկ դահեկան պակաս . կարծեմ թէ աս գինը անպատուութիւն չբերեր քեզի : Ըսաւ իշխանը՝ աս ալ թող անցնի . բսէ՛ ես հիմա ինչ կը մտածեմ : Պատասխանեց Չաղացականը . դուն քու շահդ ու եկամուտդ կը մտածես : Յիրաւի է , ըսաւ իշխանը . բայց զխտցիր նայիմ ես ինչ բանի կը հաւատամ : Պատասխանեց , թէ դուն կը հաւատաս թէ ես աստղաբաշխն եմ . բայց ես Չաղացական եմ , որ անոր տեղն եկայ քեզ պատասխանեցի : Իշխանը շատ զարմանալով անոր հնարազխտութիւնը վրայ գովեց մեծապէս թէ շատ ազէկ կատարեցիր պաշտօնդ ու ազատեցիր աստղաբաշխը . ուստի քու հնարազխտութիւնդ անկէ շատ վեր կը համարիմ :

Այս վրսեմափայլ նըշոյլ բընածին ,  
 վառ ՚ի վառ պահեալ կայ յիւր կանթեզին .  
 զի ճարակ լուսոյ իմացականին ,  
 է հանճար իմաստ ըստ տեսականին :

Եթէ չէ վառեալ քոյդ ճրրազ ներքին ,  
 փայլուն առարկայք քեզ խաւար լինին .  
 զինչ շահ այլք թէ գրեզ գիտուն համարին ,  
 երբ միտքդ է կապեալ ՚ի մութ խաւարին :

Դ . ԽՐԱՊԱԲԱՆՈՒԼԻՆ :

Աւաղակները երբոր ճամբայն կը սպասէ-  
 ին անցնողները կողոպտելու համար, տե-  
 սան որ անկէ կրօնաւոր մը կ'անցնէր սուրբ  
 ֆրանչիսկոսի կարգէն. կարծելով թէ պա-  
 հաժ ստակ ունի, մէկէն վրան թափեցան,  
 ու սուրը սրտին դրին կը սպառնային որ հանէ  
 ստակը: Իսկ բարի կրօնաւորն աներկիւզ և  
 զուարթ դէմքով սկսաւ այսպէս ըսել ա-  
 նոնց. Պարոններ, կ'երևնայ թէ շատ ժամա-  
 նակ է որ հեռացեր էք աշխարհէ և մարդ-  
 կային կենակցութիւն. որովհետև մուցեր էք  
 որ ֆրանչիսկեան կրօնաւորները չեն կըր-  
 նար վրանին ստակ պահելու. ուստի ստակ  
 չունիմ որ տամ. անոր տեղը ձեզի խրատ մը  
 խօսիմ, որով կարենաք ձեր ցանկասէր սիր-  
 տը հանդէսընելու: Աւաղակները զինքն ա-  
 նանկ հանգիստ և զուարթ տեսնելով հա-  
 ճեցան որ մտիկ ընեն: Աւստի այսպէս  
 սկսաւ խրատը. Եղբայրներ, կը տեսնեմ  
 որ ձեր կենցաղավարութիւնն ու Յժի կենցա-  
 ղավարութիւնը շատ նման են իրարու. մ'ս զի  
 նա աղքատ մեռաւ, դուք ալ աղքատ պի-  
 տի մեռնիք. նա ամենուն ատելի եղաւ ու  
 հալածուեցաւ, դուք ալ ամենուն ատելի էք  
 ու կը հալածուիք. նա մուրեցուցիչ համա-  
 բուեցաւ, դուք գող աւաղակ համարուած էք.  
 նա տեղ մը չունեցաւ զլուխը դնելու, դուք

ալ չունիք ապահով բնակարան մը . մութն է ձեր լոյսը , դայլերն են ձեր ընկերները և թռչուններն են ձեր երգիչները . նա մէկ քաղբէն մէկալը կը հալածուէր , դուք մէկ վտանգէն կ'ազատիք մէկալը կ'իյնաք , ու հովին ձայնը և ծառերուն տերեւները ձեզ կը դողացընեն : Նա ընկաւ թշնամեաց ձեռքը մէկ աշկերտին մատնութիւնը , դուք ալ պիտի մատնուիք ձեր մէկ ընկերին ձեռքովը . զնա Պիղատոսի առաջը հանեցին , դուք ալ օր մը պիտի ելլէք դառն դատաւորի մը առջև . նա դատապարտեցաւ 'ի մահ խաչի , դուք ալ պիտի կախուիք անարգ կախաղանէն . նա իջաւ դժոխքը , դուք ալ պիտի իջնաք : Սակայն երկու մեծ տարբերութիւն կայ անոր ու ձեր մէջ . զի նա սուտ վկայներէն յանիրաւի դատապարտեցաւ , իսկ դուք պիտի դատապարտիք անսուտ վկայներէն , և արդարութեամբ պիտի սպաննուիք ձեր յատուկ շարագործութե համար : Նա դժոխքէն ելաւ յաղթանակով , դուք հոն պիտի մնաք յաւիտեան :

Աս խրատս անչափ շարժեց աւազակներուն սիրան օր՝ ինկան ոտքը զըջացան . և առին կրօնաւորն իրեն վանքը տարին ու անկէ ետև թողուցին աւազակութիւնը , բարեպաշտութեան հետևեցան բարի խրատով սրբակաց կրօնաւորին :

Ազգու ազգարար ձայն խրրատատուին ,  
 ելբ կից է դործոց խր բան խրրատին .

դի սին բանն ասի շարժումն օղային ,  
ոչ պատճառ բարեաց ոչ շարժիչ սրբաին :  
Դու մատո զքո սիրտ առ ձայն ազդողին ,  
ամբարեա 'ի նա ըզբարի բարին .  
այնու մեծանաս այն է գանձ ներքին ,  
զոր օտարք անախ կողոպտել չունին :

Է . Աղագրութիւն :

Խելացի մարդ մը միշտ կը մտածէր աշխարհիս ունայնութեանը վրան ու կը զարմանար թէ անգահ մարդիկ ինչպէս չեն կըշտանար՝ որ իրենց ստեղծութեայ ժամանակն հանգիստ անցընեն : Աս բարի խորհուրդներով այնչափ սիրտը շարժեցաւ , որ ամեն ունեցած բարին ազբասներուն բաժնեց , ու լեռը ճգնաւորի նման սրբութեամբ կ'ապրէր : Երբոր ձմեռը մօտեցաւ կը նայէր որ լեռներուն մէջ ծակ փապար մը գտնէ ու հոն բնակի : Օր մը գտաւ անանկ տեղ մը բնակարանի համար . ելաւ քարերուն վրայէն մէջը մտաւ ու շատ աղէկ տեղ երեցաւ իրեն . բայց երբոր ներսը նայեցաւ՝ տեսաւ որ կտոր մը ոսկի հոն ձգած է , անանկ վախ եկաւ իրեն ան ոսկիէն՝ որ կարծէր թէ մահը տեսաւ :

Ուստի ձգեց ելաւ անկէց , սկսաւ փախչիլ . երբոր ասանկ վազելով կ'անցնէր լեռներ մէջէն , աւազակները տեսան՝ վրան վազեցին բռնեցին , հարցուցին թէ ինչու կը

փախչիս, ի՛նչ կայ : Պատասխան տուաւ թէ մահը տեսայ, անկէց կը փախչիմ : Զարմանալով սկսան ստիպել որ շխտակն ըսէ, ի՛նչ բան տեսար որ կը փախչիս : Ան ատենը իրենց հասկըցուց թէ իմ մահս ոսկին է, ոսկի տեսայ այրին մէջ, վախցայ կը փախչիմ :

Աւազակները վրան խնտալով թողուցին, որ փախաւ գնաց. իրենք իրեք հողի ելան գնացին դտան ոսկին ու սկսան ուրախանալ. ետքը խորհուրդ ըրին հանեցին ստակ տըւին իրենց մէկ ընկերին քաղաք խրկեցին որ զինի և ուտելիք բերէ իրենց : Աս մարդը կ'երթայ քաղաք և ամեն բան գնելէն ետե կը մտածէ որ բոլոր ոսկին ինքն յափշտակէ. ուստի թոյն առաւ զինիին մէջ լեցուց, որ ընկերները խմեն ու մեռնին : Այս ողորմելին երբոր մտտեցաւ այրին քով ընկերներն ալ մտածեցին որ զինքն սպաննեն, ու ոսկին երկուսին մնայ. աս խորհրդով ելան դուրս առին ձեռքէն բաներն ու զարկին սպաննեցին, ու իրենք նստան ուտել խմելու. բայց որովհետեւ դեղած էր զինին, անոնք ալ հոն մեռան :

Իսկ բարեաէր ճգնաւորը ուրիշ յարմար տեղ չգտնելով՝ մտածեց թէ աւազակները ոսկին անկէ առեր տարեր են, երթայ հոն բնակի. երբոր կը մտտենայ, կը տեսնէ որ մէկ աւազակը զարկեր սպաններ են արիւնոտ պառկած. մէկալ երկուսը գեղով սեցած մէկզի շրջուած են, իմացաւ թէ ոսկին ի՛նչ

մահ բերեր էր իրենց . ուստի սկսաւ աւելի  
ուժով վազել հեռանալ ան մահարեր տեղէն :  
Գնաց ընկաւ երեսի վրայ շնորհակալ եղաւ  
աստուծոյ , որ զինքն ազատեր էր ան շար  
մահէն , և բոլոր կենացը մէջ ոսկի շուղեց  
տեսնելու , իբր ճշմարիտ մահ սեպելով հո-  
գևոր և մարմնաւոր :

Այս ոսկեսիրաց կըշխու է բաժին ,  
մարմին և հոգի 'ի նոյն մաշողին .  
այս սուտ բերկրութիւն մտաց անմտին ,  
ծախիչ է կենաց թոյն մահաբերին :  
Տես զիարդ ազատ սիրտ առաքինին ,  
ազատ 'ի թունից հրրճուի , յիւր հոգին .  
թող զանբան ոսկին առիթ մահածին ,  
հետեւեա բարւոյն նըման երջանկին :

Մ. Հոգեւորութիւն :

Թէոզոս թաղաւորը հանդիսաւոր խաղ  
մը ուղեց ընելու , ուր ժողովեցան ամեն մե-  
ծամեծ իշխանները : Խաղէն առաջ երկու  
իշխան ուղեցին որ երթան դէպ 'ի անտա-  
ռը քալեն ու դառնան գան . բայց ասոնք  
մանկութենէ բարի խրատներով կրթուած  
ըլլալով սկսան պիտանի և հոգևոր բանե-  
րու վրայ խօսիլ բոլոր ճամբայն . այնչափ  
անոյշ եկաւ իրենց աս խօսակցութիւնն որ  
մոռցան խաղը , և շատ տեղ անտառին մէջ  
կը քալեն ու կը հեռանան : Նայիս անտա-  
ռին մէկ կողմը ճգնաւորի խուց մը կը տես-



նեն, կ'երթան որ օրհնութիւնն առնեն. կը նային որ ներսը մարդ չկայ, միայն վայտէ ամաններ ու խարաղներ կը տեսնեն հօն. կը զարմանան թէ ասանկ ահռելի տեղ մարդ կրնայ կենալու, ինչպէս մարդ է եղեր կ'ըսեն հօս բնակողը: Տախտրկին տակը կը գտնեն սուրբ Անտոն ճգնաւորին վարքը. մէկը կը սկսի կարգալ, որչափ աւելի կարգաց՝ այնչափ սիրտը բորբոքեցաւ. քիչ մ'ալ կարգաց ու սկսաւ ակն կանչել:

Վերջապէս սիրտը չղիմացաւ, սկսաւ այսպէս խօսիլ. Ո՛հ աս ինչ կուրութիւն է մեր գործքը, աս ինչպիսի անցաւոր կեանք ունինք ու միայն անցաւորին բոլոր ծախեր ենք. սրչափ վտանգներ սրչափ նեղութիւններ քաշեցինք անցաւոր թագաւորին համար, ունայն անուան և փառաց համար. հապա երկնաւոր թագաւորին, անանց բարեաց և փառաց համար ինչ գործեցինք: Չորս դին կը նայէր, ձեռքերը գլխուն կը զարնէր, աս ինչ խնութիւն է մեր բանը. աշխարհի համար՝ մարմնոյ համար բանի մը չենք խնայեր, հոգւոյ համար ամեն բանի կը խնայենք. արքայութեան համար այ համար ինչ ըրած ունիմք: Գարձաւ ապա ընկերոջն ըսաւ թէ ես այլ պիտի չերթամ՝ քաղաք, ես հօս պիտի մնամ, հօս պիտի գտնեմ իմ հոգիս և իմ յաւիտենական թագաւորութիւնս որ կորուսեր էի: Ընկերն ալ իրեն հետեւելով մնացին հօն. հագան ան խարաղները, նստան ապաշխարեցին իրենց



կեանքը, ինչպէս կը պատմէ սուրբն Օգոստինոս :

Տես զիարդ ազգեալ սրբոյի զիւցաղին,  
անդէն ձըզեցաւ ըզհետ շարժողին .  
եզիտ մեծութիւն աննխլթականին,  
զոր շարժէ աշխարհ ընդ բոլոր գոյին :  
Պատրաստեա ըզմուտ քոյզ ազգարանին,  
հետեիլ բարւոյն ըստ սահմանողին .  
սէր հոգեկանին սիրոյ անմահին  
ձըզեսցէ 'ի վեր սիրտ քո և զհոգին :

Է . Ժամասիրտ-Քիւն :

Նաբոյի քաղաքը սեպուհ իշխան մը կար  
շատ բարեպաշտ և ժամասէր . որ բաց 'ի  
պարտաւորութենէն՝ ամեն կիրակի քարոզի  
կ'երթար, ու երբոր տուն կը գառնար՝ լսած  
քարոզը գործքով կը կատարէր : Աս բարե-  
պաշտ իշխանը մէկ այլազգ գերի մը կ'առնէ,  
և խնամելով լեզու սորվեցընել կուտայ ու  
քովը կը պահէ : Գերին ալ ամեն կիրակի  
իշխանին հետ ժամ կ'երթար . կը նայէր որ  
տէրն ինչ քարոզ որ ժամը կը լսէ, կ'երթայ  
տուն գործքով կը կատարէ . միտքը կը գնէ  
որ երթայ քարոզիչը գտնէ աղաչէ որ առջևի  
կիրակին գերի ազատելու վրայ քարոզ տայ,  
որ տէրը զինքն ալ ազատէ : Քարոզիչը լսե-  
լով գերիին խնդրքը՝ սիրով յանձն առաւ  
կատարելու : Կիրակի եղաւ, նորէն եկեղե-

ցին գնացին քարոզի . բայց քարոզիչը ուրիշ բանի վրայ տուաւ քարոզը . իշխանը տուն գնաց՝ նոյն քարոզին խրատը կատարեց : Գերին կարծելով թէ քարոզիչը մոռցաւ , նորէն գնաց խնդրեց . քարոզիչը՝ միտքս է , ըսաւ , սլիտի տամ՝ ուզած քարոզդ : Բայց հետեւեալ կիրակին ալ չտուաւ նոյն քարոզը , և այսպէս քանի մը կիրակի անցաւ . վերջապէս մէկ կիրակի մը եկեղեցին կ'երթան , քարոզիչը կը սկսի գերի ազատելու վրայ փառաւոր քարոզ մը տալ . գերին ուրախանալով տիրոջը հետ տուն կ'երթայ , նայիս իշխանը կը կանչէ քովը գերին , ազատութեան թուղթը կուտայ իրեն՝ ըսելով թէ ասկէ ետեւ դուն ազատ ես , երբոր կ'ուզես գնա քաղաքդ :

Գերին խնդալով դուրս կ'ելէ , կը վազէ կ'երթայ քարոզչին շնորհակալ ըլլալու , որ պատճառ եղաւ իրեն ազատութեանը . ետքը դարձաւ հարցուց թէ ինչո՞ւ համար առջի կիրակին աս քարոզը չտուիր , ու այնչափ ուշացուցիր : Պատասխանեց թէ ես ինչ քարոզ որ տալու ըլլամ՝ նախ դորձքով կը կատարեմ , ետքը կուտամ . որովհետեւ գերի չէի ազատած՝ նայեցայ որ գերի մը առնեմ՝ ազատեմ , ետքը տամ քարոզը . անոր համար ուշացայ :

Գերին աս բանս որ լսեց՝ այնչափ զարմացաւ ու սիրտը շարժեցաւ որ դարձաւ գնաց իշխանին ոտքն ընկաւ , խնդրեց որ մնայ հոն ու քրիստոնեայ ըլլայ : Ահա այսպէս փափա-

քին հասաւ, և քարողչին ու իշխանին բարեպաշտութեանը հետևելով երևելի բարեպաշտ եղաւ :

Այս պրտուղ բարեաց գործոց պանծալի, այս առարինեաց օրինակ բարի .

ձրգէ զհեռաւորս 'ի դիւտ ճըշմարտի, 'ի լոյս հրաւիրէ զխաւարեալ հողի :

Այս և քեզ 'ի ճահ մանուկ շնորհալի, առարինեաց տիպ 'ի քեզ գրծեսցի . լուսատիպ եղեալ լոյս տուր խաւարի, փառաւորել զհայր գործովք լուսալի :

Ը • Աստուծոյ պաշտութիւնն :

Երևելի անձաբան մը ուղեց խմանալ թէ աշխարհիս վրայ ո՞վ է թշուառ ողորմելի . շատ մտածելէն ետև Աստուծմէ խնդրեց որ իրեն յայանէ : Օր մը ձմեռուան մէջ կ'ելլէ եկեղեցին կ'երթայ . կը տեսնէ որ դրանը քով խեղճ ողորմելի աղքատ մը մերկ կը դողայ . անձաբանն անանկ խեղճութեան մէջն որ կը տեսնէ աղքատը՝ կը մտածէ թէ ահա աս պիտի ըլլայ փնտրուած թշուառս, զի ասկէց աւելի ո՞վ կրնայ ըլլալ ողորմելի : Ուստի մտենալով բարև կուտայ աղքատին՝ թշուառ անուանելով . պատասխան կուտայ աղքատը՝ թէ ես թշուառ չեմ : Զարմանալով աստուածաբանը կ'ըսէ, թէ դուն թշուառ չես՝ հապա ո՞վ է . դուն ինչ մարդ ես որ խեղճու-

Թիւնդ չես ճանչնար : Պատասխան կուտայ  
աղքատը , թէ ես թագաւոր եմ : Գուն թա-  
գաւոր ես կ'ըսէ , քու թագաւորութիւնդ  
մեր տեղ է : Կը պատասխանէ , թէ իմ թա-  
գաւորութիւնս հոգւոյս մէջն է :

Աստուածաբանն աւելի զարմանալով ուրիշ  
խօսք չգտներ հարցրնելու՝ կը դառնայ կ'ըսէ .  
Թէ որ Աստուած վճռէ՝ թէ դուն գժոխքն  
երթաս , չես ըլլար թշուառ : Ամենեկն չէ  
ըսաւ . վասն զի ես միշտ իմ ստեղծողս երկու  
ձեռքովս բռներ եմ աստուածպաշտութեան  
օրէնքով . թէ որ զիս գժոխքը խրկէ , զինքն  
ալ հետս կը տանիմ . ան ատենը գժոխքն ար-  
քայութիւն կ'ըլլայ , ես ալ իմ հոգւոյս թա-  
գաւորութիւնը գանելով ոչ թէ թշուառ ,  
այլ երջանիկ երանելի կ'ըլլամ : Ան ժամա-  
նակն աստուածաբանը աղքատին ոտքն ինկաւ  
ըսաւ , թէ յիրաւի՝ դուն երջանիկ և կատա-  
րեալ ես աստուածպաշտութեամբ . ուրեմն  
աստուածպաշտութիւն չունեցող չարագործ  
մարդն է թշուառ թէ աշխարհիս վրան , և թէ  
'ի հանդերձեալն :

Ահա հիապրանչ գործ աստուածպաշտին ,  
անկիր երանեալ յամեն վիճակին .  
ձեռք ինքնակալաց , զօրք բելիարին ,  
չրզօրեն բերել արկած երջանկին :

Աստուածպաշտութիւն թէ կըրթիս յանձին ,  
յաղթես աշխարհի դրբանց դրժոխքին .  
մարդ անձափայլ հրեշտակ 'ի մարմնի ,  
զերծ յամեն կըրթից ներքին արտաքին :

Ը . Արդարութիւն :

Արիատիգէս աթենայիւն շատ երևելի ըլլալով իրենց տէրութեան մէջ մեծանուն փայլեցաւ թէ խելքով, թէ քաջութեամբ, և թէ արդարութեամբ . մինչև պաշտօնի վրայ ելլելով զլիսաւոր եղաւ ազգին : Բայց ասոր բնութիւնը այնչափ բարեսէր և պարկեշտ էր, որ ամենևին իրեն յատուկ չահը չէր փնտրուեր, այլ միայն ազգին և ժողովրդեան աղէկութեանը համար կ'աշխատէր . ոչ փառասիրութիւն գիտէր, և ոչ անիրաւութիւն . մինչ զի իրեն մականունն զբուեցաւ Արդար Արիատիգէս : Սակայն իւր ընկերներէն նախանձոտներ եղան ու ժողովուրդը ոտք հանեցին որ քչէն զինքը խեցեղրութեամբ . իբր զի խեցիի վրայ գրելով ժողովուրդը կը յայտնէր որ չեն ուզեր զինքը, պէտք է աքսորուի :

Աս արդար իշխանն ամենևին չէր հոգար թէ Աթէնքէն պիտի քշուի . օր մը ելաւ առանձին կը քալէր . տեսաւ որ քաղաքացիներէն մէկը կը գրէր որ աքսորուի Արիատիգէս . գնաց մօտեցաւ հարցուց թէ ինչու համար կը գրես, Արիատիգէս քեզի բան մը ըրած ունի : Պատասխանեց՝ թէ ոչ ինձի բան ըրած ունի, և ոչ զինքը կը ճանչնամ . հապա անոր համար չեմ ուզեր որ ամենէն վեր արդար կ'անուանի : Ահա այսպէս զուր տեղ աքսորուեցաւ արդարը տասը տարուան համար . բայց իւր

արդարութիւնն իրեն շուտ հասաւ . զի ֆսեր-  
քսէս Պարսից թագաւորը՝ Յունաստանի վրան  
գալով, ժողովուրդը բերել տուաւ արդար Ա-  
րիստիդէսը վեցերորդ տարին, ու թշնամւոյն  
զիմացը հանեց նաւով . որ ոչ միայն քաջու-  
թեամբ կատարեց իւր պաշտօնը, այլ և անկէ  
ետե մեծամեծ պաշտօններու մէջ մտաւ, ու  
ամեն անգամ իրեն արդար անունը փայլե-  
ցուց իր վրան՝ զարմանալի առաքինութեամբ  
և ազգասիրութեամբ: Երկար ժամանակ դան-  
ձապետ եղաւ, բայց շահասիրութիւն չունե-  
նալուն համար միշտ ազքատ էր, ու ազքատ  
մեռաւ . անանկ որ իր զաւկըները տէրու-  
թիւնը պահեց մեծցուց . բայց արդար անու-  
նով ճոխ և պայծառ էր թէ իրեն տէրութեան  
մէջ, և թէ բոլոր աշխարհի առջև:

Արդարութիւնն է տէր տիեզերին,

ոչ ոյժ գորութիւն արքայից բազկին .  
երբ բառնին յերկրէ իրաւունք վեհին,  
տասպալի աշխարհ կործանի ինքնին:

Ա՛ռ քեզ զայն անուն չըքնաղագունին,  
արդար գործելով յամեն առնելին .  
լաւ է վեհ անուամբ պանծալ ՚ի կարգին,  
քան տիրել գանձուց բոլոր աշխարհին:

Ժ . Հնապանդո-Բի-ն :

Ազնուական մեծատուն մը ունէր մէկ հատ  
զաւակ, որ շատ կը սիրէր հնազանդութեանը  
համար . զի ամենեւին ծնողացն հրամանէն

դուրս չէր ելած . ուստի ամեն ուսում սոր-  
վեցաւ . սակայն ծնողաց սիրովը շատանա-  
լով առուտուրի բան չէր սորված : Երբոր աս  
տղայն չափահաս եղաւ , մայրը սկսաւ հօրն  
ետեկէն իյնալ որ նշանէ որդին . իսկ հայրը  
խելացի ըլլալով կանչեց տղայն քովն ու ը-  
սաւ , թէ մօրդ խնդիրքը պիտի կատարեմ ,  
բայց նախ կ'ուզեմ որ երթաս մէկ հաս ոսկի  
վաստրկիս բերես որ տեսնեմ : Տղայն կարմ-  
րելով գնաց որ հօրը հրամանը կատարէ  
հնազանդութեամբ . սակայն վաստակի ճամ-  
բայ չգիտնալով տրամած կը մտմտար : Մայրը  
վազեց քովն ըսաւ , թէ մի տրամիր . մեր  
քովն ոսկի շատ . ահա առ աս մէկ ոսկին ,  
վաղը իրիկուն տար հօրդ տուր . և այսպէս  
կը վճարի քու հնազանդութեան պարտքդ :

Տղայն մօրն ալ հնազանդելով առաւ ոս-  
կին , մէկալ իրիկունը երբոր հայրը շատ  
բուռնին քով նստած էր՝ գնաց քովը կեցաւ .  
հայրը հարցուց թէ ո՞ւր է վաստրկած ոս-  
կիդ , տղայն հանեց մօրը տուած ոսկին հօրը  
տուաւ . հայրը վրան նայելով վերուց ջուրը  
նետեց ըսելով թէ աս քու վաստրկած ոսկիդ  
չէ , գնա դուն վաստրկէ բեր : Տղայն ամօթէն  
գետինը կ'անցնի , կ'երթայ տրամութեամբ  
կուլայ : Նայիս մայրը կը հասնի և կը հար-  
ցնէ թէ ինչո՞ւ կուլաս . հայրդ իրեն ոսկին  
թէպէտ ճանչցաւ , բայց ես վաղը դրացիէն  
կը փոխեմ ոսկի մը կուտամ քեզի , թող ճանչ-  
նայ նայիմ : Ուստի տղուն սիրտ կուտայ



մայրը . և մէկալ օրը կը փոխէ դրացիէն ոսկի մը , ու կուտայ աղուն կը խրկէ հօրը : Հայրը ձեռքը կ'առնէ ոսկին , ու բարկանալով նորէն ջուրը կը նետէ . աս քու վաստրկածդ չէ կ'ըսէ , գնա քու վաստրկածդ բեր :

Ան ատենը տղայն միտքը կը դնէ թէ մինչև որ չերթամ իմ աշխատանքովս հօրս հրամանը չկատարեմ , պիտի չըլլայ : Ուստի առաւօտանց կանուխ կ'ելլէ կ'երթայ քաղաքին ծայրը , կը նայի որ չէնք կը շինեն . կը փոխէ հագուստն ու կը մտնէ բանուորներուն մէջ կ'աշխատի մինչև իրիկուն . ետքը հագուստը կը փոխէ կ'երթայ տուն . և այսպէս շաբաթ մը չարաչար աշխատելով հագիւ մէկ ոսկի կը վաստրկի , և դողալով կը տանի հօրը : Իսկ հայրը առաջուան պէս ոսկիին վրան նայելով երբոր ջուրը պիտի նետէր , տղայն ոտքը կ'իյնայ , ու կը բռնէ հօրը ձեռքը կ'աղաղակէ որ չնետէ՝ մեղք է . զի մէկ շաբաթ հոգիս հաներ եմ կ'ըսէր , քրքրտինք թափելով վաստրկեր եմ :

Ան ատենը հայրը ուրախանալով կը սկսի տղայն խրատել , թէ ատ քու հնազանգութիւնդ քեզ արժանի ըրաւ որ վայելես իմ մեծութիւնս . որովհետև փորձով գիտցար թէ ապրանքի տէր ըլլալ , բան վաստրկիլը սրչափ մեծ և դժուար բան է : Թէ որ դժուարութիւնը չգիտնայիր՝ շուտով կը կորսընցընէիր իմ ապրանքս ու չէիր ցաւեր , ինչպէս որ չցաւեցար ջուրը նետած ոսկինե-



բուս վրայ, վասն զի չէիր աշխատած: Ուրեմն պահէ միշտ որդիական հնազանդութիւնդ և դիպցիր ունեցածիդ յարդը, որով կ'ըլլաս տէր և թագաւոր աշխարհի:

Ձինչ գեղեցկութիւն քան զայս յաշխարհի, հնազանդ և հըլու ունել պերճ որդի.

զարիւն և ըղկեանս առեալ 'ի ծնողաց, անդրադարձ նոցին ձօնել նըկըրտի:

Դու մանուկ ընտիր քաղցր առաքինի, հնազանդեա կամաց փոքու և մեծի.

թէ յաղթել կամիս աշխարհակալին,

յաղթեա քոյդ կըրից ներքին արտաքին:

ԺԹ. Սնչի շաշարհիւն:

Անուանի մեծատուն մը երեք զաւակ ունէր, երեքն ալ աղէկ կըթելլով և սորվեցընելով մեծցուց ինչպէս որ կը փափաքէր: Տեսնելով անոնց առաքինի վարքն ու կատարելութիւնը՝ հանեց իւր բոլոր ասլրանքը հաւասար երեքին բաժնեց: Բայց ունէր մէկ անգին քարով մատնի մը որուն նմանը չէր գտնուեր. աս մատնին պահեց քովն ու ըսաւ զաւկըներուն, թէ ս'ի որ ձեզմէ մէկ երեւելի գործք կամ գեղեցիկ առաքինութիւն մը ընէ՝ անոր կուտամ: Որդիքն իրմէն հրաման առին, որ երթան երեք ամիս պտըտին ու երեւելի գործքով մը դառնան: Սնչափ ժամանակ անցնելէն ետեւ դարձան եկան. հայ-

քը կանչեց զիրենք առջևն ու սկսաւ հար-  
ցարննել, թէ ո՞վ աւելի մեծ առաքինի գործք  
ըրած է: Առջի որդին պատմեց թէ ինձի պա-  
տահեցաւ օտարական մարդ մը, որուն հետ  
ընկեր ըլլալով բարեկամ եղանք, անանկ  
ինձի հաւատացեր էր որ ինձի սնտուկ մը  
ոսկի տուաւ պահելու առանց համբանքի և  
առանց գրի. ուսկից շատ բան կրնայի վեր-  
ցընելու. բայց շուշեցի հաւատարմութեան  
գէժ մեղանչել, ամբողջ պահեցի, ու եկածին  
սէս հանեցի ամբողջ տուի իրեն: Հայրը պա-  
տասխանեց թէ բարի է գործքդ. բայց աս  
առաքինութիւնն ընելով բնական պարտքդ  
կատարեցիր, զի օտարին ոսկին գողնալով  
պիտի ըլլայիր անիրաւ և զրկող, որուն հա-  
տուցում պէտք է որ ըլլայ կամ հոս և կամ  
հանդերձեալը: Երկրորդ որդին պատմեց  
թէ ծովուն քովն էի, տեսայ որ տղայ մը  
յանկարծ ծովն ընկաւ ու պիտի խղզուէր.  
սիրտս չըզիմացաւ, մէկէն ծովը նետուեցայ  
բռնեցի տղայն ողջ հանեցի ծովէն ազա-  
տեցի: Պատասխանեց հայրը, թէ քու գործքդ  
ալ բարի է. բայց դուն ալ բնական պարտք  
կատարեցիր. զի ամեն մարդ պարտըկան  
է իրարու օգնել և իրարու հասնիլ, մա-  
նաւանդ վտանգի մէջ. որովհետեւ օգնու-  
թեան հասնող մարդը օգնութիւն կը գտնէ,  
և խստասիրտ մարդը անողորմ կը կոր-  
սուի:

Ան ժամանակը երրորդ որդին պատմեց

հօրը , թէ անիրաւ մարդ մը նախանձելով  
անանկ թշնամի եղաւ ինձի որ ետեւէս ըն-  
կեր էր զիս սպաննելու . շատ մեծ դժուա-  
րութեամբ երբոր կը զգուշանայի իրմէն ,  
որ մը սպատահեցայ իրեն , տեսայ որ լերա-  
նը ծայրը պառկեր կը քնանար . անանկ դար  
ու վտանգաւոր տեղ էր , որ քունին մէջ  
չարժածին պէս պիտի զլորեր վար իյնար  
հազար կտոր ըլլար . նայեցայ վրան սիրտս  
չդիմացաւ , ուզեցի որ զինքն ան վտանգէն  
ազատեմ . իրաւ ինձի մեծ թշնամի էր , բայց  
ես կամացուկ մօտեցայ իրեն ու զգուշու-  
թեամբ արթընցուցի , որ ելաւ ան վտան-  
գէն ազատեցաւ : Հայրը լսածին պէս վա-  
զեց գրկեց աս առաքինի որդին ըսելով . սի-  
րելի զաւակ , քեզի կը վայէ աս իմ անգին  
մատնիս . զի քու առաքինութիւնդ արժանի  
է ամեն բարեաց . որովհետեւ բարի ընել բա-  
րերարին՝ է դորձ բնական . բայց բարի ընել  
չարարարին՝ է գերազանց դորձք , գեղեցիկ  
առաքինութիւն և գիւցազնական բարեգոր-  
ծութիւն : Ահա այսպիսի մեծ գովասանքով  
և սիրով հանեց մատնին գրաւ առաքինի զա-  
ւակին մատն ու հայրական օրհնութեամբն  
օրհնեց :

Այս պարզ և բարեաց անյիշաչարին ,  
աննրման գործոյ տըրիտուր անգին .  
քանզի վարձք գործոց վըսեմագունին ,  
վըսեմ գերազանց չափակցեալ նըմին :

Թէ 'ի սոյն չբընաղ գործ տիրականին  
բերիս նրկրբտիս զերթ առաքինին ,  
վարձք անկըշուելի քեզ պահի յերկին ,  
մեծապանծ փառօք յանմահից կարգին :

ԺԲ . Աշխատիրութիւն :

Արշակունեաց թագաւորութիւնը վերնա-  
լէն ետև բոլոր Հայաստանն ոտնակոխ եղաւ  
Պարսիկներէն . շատ նախարարներ պատուոյ  
համար ուրացան հաւատքն ու շատ տեղ կրա-  
կատուններ կը շինէին և կրակ կը պաշտէին .  
իսկ բարեպաշտ մարդիկ մեծ հալածանաց  
մէջ էին : Պարսիկներն ուրացողներուն վա-  
տութիւնը տեսնելով բոլոր Հայոց ազգը կ'ա-  
տէին , և նախատանօք վարելով ամեն ազգէն  
անարդ կը համարէին Հայերը :

Աս ժամանակը սուրբ Վարդանայ եղբոր  
որդին քաջն վահան տեսնելով սուրբ հա-  
ւատքին հալածանքն ու ազգին խեղճութիւ-  
նը՝ վառուեցաւ սիրտը ազգասիրութեամբ և  
աստուածապաշտութեամբ . ուստի միաբանեց  
իրեն հետ ամեն բարեպաշտ նախարարներն  
ու կեանքը դնելով հաւատքին և ազգին հա-  
մար , սկսաւ քաջութեամբ հալածել Հայաս-  
տանէն կրակապաշտ Պարսիկներն և ուրացոյ-  
ները : Թէպէտ շատ քիչուոր էին առջի բե-  
րանը , բայց Աստուծոյ զօրութեամբն այնչափ  
զօրացան , որ հազարաւոր Պարսիկները ցի-  
րուցան կը ջարդէին զարմանալի քաջութիւն .

անանկ որ միայն վահանայ անունը զամենքը  
կը դողացընէր :

Պերօզ Պարսից թագաւորը լսելով վահանայ  
դորձքերը՝ անհամար զօրք հաննեց վրան ,  
որ ջնջէ զինքը . բայց նա աստուածսպաշ-  
տութեան և ազգասիրութեան հոգւով ա-  
նանկ վառուած էր որ ոչ միայն չվախցաւ ,  
հասցաւ աներկիւղ և քաջութեամբ մտաւ զօր-  
քին մէջ իրեն քաջերովը , և սոսկալի ջարդ  
տալով մէկալ դիէն ելաւ , ու սարսափեցուց  
և խորտակեց Պարսից զօրութիւնը : Գրեթէ  
ամեն սլաութեամբ մէջ այսպիսի քաջութիւն  
ցիրուցան ըրաւ թշնամիները : Բայց վերջի  
մեծ յաղթութիւնն եղաւ , երբոր երեսուն  
քաջով մտաւ բիւրաւոր Պարսից բանակն ու  
կայծակի նման զանոնք հալածելով մէկալ  
կողմէն ելաւ . մինչև անհաւատ թշնամիները  
վկայեցին թէ վահանայ օգնական աներկոյթ  
զօրութիւն մը կայ . ուստի չէին համարձակեր  
իրեն նայելու , թէպէտ ինքը զանոնք մարդու-  
տեղ չդնելով քովերնէն կ'անցնէր :

Ապա Պերօզ մեռնելէն ետեւ Պարսից թա-  
գաւոր նստաւ վաղարչ , որ լսելով վահանայ  
անպարտելի քաջագործութիւնները զարմա-  
ցաւ մնաց . զի քաջին դէմ ծեծկըւող զօրա-  
պետները կը վկայէին թէ այսպիսի զօրաւոր  
մեծ մարդ չէ տեսնուած , որ ազգասիրութիւն  
աչքին բան մը չերևնար , ու օր ըստ օրէ կը  
զօրանայ : վաղարչ սէր կապեց վահանայ  
վրան , ու հրովարտակ խրկեց իրեն որ հնա-

զանգի հաշտուելով հետը : վահան հաւանեցաւ , թէ որ իրեն երեք խնդիրքը կատարէ : նախ՝ թող տայ իրենց որ ամեն տեղ քրիստոնէական կրօնքը պաշտեն փառաւորապէս . Հայ մարդ չուրացընեն , և կրակատուններն Հայաստանէն վերցընեն : Երկրորդ՝ թող զիտնան լաւն ու գէշն ընտրելու . բարի և քաջ մարդիկ սիրեն ու պատուեն . իսկ անարդ ու րացող մարդիկ չպատուեն կրակապաշտ ըլլալնուն համար : Երրորդ՝ թագաւորն իր աչքովը նայի և ականջովը լսէ ամեն մարդու գործքն ու քաջութիւնը . և չհաւատայ ստասաց զրպարտողներուն :

Վաղարշ թագաւորը տեսաւ որ արդար էին վահանայ խնդիրքները , ոչ միայն կատարեց գովելով անոր ազգասիրութիւնը , որ բոլոր ջանքն ազգին լաւութեանը համար էր , այլ և հրամայեց որ իրեն քովը գոյ քաջն վահանն ու փառաւորի պատուով աննման քաջութեանը համար : Ուստի երբոր վահան բարեպաշտ նախարարներով գնաց ներկայացաւ թագաւորին , ու խօսեցաւ ատենին մէջ զարմանալի ատենախօսութեամբ , ամենքը մեծապէս հաճեցան , և գովեցին անոր խոհեմութիւնը : Ապա տուաւ թագաւորը մեծ պատիւներ վահանայ , նաև սպարապետութիւն ազգին վրայ . նոյնպէս տուաւ ուխտապահ քաջ նախարարներուն իրենց պատիւը , և մեծապանծ փառք խրկեց զիրենք Հայաստան : Երբոր վահան հասաւ

Հայաստան՝ մեծ հայրապետն Յովհանն ման-  
գակունի ելաւ առաջ սուրբ խաչով և սուրբ  
նշխարքով Լուսաւորչայ՝ օրհնեց զինքն ու  
տարաւ եկեղեցին բոլոր ժողովրդով, զովե-  
ցին և փառաւորեցին զաստուած, որ փառա-  
ւորեց իւր փառաւորիչը :

Ասկէց ետե վաղարշ տեսնելով վահա-  
նայ հաւատարմութիւնն ու խոհեմութիւնը  
խրկեց իրեն մարդպանութիւն, և եղաւ տէր  
և զլուխ ազգին : Բոլոր Հայաստանն ցնծու-  
թեամբ և ուրախութեամբ լեցուեցաւ, որ  
անանկ փառաւոր ազգասէր իշխանը տէր ե-  
ղաւ ազգին ու հայրաբար կը խնամէր զա-  
մենքը : Իսկ մեծ հայրապետը նորէն օրհնե-  
լով իւր քաջ իշխանը, խօսեցաւ գեղեցիկ  
ճառ մը սքանչելի ատենաբանութեամբ. նախ՝  
զովելով և փառաբանելով զԱստուած. եր-  
կրորդ՝ մեծարելով վահանայ քաջութիւ-  
նը, ազգասիրութիւնը և բարեպաշտութիւ-  
նը. երրորդ՝ օրհնելով զամենքը, որ այսպէս  
զօրացան փառաւորապէս : Իսկ վահան խո-  
նարհելով առաջի Աստուծոյ շնորհակալ և  
ղաւ, և անկէ ետե մինչև ցմահ նոյն բարե-  
պաշտութեամբ և ազգասիրութեամբ կառա-  
վարեց ազգը խոհեմապէս, և օրըստօրէ պայ-  
ճառացուց թէ՛ քրիստոնեայ ժողովուրդը, և  
թէ՛ ֆրիստոսի սուրբ հաւատքը. և աս բա-  
րեպաշտ ազգասիրութիւնը և իշխանութիւ-  
նը երեսուն տարի քշելով շատ աղէկութիւն  
տեսաւ ազգը, և միշտ պատուեցաւ փառաւոր  
անունը քաջին վահանայ :



Այս պատգամ սիրոյ կըտակ ճըշմարտին ,  
 վառիլ և մաշիլ 'ի սէր ընկերին .  
 այս գործ է սիրող քաջազնին ,  
 ծախել զոր ունի 'ի սէր ազգային :  
 Տուր 'ի սէր ազգին կեանք քո և մարմին ,  
 կեալ մընալ անմահ 'ի սընունդ նորին .  
 զի կեալ վասն անձին է կեալ սոսկ մարմին ,  
 կեալ 'ի պէտս ազգին է բանականին :

ԺԳ . Ուրեմիւր-Ըիւն :

Երևելի խոհեմ մարդ մը ունէր երկու  
 որդի . որ շատ մեծ հոգ ունեցաւ երկուսն ալ  
 ազէկ մեծցընելու կրթելով և ուսումն սոր-  
 վեցընելով՝ որ ընտիր խելացի մարդիկ ըլլան .  
 և ինչպէս որ կը փափաքէր ազնիւ խելացի  
 զաւակաց հայր ըլլալու՝ փափաքին հասաւ .  
 զի անանկ շնորհալի իմաստուն զաւկըներ և  
 զան , որ աշխարհք կը զարմանար անոնց խել-  
 քին , քաղաքավարութեանը և պարկեշտու-  
 թեանը վրայ :

Աս սիրուն զաւկըները երբոր ասանկ շնոր-  
 հալի կը ծաղկէին մատաղ հասակի մէջ , հայ-  
 րը ամեն բան կը ձգէր ու անոնց վրայ նայե-  
 լով կը զմայլէր . շատ անգամ գործը կը ձգէր  
 կը վազէր կ'երթար զաւկըները տեսնելու .  
 որչափ նեղութիւն ունենար , անոնց երեսը  
 նայածին պէս՝ կը մոռնար : Որչափ որ անոնց



առաքինութիւնն ու եղբայրսիրութիւնը կ'եւ-  
 ւեինար՝ հօրը սէրն ալ այնչափ կը բորբոքէր .  
 անանկ որ ամեն վայրկեան կը դողար վրա-  
 նին . նոյնպէս անոնք ալ սիրական ծնողքին  
 վրայ կը դողային որդիական սիրով : Ուստի  
 ասոնք առաքինութեան պատկերք մը եղած  
 էին աշխարհիս մէջ իրենց բարի վարքովը :  
 Սակայն ասոնց սէրն ու քաղաքավարութիւնն  
 անանկ դժոխային նախանձ մը բերաւ բռնա-  
 ւոր իշխանին , որ կը տիրէր նոյն քաղաքին  
 անիրաւութեամբ , մինչև սկսաւ ետևներնէն  
 կ'յնալ պատճառներ փնտրուել , որ զիրենք  
 կորսնցընէ . վերջապէս սուտ բանով մը վե-  
 րուց երկու տղայն ալ բանտը դրաւ սուտ վը-  
 կայներով , ու հաստատեց որ երկուսն ալ  
 մեռնին . խեղճ հայրը երբօր լսեց , խելքը  
 զլխէն գնաց , վազեց գնաց բռնաւորին ոտքն  
 ինկաւ , խնդրեց աղաղակեց , որ ողորմի խը-  
 նայէ զաւկըններուն ու չմարէ ճրագը , որ սքան-  
 չելի բարի օրինակ մնան աշխարհիս վրան , և  
 ծնողական սրտին մխիթար ըլլան : Այսպիսի  
 աղետալի խօսքերով որչափ որ ջանաց բռնա-  
 ւորին սիրտը կակըղցընել , այնչափ քարացաւ  
 նա , մինչ զի քովի մեծամեծներուն սիրտը  
 չզիմացաւ՝ անոնք ալ սկսան աղաչել : Ողոր-  
 մելի հայրը կ'աղաղակէր որ անոնց տեղը  
 զինքն սպաննէ . իսկ իշխանները կ'աղաչէին  
 որ գէթ մէկ տղայն չսպաննէ թողու ծնողքին  
 մխիթար :

Աս անօրէն բռնաւորը որովհետև կ'ուզէր

ար ծնողին սիրտը խորտակէ, հրաման հանեց որ երկու որդւոյն մէկը պէտք է որ մեռնի . բայց հայրը որն որ կ'ուզէ՝ ան թող մեռնի . ուստի բերին զաւկընէրը բռնաւորին առաջը . ցաւալի հայրն ալ հոն բերին որ որոշէ, մէկ զաւակը մեռնելու տայ, մէկալն առնէ իրեն : Շարժեցաւ խեղճին ծնողական գուլթը, այլայլեցաւ արիւնը, նայելով զաւկընէրուն վրայ սիրտը կտրտեցաւ, վաղեց դնաց փաթթուեցաւ զաւկընէրուն . ողորմագին ձայնով ինզրեց բռնաւորէն որ երկու զաւկին ալ խնայէ, ու զինքն սպաննէ : Տեսաւ որ մտիկ չըրաւ, նորէն աղաղակեց . ո՛վ բռնութեանս, ո՞ր զաւակս տամ, և ո՞րը պահեմ . երկուսն ալ սիրուն և առաքինի, երկուսն ալ անգին մխիթար ծնողական սրտիս, երկուսն ալ հոգւոյս ճրագը և սրտիս փառքը . աս աչքերս ինչպէս տեսնեն անմեղ զաւկիս մահը . աս ոտքերս ինչպէս կոխեն զաւկիս արիւնով ներկած հողը . շատ աղէկ է որ ես մեռնիմ . քան թէ աննման զաւկիս մահը տեսնեմ : Նայիս անանկ այլայլեցաւ սիրտն ու երևակայութիւնն որ միտքը կորսընցուց, չգիտցաւ ըրածը . ալ չգիմացաւ սիրտը, հանեց սուրը զարկաւ ինքզինքը մեռցուց և իր արիւնով շարժեց ամենուն սիրտն ու զո՛հ եղաւ զաւկընէրուն . և այսպէս զանոնք աղատեց իր մահուամբը :

Այս է բընութեան անժոյժ բըռնութիւն, տենչայ զաւակաց զոհել զիւր արիւն .

այս ցաւած սրբախի կիրք անհրճարին ,  
 վազվազեալ բերի յաղէտ դառնագոյն :  
 Գու զաւակ ընտիր բարեկիրթ ներհուն ,  
 ծնողական սրբախ մըխիթար սիրուն .  
 ջանա սպանծալի վեհանալ 'ի նոյն ,  
 փառաւոր անմահ 'ի կեանս 'ի մահուն :

ԺԴ . Օճողական Կերք :

Իդոմենէ դեկալիոնեան կրետէի թագաւորը , տրոյական պատերազմին ժամանակը կ'երթայ նոյն քաղաքը պաշարելու Յունաստանի ուրիշ թագաւորներուն հետ : Աս քաղաքը կործանելէն ետեւ , Իդոմենէ կը մտնէ նաւն որ քաղաքն երթայ . Բայց այնպիսի սաստիկ ալէկոծութիւն մը կը պատահի , որ ամենքը կը յուսահատին , իսկ փորձ և զօրաւոր նաւաւարները կը հաստատեն թէ աս վտանգէն ազատելու ճար չկայ : Ամեն մարդ մահն առաջը կը տեսնէր , ամենուն կ'երևնար թէ անդունդը բերանը բացեր է որ զիրենք կլանէ . ուստի ամենքը լացով ողբով կուլային իրենց գժբազդութիւնը , որ գերեզմանի ալ արժանի չեղան :

Իսկ Իդոմենէ վերցուց աչքերը երկինք դառն տրտմութեամբ սկսաւ ազազակել : Ո՛վ ամենակալ տէր , դուն որ ունիս տէրութիւն ծովուն ալիքներուն վրայ , լուր ողորմելոյս , ողորմէ խեղճ թշուառիս . ահա կ'ուխտեմ որ եթէ զիս ազատես ու հասցընես իմ

կղզիս կրետէ՛ ծովուն զարհուրելի բռնութիւնը  
խորտակելով, ես զոհեմ՝ քեզի ան գլուխն որ  
նախ աչքիս երևնայ :

Սակայն իր որդին գիտնալով հօրը դար-  
ձը պատրաստուեր էր որ գիմաց երթայ ու  
հօրը հետ գրկախառնի . խեղճը չէր գիտեր  
թէ ան պիտի ըլլար իրեն անձին կորուստ :  
Հայրը ազատելով ալէկոծութենէ շտկեց  
նաւը դէպ ՚ի նաւահանգիստը, տեսաւ հե-  
ռուէն հայրենիքը՝ ուրախանալով շնորհա-  
կալ կ'ըլլար Աստուծոյ, որ իւր ուխտին հա-  
ճեցաւ ու զինքը ցանկալի երկիրը հասուց ,  
սակայն մէկէն իմացաւ թէ քանի տրտմալի  
էր ըրած ուխտը : Ասով հասկըցաւ իր դըժ-  
բաղդութիւնը, և կը ցաւէր անխորհուրդ  
ուխտին վրայ : Մինչ զի կը վախնար հաս-  
նելու քաղաքը և տեսնելու իր ընտանիքը .  
ևս առաւել կը դողար որ չըլլայ թէ որդին  
տեսնէ, որ շատ աւելի սիրելի էր աշխարհիս  
մէջ : Սակայն անգութ ձախորդութիւնն աշ-  
խարհի, որ կը ջանայ միշտ պատժելու մար-  
դիկ և խոնարհեցընելու մեծամեծները, կը  
հալածէր աներևոյթ ձեռքով զիդոմենէ : Վասն  
զի հազիւ թէ հասաւ քաղաքն ու չհամարձա-  
կելով աչքը վերցուց որ նայի, ահա տեսաւ  
սիրական որդին, որուն համար էր վախն որ  
չըլլայ թէ տեսնէ . մէկէն զարհուրելով ան-  
գին դարձուց երեսը . աչքը կը փնտրուէր  
ուրիշ գլուխ մը տեսնելու, որ քիչ սիրածն  
ըլլայ, որպէս զի ծառայէ զոհին, բայց պա-

րապ տեղը կը նայէր . զի որդին որդիական սիրով վաղեց ամենէն առաջ հասաւ կարօտալի հօրը , փաթթուեցաւ վզին փափաքանօր . բայց տեսաւ որ հայրը տրտմութեամբ լեցուած ոչ երեսը կ'ուզէ նայիլ , և ոչ իւր գգուանքը կ'ընդունէր , այլ արտասուօք կ'ողբար , զարհուրեցաւ տղայն , չղիմացաւ սիրտը . Ո՛վ հայր իմ , ըսաւ . ուսկից է ատ քու տրտմութիւնդ . այսչափ երկար հեռաւորութենէդ ետե ինչո՞ւ կը վշտանաս որ թագաւորական քաղաքդ հասար . և ինչո՞ւ զաւկիդ ուրախութեանը վրայ տրտմեր ես . ի՞նչ ըրի ես , որ աչքդ ինձմէ կը դարձընես ու կը վախնաս երեսս նայելու : Հայրը տրտմութեամբ լեցուած չունէր կարողութիւն որ պատասխանէ . վերջապէս խորունկ հառաչանօք սկըսաւ ըսել . Ա՛հ տէր , ի՞նչ խոստացայ ես քեզ , և դուն ի՞նչ գնով ազատեցիր զիս ալեկոծութենէ . տար զիս տուր ալիքներուն և ժայռերուն , խորտակէ զիս , որ կատարի տրտմալի կեանքս . թող որ ապրի որդեակս : Ո՛վ բռնութեանս . ահա առ իմ արիւնս , ու իննայէ զաւկիս : Այսպէս խօսելով քաչեց սուրն որ ինքը զինքն սպաննէ , ու որդին ազատի մեռնելէն : Բայց հասան հոն մեծամեծները չորս դին կեցած՝ բռնեցին ձեռքն արգիլեցին :

Սոփրոնիմոս ձեր պատգամախօսը հասաւ իրեն ու սկսաւ զինքը համոզել , թէ ի՞նչ հարկ կայ որդիդ զո՞հ ընելու , առանց անոր ալ կ'ըլ-

լայ . քու խոստումդ է անխոհեմ . Աստուած  
չուզեր բնաւ պատուիլ անգթութեամբ . ըզ-  
գոյշ կեցիր չըլլայ թէ աւելցընես մեղքդ ուխ-  
տիդ յանցանքին վրայ , կատարելով ուխտդ  
ընդդէմ օրինաց բնութեան : Զոհէ հարիւր  
ճերմակ ցուլ , ցանէ անոնց արիւնը սեղանին  
չորս դին , պսակելով ծաղիկներով , և ծխե-  
լով անուշահոտ խունկեր . աւելի ընդունելի  
է ատ Աստուծոյ :

Իգոմենէ դլուխը կախած կը լսէր աս խօս-  
քերը , բայց որդւոյն կսկըծուն սաստիկ խռո-  
ված , գէմբը դեղնած այլանդակ , ամեն կէ-  
տի գոյնը կը փոխուէր , ու բոլոր անդամքը  
կը դողային սարսափմամբ : Իսկ որդին բանը  
հասկընալով աղաղակեց հօրը . Ահա ես հայր  
իմ . քու որդիդ պատրաստ է մեռնիլ զոհ ըլ-  
լալ Աստուծոյ . չըլլայ թէ անոր բարկութիւ-  
նը քեզի բերես . ես զոհ կը մեռնիմ . որպէս  
զի իմ մահս պահէ քու կեանքդ : Զարկ  
հայր իմ , մօրթէ զիս . մի վախնար թէ ան-  
արժան որդի կ'երևնամ քու մեծութեանդ՝  
վախնալով մահուրնէ : Հայրը տղուն աս  
քաղցր ձայնն որ լսեց բոլորովին խորտակե-  
ցաւ սիրտը , կորսնցուց մտքին կարողութիւ-  
նը՝ ուխտին բանը միտքը բերելով սարսափե-  
ցաւ , արիւնը բռնկեցաւ , վերուց սուրն որ  
զարնէ . տղայն սրին գէմն ելաւ , յանկարծ  
որդւոյն սիրտը մտաւ սուրը , թարմ արիւնը  
ողեխառն սկսաւ վազել : Քովի եղողները  
մինչև որ բռնեցին , արիւնաթաթախ սուրը  
տղուն սրտէն դուրս հանեց , որ կը ծխար :

Ողորմելի տղայն աւելի սիրական ըլլալուն հօրը , աւելի խեղճ եղաւ . նայիս ինկաւ վազած արիւնին մէջ , աչքը կիսաբաց խաւարած ստուերաւ մահու . նման դեղնցիկ շուշանին , որ արմատէն կտրելով արօրէն՝ կ'էյնայ դաշտին մէջ խամբած խորտակած , չկըրնար վեր կենալ . թէպէտ դեռ չէ կորուսած բնական ճերմակ գոյնը , բայց կեանքը մարած է , ու երկրէս ալ չկրնար սնունդ առնելու : Այսպէս եղաւ սիրուն որդին իգոմենայ , որ թարմ և նորահաս ծաղիկ ըլլալով հնձեցաւ ծաղկաթիթիթ հասակին մէջ :

Իգոմենէ սասաթիկ կսկըծուն անդգայ և խելագար եղաւ . ոչ ուր եղածը գիտէր և ոչ ինչ ըրածը : Վազելով դէպ 'ի քաղաքը որդին կը հարցընէր : Իսկ քաղաքացիք տեսնելով աս զարհուրելի դիպուածը՝ ցաւակից եղան խեղճ որդւոյն , ու երես դարձուցին թագաւորէն : Իսկ բարեկամներն առին թագաւորը նաւը դրին ու ծովն ելան գնացին : Իգոմենէի խելքը զլուխն եկաւ , հասկըցաւ որդւոյն աղէտալի դիպուածը . շնորհակալ եղաւ բարեկամներուն , որ զինքը հանեցին ան երկրէն , որ սիրական զաւակին արիւնովը շաղուած էր , ուր չէր կարող բնակելու . զընաց Սաղնատինա նոր քաղաքը շինեց , ու հոն հաստատեց թագաւորութիւնը՝ միշտ ողբալով ան վրայ : զնիւ զաւկ

Բարեզարգ զաւակ տայ զարեն անգին ,  
զոհէ զայն 'ի սէր ծընողականին .



զոր փոխ էր առեալ յարենէ նոցին ,  
ընծայէ սիրով կենաց տըւողին :  
Քեզ է օրինակ , մանուկ դիւցազին ,  
զո՛հ լինել ծնողաց զո՛հ կենարարին .  
զի այն է կեալ միշտ անմահ 'ի մահին ,  
անմահ յիշատակ թողեալ յաշխարհին :







ԺԵ . ՀԱՅՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՂԻՍԱՐԵԹԻ



ԴՆՊՈՎԱԾ ԱՆՈՎՆԻ :

**Թ.** Կարգը՝ Սիպերիայի մայրաքաղաքը շինուած է թոպոլ և իրթիշ գետերուն միջոցը , որուն հիւսիսակողմը կը շրջապատէ ընդարձակ անտառ մը ու կ'երթայ մինչև սառնապատ ծովը : Աս միջոցը կայ 1100 վերստ ինչուան ապառաժ լեռները , միշտ ծածկած են սառերով . ուր ջրերը սառած ըլլալով ոչ դաշտերը կ'ոռոգանեն և ոչ ծաղիկ մը կը բուսցընեն : Թէ որ աւելի բևեռին մօտենաս , և ոչ մեծ ծառ կը տեսնես . այլ տեղ տեղ անպէտ թուփեր , բժշկական խոտեր և կենդանիներ :

Ահա ասոնք են աս տխուր տեղերուն զար-  
գարանքը : Ապա կ'երևնան ճախին տեղեր  
լեցուն մամուռներով, որ կ'երեցընեն բնու-  
թեան ճիգը . անկէ ետե ալ բոյս չերևնար .  
ցուրան ու սառը կը թագաւորէ : Սակայն  
բնութիւնն ուրիշ տեսարան մը կ'երեցընէ,  
որ է հիւսիսային արշարոյսը . հորիզոնին վրայ  
կ'երևնայ շատ անգամ լուսավայլ կամար և  
շարժական լուսեղէն սիւներ երկինքը կա-  
խուած, որ մեծ զուարճութիւն և զարմանք  
կը բերեն մեր կողմերէն պատրուածներուն :  
Թողոյսք մայրաքաղաքին հարաւային կողմէն  
կ'անցնի իշխմ' գետը, ուր տեղ տեղ սերմա-  
նած են զաշտերը . իսկ զառն լիճը սահման է  
Խըռխըղ թաթարներուն . որոնք թէպէտ այլ-  
ազգ են, այլ զարմանալի աւելորդապաշ-  
տութիւններ ունին հանգերձ կախարդու-  
թեամբ : Շատ անգամ գէպ 'ի երկինքը կը  
կռուին, թէ ուրիշին խնդիրքը կը կատարես՝  
մերը ինչո՞ւ չես կատարեր . երբեմն հրացան  
քաշելով կը սպառնան, որ տայ աստուած  
իրենց խնդիրքը : Աս քաղքին ձախակողմը կը  
շրջապատէ իրթիշ գետը, իսկ աջակողմը  
Թողոլ գետը, ուր անբոյս և անբեր տխուր  
տեղեր են . ուրիշ բան չերևնար, եթէ ոչ՝  
ժայռեր իրարու վրայ դիզած . օդը թանձր,  
աստիճանը ծանր և արեգակը արտում :

Իշխմ' գաւառն աւելի բարեխառն ըլլալով՝  
Սիպերիայի պարտէզը կը սեպուի . որովհե-  
տե ամառ կը տեսնէ . և ձմեռը միայն ութ

ամիս կը տեւէ . բայց ցուրտը շատ սաստիկ է , մանաւանդ երբ հիւսիսային հովը կը փչէ : Սեպտեմբերի մէջ ամեն ջուր կը սառի և կը տեւէ մինչև մայիսին վերջը . անկէ ետև ծառերը կը սկսին կանանչիլ , և բոյսերէն ահողջ հոտ բուրել . թռչուններն երգելով կը զուարճանան , հիւսիսային սաղերը ջրերուն երեսը կը կարկաչեն , արագիլն ու սպիտակ կռունկն եղէգներուն մէջ բոյն կը շինեն ձագհանելու համար . սկիւռ (զինճապ) կենդանիները մէկ ծառէն մէկալը ցատքելով կը ձայնեն : Բնութեան աս զուարճալի տեսարանը քաջապերելով կը զօրացնէ բնակիչները , որոնց երջանիկ օրերն ասոնք են : Բայց որոնք աղէկ երկիրներէն հոն արսորուած են , ամենևին զուարճութիւն չեն իմանար ասանկ բաներէն :

Աս անբաղդ արսորուածները մէյմէկ զիպուածով քշուեցան հոն , որոնց մեծ մասը թոպուք քաղքին քովերը կը բնակին մինչև իշխմի սահմանը . ոմանք դատերու մէջ կը բնակին խրճիթներով : Ռուսաց տէրութիւնը ողորմելով հոգացաւ իրենց որսորդութիւն ապրուստի համար . սակայն աս ողորմելի մարդիկը ամեն դի սիրած ըլլալով՝ սր կողմն որ նայիս՝ սրաիդ դութը կը շարժի , և ամեն տեղ խեղճութիւն կը տեսնես :

Միւս քաղաքը կը սեպուի Սեպտեմբրի , ուր կը նստի երկրորդ կառավարիչ իշխանը . ասկէց իրեք վերստ հեռու ջրոտ

անտառին մէջ բոլորակ լճին քով կը բնակէր  
 սքսորուած տուն մը . երեք հոգի էին , այր  
 կին և դուստր . այրն էր 45 տարուան Պետ-  
 ըոս Սփինճեր անուամբ . կինը 30 տարուան  
 Ֆէոտորա անուամբ . իսկ դուստրը փոքրիկ  
 և զեղեցիկ ծաղկափթիթ եղիսաբեթ ա-  
 նուամբ : Աս խեղճերը փակուած ըլլալով աս  
 անմարդաբնակ անտառին մէջ ամենեւին հա-  
 զորդակցութիւն չունէին մարդու հետ : Սփին-  
 ճեր միայն կ'երթար որսի , այլ բնաւ չէր  
 կարող Սախմբա քաղաքը մտնելու . իր կինն  
 ու աղջիկը մարդ մը չէին տեսեր , բաց 'ի  
 ազբատ թաթարներէն որ իրենց կը ծա-  
 ոայէին . նաև մարդ չիյտէր թէ ոսկից են ,  
 որսն ցեղէն և ինչ պատճառով սքսորուած  
 են : Միայն թուրք քաղքին մեծ իշխանը  
 զիտէր , ու իր տեղապահ իշխանին ալ չէր  
 յայտներ որ կը նստէր Սախմբա : Վասն զի  
 երբոր ասոնք հոն սքսորուեցան՝ իշխանը  
 խրկեց զանոնք Սախմբայի իշխանին ու պա-  
 տուիրեց որ անոնց համար յարմար բնակա-  
 րան մը շինել տայ հանդերձ փոքրիկ սլարտի-  
 զով . նաև հոգայ իրենց կերակուրն ու հա-  
 զուստը . բայց սաստիկ արգիլած էր որ ոչ  
 հազորդակցութիւն ունենան գրսի հետ , և  
 ոչ թուղթ մը անցընեն Ռուսոց տէրութեան  
 կամ թագաւորական քաղաքը :

Այսչափ զղուշութիւնները կարծիք կը  
 բերէին թէ պէտք է որ ասոնք մեծ ցեղէ մը  
 եղած ըլլան , Սփինճեր անուան տակը ծած-

կած կայ ուրիշ փառաւոր անուն, համեստ անբաղդութիւն և մեծ անիրաւութիւն կամ եղեւն : Որչափ որ ջանացին իմանալու ասոնց որպիսութիւնը, այնչափ ծածուկ մնաց : Երբեմն երբեմն որսորդները կը մտնէին ան անտառին մէջ . երբոր կը հասնէին լճին քովն ու կը հարցընէին անոնց անունը, պատասխան կուտային, թէ աս խրճթին մէջի բնակիչները դժբաղդ ողորմելի են : Անոնք ալ զթալով իրենց վրայ՝ կը հեռանային ըսելով, աստուած ողորմի ձեզի, և որ մը տանի ձեր հայրենիքը հասցընէ :

Աս լճին մէկ կողմն էր ընդարձակ դաշտ գերեզմանաց, ուր կ'երևնային մեռելի ոսկորներ, որ յայտնի կ'երեցընէին թէ հոն կայ եղեր հին ժողովուրդ . որոնց ոսկի զարդերն որ իրենց հետ թաղուած էին ժամանակով, մարդկային ագահութեամբ գտնուեցան ու յայտնի եղան : Իսկ լճին արևելեան կողմը կար փայտաշէն փոքրիկ մատուռ մը, որ քրիստոնեայք շիներ էին :

Արդ Սփինճեր աս կողմերս մինակ պարտելով երկայն ձմեռուան մէջ կը զարնէր զանազան կենդանիներ . կզնաքիս (զէրտէվա) սամյր, աքիս (քաբում), ուր խիտ շատ կան : Ասոնք կը խրկէր թոպոլսք ծախել կուտար, ու կնկանը ուղած բաներն առնել կուտար . աղջրկանը համար ալ հարկաւոր գրքեր բերել կուտար : Իսկ երկայն գիշերները կը պարապէին իրենց սիրական զաւկին կրթու-

Թիւն տալու համար, որ պարկեշտութեամբ նստելով ծնողացն առջև կը կարդար. միշտ ծնողքը կը ջանային ընտիր պատմութիւններ ու երևելի գործքեր կարդացընելու Եղիսաբեթին, որ վառի սիրտը առաքինութեամբ և աստուածապաշտութեամբ. հայրը կը սորվեցընէր վառաց և աղնուականութեան մեծութիւնը և գեղեցկութիւնը. իսկ մայրը համեստութիւն և բարեպաշտ սովորութիւններ. հայրը կը սորվեցընէր, թէ ինչպէս պէտք է առաքինութիւնը յարգել, իսկ մայրը՝ ինչպէս պէտք է սիրել առաքինութիւնն ու պարկեշտութիւնը: Սա բարի կրթութիւններէն առաջ եկաւ արիական բնաւորութիւն, հրեշտակային քաղցրութիւն ու մխիթարական կենակցութիւն:

Իսկ երբոր ձիւնը կը սկսէր հալելու, և գետինը կանաչնալու, Սփինճեր պարտէզը կը հողար, Ֆէոտորա կը պատրաստէր սերմը. Եղիսաբեթ կը ցանէր ան փոքրիկ պարտէզն որ ցիցերով շրջապատած էր և զարդարած փոքրիկ ծառերով, որոնց ծաղիկը անոյշ հոտ կը բուրէ: Կէս օրուան ժամանակը կ'աշխատէր ծաղկոցին մէջ, ուր կը հասցընէր զանազան ծաղկըներ, որ անձանօթ են մեղի. և ասոնցմով կը զարդարէին Եղիսաբեթի դուխն՝ ըսելով. Եղիսաբեթ, միտքդ զիր թէ հայրեննացդ ծաղկըներէն են. ասոնք նման են քեզի. երանի թէ ոչ ասոնք անցնէին և ոչ դուն:

Սփինճեր երբոր պարապ կ'ըլլար, լուռ կե-  
նալով կը մոմըտար ու խորին հառաչմամբ կը  
նայէր գէպ 'ի հայրենեաց կողմը, թէպէտ  
կինը գգուելով կը մխիթարէր զինքը. այլ ա-  
ւելի կը մորմարէր սիրաը՝ մանաւանդ կնոջը՝  
զաւկին վրայ նայելով: Ուստի կը կանչէր.  
ահ Ֆէոտորա, ինչո՞ւ կամեցար հետս միատեղ  
պրտորուելու. լաւ էր որ զիս մինակ թողուիր  
հոս. գէթ գուն զաւկովդ հանդիստ կ'ըլլայիր  
մեր հայրենիքը քու պատուովդ, ես ալ հոս  
առաւել գոհ կ'անցընէի ցաւալի օրերս: Աս  
բանն որ կը լսէր Ֆէոտորա՝ ողորմադին նայ-  
ուածքով կ'արտասուէր. և ասով ցոյց կուտար  
թէ սրչափ մեծ սէր ունէր քաղցր ամուսնոյն  
վրայ. անանկ որ և ոչ օր մը առանց անոր  
կրնար ըլլալու. նաև զինքը թշուառ չէր սե-  
պեր միատեղ և ցաւակից ըլլալովը. գիտէր  
որ ամեն բան աստուածային կամքովը կ'ըլ-  
լայ. ուստի մխիթարուելով կը ջանար որ միշտ  
սիրան առնէ ընկերին:

Միշտ կը ջանար անոր կամքը կատարելու  
և սիրած կերակուրը պատրաստելու. մաք-  
րութիւնն ու խաղաղութիւնը կը թագաւորէր  
իրենց վոզրիկ բնակարանին մէջ. իրենց ա-  
մեն բանը պարզ և ադրատին էր, որ Սփին-  
ճերին որսորդութեամբը կը հոգային: Սե-  
նեկին պատերը զարդարած էին Ֆէոտորայ-  
ին ու Եղիսաբեթին քաչած նկարներով.  
Ներքնասենեակը տուեր էին Եղիսաբեթին.  
ունէին և ուրիշ տուն՝ թաթար ծառային



համար, ուր կը դնէին ամաններն ու պարտի-  
զին գործէրները :

Իրենց ժամանակը կ'անցնէր կամ' ներքին  
բաները հոգալով, և կամ' ծառի կեղևէ  
փսիաթ շինելով գետինը փռելու համար .  
Իսկ երբոր կիրակի կ'ըլլար՝ Ֆէոտորա հա-  
ռաչելով կը արտմէր պատարագ շտանելուն  
համար, թէպէտ սրբութեամբ և աղօթքով  
կ'անցընէր սուրբ Բարսեղի պատկերքին ա-  
ռաջը, որուն շատ ջերմեռանդ էր և պաշտ-  
պան աւեր էր իր մատաղ հասակէն : Այս-  
պէս ամեն օր ջերմեռանդութեամբ և բարե-  
պաշտութեամբ անցընելով իրենց միտքը լու-  
սաւորած էր և սիրտը մխիթարուած քաջա-  
լերութեամբ :

Իսկ Եղիսաբեթ չորս տարուքնէ 'ի վեր  
աս Սիպերիայի անտառը բնակելով ասկէ 'ի  
զատ ուրիշ հայրենիք չէր դիտեր, և իր ան-  
մեղ սիրտը ան պարզ բնական բաներով կ'ու-  
րախանար : Երբեմն կ'ելէր լճին քովի ժայ-  
ռերուն վրայ կը ժողվէր բազէի և անդեղի  
հաւկիթներ . շատ անգամ կը բռնէր վայրի  
աղաւնիներ, ու թռչնարանին մէջ կը շատցը-  
նէր . և անանկ կը զուարճանար սիրան որ  
կարծէր թէ ասկէ աւելի երջանկութիւն չը-  
կայ աշխարհիս վրայ իրեն համար . իր առողջ-  
ջութիւնը կը զօրանար սովորելով օդին, և  
իր հասակը կ'աճէր շարժմամբ և կրթու-  
թեամբ : Դէմքին վրայ հանդգած կ'երևնար  
անմեղութիւն և հանդարտութիւն, և օր



ըստ օրէ իւր հաճութիւնը կը շատնար, ու  
զեղեցկութիւնը կը պայծառանար, որ մի  
միայն մխիթարութիւն և ցնծութիւն էր  
ծնողայրը. որոնց առջին սիրուն ծաղիկ նման  
կը բացուէր, ինչպէս վայրի ծաղիկը միայն  
արևին ներկայութեամբ կը բացուի, թէ-  
պէտ իւր գոյնն ու զեղեցկութիւնը միշտ ու-  
նի. այսպէս կ'ըլլար Եղիսաբեթ երբոր ծնող-  
քը կուգային իրեն մօտ, որոնց պարտական  
կը ճանչնար իր կեանքը:

ՂԻՂՈՒՄԻ ԵՐԷՐՈՐ :

Երբոր մարդուս ախորժակը քիչ առար-  
կայի վրայ կը ժողվի՝ շատ ազդու և փափուկ  
կ'ըլլայ, ինչպէս էին Եղիսաբեթի սէրն ու ա-  
խորժակը. որ ուրիշ մարդ չէր ճանչնար, ե-  
թէ ոչ իր ծնողքը. անոնք միայն կը սիրէր,  
և անոնց հետ միայն կը կենակցէր. անոնք  
էին միայն իր տէրը, պաշտպանը, ընկերնե-  
րը, մանաւանդ իր վարպետներն ու սորվեցը-  
նողները: Կը տեսնէր որ ամեն բան անոնցմէ  
կուգար իրեն, և առանց անոնց բանի մը կա-  
րող չէր. ոչ քոյր ունէր, ոչ եղբայր, ոչ ազ-  
գական և ոչ ծանօթ. միշտ իրեն աչքը ա-  
նոնց երեսն էր, որոնք խոհեմութեամբ ի-  
րենց ցաւը կը պահէին իրենց սիրական զաւ-  
կէն, որ չըլլայ թէ քաղցր սիրտը կօտրի վըշ-  
տանայ:

Սակայն երբոր սկսաւ հասակն աճիլ և

ընտրողութիւնը հասունանալ, սկսաւ հետաքրքրութիւնն ալ աւելնալ. կը դիտէր որ սիրական ծնողքը միշտ միակերպ չեն, ծածուկ կը տեսնէր որ մայրը կուլայ, հայրը կը հառաչէ. հասկըցաւ որ իրենց դժբաղդութիւն մը պատահած է: Ուստի սկսաւ ազաչել իրենց որ պատճառն իմացընեն իրեն. բայց անոնք ուրիշ բան չէին ըսեր, այլ միայն կ'ողբային իրենց հայրենիքը. չէին ուզեր որ անոր անմեղ սիրտը իրենց անտանելի վշտին հաղորդեն. չէին իմացըներ թէ ինչ մեծութենէ ան խեղճութեան հասեր էին:

Եամանակէն ետեւ երբոր մանկութեան յաջորդեց պատանեկութիւնը՝ իմացաւ ծնողաց տրտմութեան պատճառն ու սկսաւ ինքն ալ հաղորդակցիլ անոնց վշտին, ուստի ձգեց անմեղութեան դրօսանքը, թողուց իր պարտէզն ու ծաղկըները, թռչունները սիրելէն դադրեցաւ. երբոր լճին քով կ'երթար, ոչ ձուկ բռնելու կը նայէր և ոչ նաւակը նստիլ խաղալ. այլ կը մտածէր թէ ինչ պիտի ըլլայ իրենց վախճանը. երևակայութիւնն անանկ սիրտը կը խռովէր որ հոգին կը քաղուէր: Երբեմն ժայռին վրայ նստած՝ աչքը ջրին վրայ հաստաաւելով կը մտածէր թէ ինչ առիթ կրնայ ըլլալ որ կարենայ դադրեցընել ծնողացն արտասուքը. որոնք անդադար կուլային իրենց հայրենիքը. բայց եղևսաբեթ չէր կրնար երևակայել, թէ ինչ բան էր հայրենիքը. որովհետեւ ինքը ոչ ան մե-

ճութիւնը տեսեր էր և ոչ կրնար երևակայելու : Սակայն միշտ մտածելով կը յափշտակուէր . ետքը աչքը երկինք վերցընելով օգնութիւն կը խնդրէր ստեղծողէն . երբեմն այնչափ խորունկ կը մտածէր որ ձիւն անձրև կուգար վրան՝ ու չէր ելլեր : Իսկ երբոր ծնողքը կը կանչէին զինքը՝ մէկէն կը վազէր կ'երթար կամ դաս առնելու և կամ մօրն օգնելու : Բայց երբոր անոնք իրմէ կը հեռանային , և երբ կ'աշխատէր կամ կը պառկէր , մի միայն մտածութիւնն էր որ ինչպէս երթայ Բեթրապուրկ , ու ծնողքն ազատէ ան խեղճութենէն . և աս խորհուրդը աստուածապատմութեամբ անանկ սրտին մէջ պահեր էր որքնաւ չյայտնէր պիտի , մինչև որ չյաջողի և ճամբորդ չըլլայ :

Ահա այսպէս էր Եղիսարեթին արիական սիրան ու խորհուրդը . այսպէս էր անլախ զիտաւորութիւնը մատաղ կուսին : Թէպէտ միտքը կուգային մեծամեծ վտանգներ և դժուարութիւններ , բայց սրտին արիութիւնը , կամքին բռնութիւնը և վստահութիւնն առ աստուած՝ զինքը քաջալերելով կը զօրացընէին թէ ամեն բանին ալ պիտի յաղթէ : Երբոր կը մտածէր որ անտառէն դուրս ելլելու կարողութիւն չունի , մօտ գեղը գնացած չէ , ինչպէս պիտի երթայ մինչև Բեթրապուրկ , ինչպէս պիտի ճամբորդութիւնընէ այնչափ ազգերուն մէջէն , որոնց ոչ լեզուն գիտէր և ոչ բնութիւնը՝ նորէն կը խըն-

գրէր աստուածային օգնութիւնը . խոնարհելով առաջի աստուծոյ կը խոստովանէր իր տկարութիւնը , ինչպէս որ սորված էր բարեպաշտ ծնողքէն : Ամենէն աւելի դժուար կ'երևնար իրեն , թէ ինչպէս ծնողացմէ պիտի դատուի , և ինչպէս անոնց խօսք պիտի անցընէ , որոնց մխիթարութիւնն էր ինքը միայն աշխարհիս ծայրը անշէն անտառին մէջ , ուր իրմէ 'ի զատ ուրիշ մարդ անոնց դռնէն ներս մտնող չկար : Բայց սակայն ոչ երբէք ասանկ խորհուրդներով յուսահատեցաւ , յիշելով թէ չկայ այնպէս անապատ տեղ՝ ուր չհասնի աստուածային նախախնամութիւնը . վասն զի ամեն տեղ կը լսէ զըժբաղդներուն աղօթքն ու օգնութիւնը կը հասցընէ :

Երեք տարի առաջ մեծ վտանգ մը պատահեր էր Սփինճերին . խիստ ձմեռուան մը մէջ դտնուեցաւ սրածայր բարձր ժայռին վրայ , ուր պէտք էր կորուիլ , թէ որ չհասնէր իրեն օգնութ չն քաջ պատանին որդի պարոն Սմուլֆայ կառավարչին թոպուլքի , որ միատեղ որսորդութեան կ'երթար ամեն ձմեռ Սախմըայի կողմերը . երբեմն Ուրալքի լեռներուն վրայ արջ կ'որսային , որ աւելի վտանգաւոր էր , ինչպէս վտանգեցաւ Սփինճեր և ազատեցաւ օգնութեամբ ընկերին : Աս զիպուածէն ետև Սմուլֆին անունն ասոնց մէջ միշտ յարգութեամբ կը յիշուէր , որ խեղճերուն երախտաւոր եղաւ . շատ կը

փափարէր Ֆէօտորա որ տեսնէ ու շնորհա-  
կալ ըլլայ օրհնութեամբ . թէպէտ ամեն օր  
անոր համար կ'աղօթէին , որովհետեւ արգելք  
կար՝ մարդ չէր կարող անոնց բնակարանն  
երթալու :

Իսկ Եղիսաբեթ որ միշտ իրեն ճամբոր-  
դութեան դժուարութիւնը կը մտածէր ,  
միտքը դրաւ որ առանց մէկ բարեկամի օգ-  
նութեան պիտի չկրնայ գլուխ տանելու աս-  
բանը . իր խորհուրդը դարձուց Սմայլֆի կալը-  
ճին վրայ , որ իրեն պաշտպան ընէ . վասն զի  
ան կրնար իրեն ճամբայ ցընելու մինչև Բե-  
թըրպուրկ , և կայսեր ներկայացընելու . և  
իշխանին ալ որդին ըլլալով՝ հօրը խօսք հաս-  
կըցընելու որ ծնողացը վրայ չբարկանայ աս-  
բանիս համար : Ուստի տեսաւ որ ձմեռը մօտ  
է , ետեւէ եղաւ խմանալու թէ արդեօք Սմայ-  
լֆի կուգայ որսորդութեան ան կողմերը . կը  
փափարէր հետը խօսակցելու :

Մփինճեր ան վտանգի մէջ իյնալէն ետեւ  
խոստացեր էր կնոջն որ չերթայ արջու որ-  
սորդութեան և չհեռանայ անտառէն . այլ  
միայն կ'որսար սկիւռ և սպիտակ աքիս , ինչ-  
պէս կը խնդրէր Ֆէօտորա . որսորդութենէ  
ալ ինչուան որ դառնար , շատ մեծ մտմբաու-  
քի և ցաւի մէջ կ'ըլլային : Ան ձմեռ ձիւն մը  
եղաւ սաստիկ խիտ և մնայուն , ցուրտն էր  
30 աստիճանէն աւելի : Մփինճեր մէկ առա-  
ւօտ մը դեկտեմբերի մէջ առաւ հրացանը  
գնաց որսի , բայց մեկնելէն առաջ գգուելով

խօստացաւ կնոջն ու զաւկին որ արևը չմը-  
տած դառնայ ,

Ժամանակն անցաւ , զիշերը մօտեցաւ ,  
Սփինճեր չղարձաւ . Ֆէոտորային կսկիծն ու  
մտմբտուրն անտանելի եղաւ . իսկ Եղիսա-  
բելթ սրտին ցաւէն կ'ուզէր երթալ հայրը  
փնտրուել կամ օգնել , բայց չէր կրնար մայրը  
մինակ ձգելու ողբի մէջ : Մինչև նոյն ատե-  
նը Ֆէոտորա լճին քովէն անդին չէր դնա-  
ցեր . ան կէտին վիշտը բռնադատեց խեղճն  
որ երթայ աղջրկանը հետ փնտրուէ այրը :  
Երկուքը միատեղ ելան կ'երթային դէպ 'ի  
դաշտավայրը . օգը սաստիկ ցուրտ , ծառերը  
սառած , հորիզոնը թանձր սևութիւն մը  
ծածկեր էր . զիշերուան մօտենալը զարհու-  
րելի գոյն մը տուեր էր առարկայներուն , ա-  
նանկ որ ամեն մէկ քայլին կը դողդոջէր տկար  
Ֆէոտորան . իսկ Եղիսաբելթ հոն մեծցած  
ըլլալով սորված էր օգին և ցրտին , բայց  
մայրը սորված չըլլալով միշտ կը զօրացընէր :  
Ինչպէս որ ծառ մը օտար տեղէ բերեն տըն-  
կեն՝ կը տկարանայ , իսկ փափուկ շառաւիղ-  
ներն արմատէն կ'ելեն ու կը սորվին ան տե-  
ղին , կը զօրանան և կ'աճին , նաև իրենց ըս-  
տուերին տակը կը պաշտպանեն ծառը , իբր  
թէ նոր կեանք կուտան . այսպէս կը զօրացը-  
նէր Եղիսաբելթ մայրը :

Երբոր մօտեցան տափարակ տեղը՝ Ֆէո-  
տորա ալ չէր կրնար առաջ երթալու : Եղի-  
սաբելթ ըսաւ . մայր իմ , օրը կը մտնէ , դուն

հոս կեցիր, թող զիս երթամ մինչև անտա-  
ռին ծայրը. թէ որ այսպէս ուշանանք, զի-  
շերը մեզ կ'արգիլէ հայրս փնտրուելու: Խեղճ  
Ֆէոտորան ծառին կաթընած կեցաւ ու թո-  
ղուց որ աղջիկն երթայ, որ մէկէն հասաւ  
գերեզմաններուն լեռնակը. աս լեռնակին  
ծայրէն Եղիսարեթ արտասուալի աչօք կը  
նայէր չորս գին որ հայրը տեղէ մը տեսնէ.  
բայց բան մը չտեսաւ. ամեն զի լուռ և ա-  
նասպատ տրտմալի. խաւարն ալ սկսեր էր եր-  
կիրս երկընթէն որոշելու:

Քիչ մը անցաւ, մօտ տեղէ հրացանի  
ձայն մը լսեց ու մեծ յոյս առաւ: Որովհե-  
տե աս ձայնը միայն հօրը ձեռքէն լսած էր,  
կարծեց թէ հայրն է. անցաւ ժայռերուն  
մէկալ կողմը, տեսաւ որ մարդ մը վար ծռած  
որսը կը փնտրուէր՝ կանչեց. Հայր իմ, հայր  
իմ, դուն ես: Երբոր նայեցաւ իրեն, տեսաւ  
որ չէր Սփինճեր, այլ էր շնորհքով պատանի  
մը: Եղիսարեթ տրտմութեամբ ըսաւ. դուն  
չես իմ հայրս. բայց չտեսար տեղ մը հայրս,  
ըսէ աղաչեմ, ո՞ւր կրնամ գտնելու: Պատաս-  
խան տուաւ թէ չեմ ճանչնար հայրդ. բայց  
գիտեմ որ աս ատենս դուն չես կրնար աս  
տեղերս մնալ առանց վտանգի, պէտք է վախ-  
նաս: Կրկնեց Եղիսարեթ, ես բանէ մը չեմ  
վախնար աշխարհիս մէջ, ո՞հ միայն կը վախ-  
նամ որ հայրս չեմ կրնար գտնելու: Սյու-  
պէս խօսելով աչքը վերցուց դէպ ՚ի երկին-  
քը հառաչեց. ուր քաջութիւնն ու խանդաւ-



զատանքը, վատահուժիւնն ու քաղցրութիւնը նկարուած էին դէմքին վրայ, և կը նախադուշակէին իր երջանիկ վիճակը: Պատանեակն այնպէս զարմացեր էր որ կարծէր թէ երազ կը տեսնէ. զի այնպիսի ազնիւ քաջասիրտ կոյս չէր տեսած. ուստի հարցուց թէ ի՞նչ է հօրդ անունը. պատասխանեց, թէ Պետրոս Սփինճեր: Չըլլայ թէ ըսաւ՝ դուն ըլլաս դուսար աքսորուածին, որ կը բնակի լճին քովի խրճիթը. մի վախնար ես կը ճանչնամ հայրդ. դեռ ժամ մը չկայ որ զատուեցանք իրարմէ, և դնաց իւր բնակարանը. կարծեմ թէ հիմա հասած է հոն:

Եղիսաբեթ ալ չկեցաւ, սկսաւ վազել երթալ մօրը, որ թողեր էր ծառին քով. և կը կանչէր մեծածայն խնդութեամբ հօրը դարձը, որ մայրը հեռուէն լսելով ուրախանայ. սակայն չգտաւ հոն մայրը, սկսաւ անտառին մէջ կանչել ծնողացն անունը տալով: Նայիս լճին կողմէն ձայն եկաւ իրեն. վազեց հասաւ խրճիթը. տեսաւ հայրն ու մայրը, գըրկեց զանոնք նստաւ. պատմեցին իրարու թէ ի՞նչպէս զանազան ճամբայով հասեր էին հոն: Եղիսաբեթ դուրս նայեցաւ, տեսաւ որ պատանին հոն կուգար. Սփինճեր լսելով դուրս ելաւ կանչեց անոր ահաճութեամբ. Պարոն Սմոլոֆ, ժամանակս ոչ է. դուն գիտես որ ես քեզ չեմ կրնար տունս ընդունելու և ոչ մէկ գիշեր: Իսկ կիներն ու դուստրը մէկէն կանչեցին՝ պարոն Սմոլոֆն է, որ մե-



դի աղատիչ եղաւ՝ աղատելով քեզ ան վը-  
տանդէն . երկուսն ալ ելան դուրս ոտքը ին-  
կան : Ֆէոտորա արտասուօքը լուաց ոտքը .  
Եղիսարեթ ալ ըսաւ . պարոն Սմուրֆ , ե-  
րեք տարի է որ աղատեցիր հայրս , մենք օր  
մը չենք անցուցած առանց աղօթք ընելու և  
օրհնելու զքեզ : Պատասխանեց պատանին  
զարմանալով . յիրաւի իմ ըրած պզտի ա-  
ղէկութեանս չէր արժեր այդչափ մեծ հա-  
տուցում :

Ժամանակն անցեր մութը կոխեր էր բո-  
լոր անտառը . Սմուրֆ առանց վտանդի չէր  
կրնար մինչև կէս գիշեր հասնիլ Սախիքա .  
Սփինճերն ալ չէր կրնար ճամբայ տալու  
իր աղատչին , բայց գիշերը հոն պահելու կը  
վախնար . վասն զի երգուընցեր էր թոպու-  
քի կառավարիչ իշխանին , որ մարդ չհան-  
դիպընէ իր խրճիթը . ուստի առաջարկեց  
հիւրին որ ճրագ վառէ ու միատեղ երթայ  
առջևէն : Ֆէոտորա աս բանը լսելով դող ե-  
լաւ ինկաւ ոտքն աղաչեց որ չերթան : Ան  
ատենն ըսաւ Սմուրֆ . շնորհք ըրէ ինձի  
տէր , որ մինչև առաւօտ մնամ խրճիթդ .  
գիտեմ ինչ պատճառի համար հայրս արգի-  
լեց քեզ , և այնչափ խստութիւն եղաւ : Ես  
ապահով եմ որ ինքն ինձի կը ներէ աս առ-  
թիս մէջ . ու խօսք ալ կուտամ որ շուտով  
գամ իրեն կողմանէ շնորհակալ ըլլամ տէ-  
րութեանդ , որ զիս աս գիշեր հոս պահե-  
ցիր : Ան ատեն Սփինճեր բռնեց ձեռքէն ու

խրճիթէն ներս տարաւ . նստան ինչուան  
Ֆէստորա և Եղիսաբեթ կերակուր պատրաս-  
տեցին :

Դ. Կ. Գ. Ծ Երբոր .

Եղիսաբեթ հագեր էր ինչպէս զեղացի  
թաթար ազջիկ մը . տակէն մորթի , վրայէն  
կարմիր կապայ և նեղ բաճկոն՝ կոճակներով  
մէջքը սխմած . մազերն ետևը ձգած , որ մին-  
չև ոտքը կը հասնէր . ասով գեղեցկութիւնը  
դէմքին ու հասակին վայելուչ չափակցելով  
յայտնի կ'երեցընէին բարուց ազնուութիւնն  
ու հոգւոյն վսեմութիւնը . բոլոր իր շարժ-  
մունքն ալ շնորհալի էին . ինչուան Սմուլֆ  
կը զարմանար և կը զմայլէր անոր քաղաքա-  
վարութեանն ու շնորհքին վրայ , ու գթալիւ  
կը նայէր վրան : Իսկ Եղիսաբեթ քանի որ  
կը նայէր Սմուլֆին , իբր թէ իր եղբայրը կը  
համարէր մաքուր սիրով , որ հայրն ազատեր  
էր . և յոյս ունէր թէ ճամբորդութեանն ալ  
օգնութիւն կը հասնի : Սրտին մէջ աստուած  
զրեր էր որ միայն ծնողացը համար հոգայ ,  
և անոնց ազատութիւնը մտածէ :

Երբոր կերակրի նստան , Սմուլֆ ըսաւ  
թէ երեք օրէն ետև Սախմբա մեծ որսոր-  
դութիւն պիտի ըլլայ գայլերուն համար , որ  
չատցեր էին և կ'ապականէին ան կողմը : Եր-  
բոր Ֆէստորա լսեց՝ ազաչեց Սփինճերին որ  
չէրթայ աս վտանգաւոր որսին . չգնես կ'ը-

սէր կեանքդ վտանգի մէջ, որ ինծի ամեն  
բարիքէս աւելի յարգելի է: Պատասխանեց  
Սփինճեր. դուն ինչ կը խօսիս, Յէտտորա.  
Ինչ է իմ կեանքս. ես չըլլայի՝ դուք աս խեղ-  
ճութիւնը կը քաշէիք. գիտէ՞ք որ եթէ իմ  
կեանքս չըլլայ, դուն ալ, զաւակս ալ կ'աղա-  
տիք: Կինը կտրեց աս խօսքս ցաւագին աղա-  
ղակով. Եղիսարեթ վաղեց հօրը քօփն ու  
բռնեց ձեռքն ըսաւ. Հայր իմ, գիտես որ աս  
անտառիս մէջ սնած ըլլալով՝ ասկից 'ի զատ  
ուրիշ հայրենիք չեմ ճանչնար. ես և մայրս  
քեզի հետ երջանիկ ենք ուր որ ըլլանք. իսկ  
առանց քեզի մենք մեր հայրենիքն ալ ըլ-  
լանք՝ թշուառ ողորմելի ենք: Կրկնեց Սփին-  
ճեր. պարոն Սմոլոֆ, գիտնաս որ այսպիսի  
խօսքը սիրտս կը ճմլէ տրտմութեամբ, և ոչ  
թէ զիս կը մխիթարէ. առաքինութիւնն է  
միայն զիս մխիթարողը. բայց սիրտս կտոր  
կտոր կ'ըլլայ երբոր կը յիշեմ՝ թէ ասոնք իմ  
պատճառովս աս անշէն անապատիս մէջ ին-  
կած են, և իմ պատճառովս Եղիսարեթ պի-  
տի անծանօթ մնայ՝ աշխարհէ հեռու: Մա-  
տող զաւակը կտրեց խօսքն ու ըսաւ. սէ  
հայր իմ, ահա ես ձեր ձեռքին մէջն եմ, ինչ-  
պէս անծանօթ խեղճ կ'ըլլամ: Ան ատենը  
շարունակելով խօսքը ըսաւ Սփինճեր. սիրելի  
զաւակս, դուն պիտի չուրախանաս ընկերաց  
հետ, աշխարհի բերկրութիւն պիտի չունե-  
նաս. աս տխուր անապատին մէջ պիտի անց-  
նի քու քաղցը կեանքդ թռչուններու պէս:

սհ անմեղ զոհ , չես դիտեր թէ ինչ բարիք կորուսեր ես . ամսն չեմ կարող տալ քեզի անոնք որ կորուսեր եմ :

Աս ցաւազին տեսարանն անանկ ճմլեց Սմնլոֆին սիրտն որ անդադար կուլար . շատ անգամ ուզեց խօսելու , ձայնը արգիլուեցաւ լացէն . վերջապէս սիրտ առաւ , ըսաւ . տէր իմ , աս տրտում անապատիս մէջ շատ տեղ քաղցի , շատ ողորմելի բաներ տեսայ . դըժբաղդ աքտորուածներ տեսայ , որ ոչ բարեկամ ունէին և ոչ ընտանի , ոչ մխիթարանք , և ոչ անոյշ խօսք տեղէ մը ունէին , աշխարհէ զատուած և հեռացած մարդիկներէ : կրկնեց Ֆէոտորա . աստուած մեզի զաւակ տուած է , ու կ'ըսես թէ ամեն բան կորուսեր եմ . հապա թէ որ առնէ մեզմէ՝ ինչ պիտի ըսես : Սփինճեր գգուելով աղջիկն ըսաւ . իրաւ կ'իմանամ թէ ամեն բան չեմ կորուսած :

Այսպիսի խօսակցութենէն ետե նոյն գիշերը հոն հանգստացան . առաւօտուն Սմնլոֆ հրաման առաւ որ երթայ . Եղիսաբեթ կը փափաքէր որ միջոց մը գտնէ ու իր խորհուրդն անոր յայտնէ . բայց մէկ վայրկեան ծնողքն զինքն առանձին չթողուցին որ խօսի հեաը . կը յուսար որ ուրիշ անգամ տեսնէ զինքն ու յայտնէ խորհուրդը : Ետքը դարձաւ ըսաւ . Պարոն , ալ չես դար հօս . խօսք տուր ինձի՝ այսօր չըլլայ վերջինն որ տեսայ հօրս ազատիչը : Սփինճեր զարմացաւ աս և

դանակ խօսակցութեան վրայ , ու գաղտնի անհանգստութիւն մը ունեցաւ , մտածելով թէ չըլլայ որ նորէն իշխանին հրամանին դէմ այսպիսի դիպուած պատահի :

Մնուրֆ պատասխանեց , թէ ես թոպոլսք կ'երթամ հօրս . ինծի մեծ երջանկութիւն է , եթէ կարենամ ծառայութիւն մը ընել . քեզի . ըսէ կ'աղաչեմ չունիս խնդիր մը իշխանէն : Պատասխանեց Սփինճեր , թէ ոչ ինչ : Ապա հարցուց Ֆէոտորային . ան ալ ըսաւ , թէ ես կը խնդրեմ որ տայ հրաման կիրակիներն երթամ Սախմբա պատարագ տեսնելու աղջրկանս հետ միատեղ : Մնուրֆ խօսք տուաւ , որ կ'առնեմ ձեզի համար աս հրամանը : Ասանկով զատուեցաւ անկէ լիաբերան օրհնութեամբ և աղօթքով : Սակայն Մնուրֆին սիրտն ու երևակայութիւնը Եղիսաբեթին հետն էր . կը զարմանար անոր շնորհալի տեսքին , անոյշ խօսքին և նազելի շարժումներին որ տեսաւ անմեղ կուսին վրայ . սիրտը դրաւ որ ան դաշտին մէջն որ զինքը նախ տեսաւ , չէր դիպուածական ինչ , այլ նախախնամութիւն աստուծոյ . որ մեծ բարեք մը պիտի ելլէ : Միտքը կը վկայէր թէ Եղիսաբեթի սիրտն ալ իր սրտէն շատ հեռու չէր :

Իսկ Սփինճեր մեծապէս տրտմած էր . քանի որ աս սիրական պատանին միտքը կուգար . վասն զի իրենն փափաք կուգար որ աղնիւ զաւակն անոր տայ . բայց իր ողորմելի

Յիճակը ամեն բան իրեն մոռցընել կուտար :  
 Մէկ իրիկուն մը ասանկ թանճր տրամու-  
 թեամբ երբոր կը մաշուէր , Յէոտորա ձգեց  
 ձեռքէն ասեղն ու նայեցաւ թէ ի՞նչ կ'ըլլայ .  
 ազօթք բրաւ որ աստուած սիրտիւնով սիրտը  
 մխիթարէ , ու մոռնալ տայ ան վիշտը : Եղի-  
 սաբեթ մաթ տեղէն տեսնելով աս բանը ,  
 կը խնդրէր ստեղծողէն , որ տայ ան օրն որ  
 ան սյսպիսի սղր և տրամութիւն չունենան :  
 Կը յուսար որ Սմալթիին օգնութեամբն եր-  
 թայ բեթրպուրկ ու զանոնք ազատէ . բայց  
 կը վախնար որ ծնողքը չեն հաճիր , մանա-  
 ւանդ մայրը : Նաև հարկաւոր էր դիտնալ  
 թէ ուստի և ի՞նչ պատճառով սքսորուած  
 էին , և ի՞նչ յանցանքի համար ներում պի-  
 տի խնդրեն կայսերէն :

Եղիսաբեթին աս բարի խորհուրդն այն-  
 չափ զօրացաւ որ միտքը հաստատեց թէ  
 ժամանակն հասած է , պէտք է յայանել  
 սիրտը և իմանալ ծնողաց միտքը . ուստի քա-  
 ղաքավարական ամօթով մտեցաւ հօրը մէկ  
 կողմն ու լուս կեցաւ քիչ մը ժամանակ . կը  
 յուսար որ հայրը պիտի խօսի հետը . բայց  
 տեսաւ որ հայրը իւր մտմտութիւն հեան էր՝  
 ինքն սկսաւ խօսիլ այսպէս . Հայր իմ , ներէ  
 ինձի որ հրամանքիդ խնդիրք մը առաջար-  
 կեմ : Հայրը սիրով ընդունեց իրեն խնդիր-  
 քը . ուստի ըսաւ . Հայր , անցեալ օրն Սմա-  
 լթ պատանին խնդրեց թէ բան մը կ'ուզես .  
 հրամանքդ պատասխանեցիր որ չէ . իրան է

որ բանի մը չես փափաքիր : Հայրը ըսաւ թէ բան մը չեմ ուզեր որ ինքը կարենայ տալու ինծի : Հապա, կրկնեց Եղիսարեթ, ո՞վ կրնայ ուզածդ տալու : Ըսաւ թէ արգարու թիւնը միայն . — Ո՛ր կը գտնուի աս արդարութիւնը . — Ըսաւ՝ երկինքը . աս երկրիս վերայ տեղ մը չգտնուիր :

Եղիսարեթ կրկնեց արիական ձայնով . ո՞վ սիրական ծնողք իմ, լսեցէք ինծի, ահա այսօր տասնըեօթը տարիս լմընցուցի . այսօր է որ աս կեանքս ինծի տուիք՝ որ պիտի ըլլայ ինծի անչափ սիրելի, եթէ կարենամ ձեզի համար զոհելու . աս սիրտս կենդանի պատկեր ըլլալով ստեղծողին երկնից՝ կը սիրէ և կը յարգէ զձեզ, պէտք է ասպաւինի յաստուած, ու ձեր բարեացը տենչայ : Ծնընդենէս ետև կեանքիս ամեն վայրկեանը ձեր բարերարութեամբ նշանակած է, որոնց չեմ կարող երախտագէտ և շնորհակալ ըլլալու . ո՞վ սիրական ծնողք իմ, ներեցէք ձեր զաւկին յանդգնութեանը, որ կը փափաքի բոլոր կենացը մէջ երախտիք մը ընելու ձեզի, որուն դուք անդադար կ'ընէք ծննդենէ՛ի վեր . ո՛հ կ'աղաչեմ, յայտնեցէք ինծի ձեր դժբաղդութեան պատճառը :

Հայրը լսելով աս բանս կանչեց . ինչ կը խնդրես, որդեակ, ըսէ : Կը խնդրեմ, ըսաւ, որ ինծի պատմես ամեն ծածուկդ, որն որ հարկ է ինծի գիտնալ իմ սէրս ձեզի յայտնելու համար . և աս ձեզի ունեցած փափա-



քանացս ինչէն եղածը՝ արդէն աստուծոյ  
յայտնի է :

Աս խօսքս ըսելով ինկաւ հօրն ոտքը՝ աչ-  
քը լաց , երեսն ողորմագին կ'աղաչէր , որուն  
այլայլած կերպարանքն ու կենդանի զգացու-  
ղութիւնը կ'երևցընէին հոգւոյն զխցազնու-  
թիւնն ու սրտին ազնուութիւնը . իսկ խո-  
նարհ շարժմունքը կը յայտնէր աստուածային  
չնորհքն որ ունէր : Սփինճեր զարմացաւ մնաց  
սիրուն զաւկին աս առաքինի համարձակու-  
թեանը վրայ , սիրտը կը ճմլէր գլխով , ոչ  
կրնար խօսիլ , ոչ կրնար լալ . լուռ կեցած էր  
տրամութեամբ . բոլոր զօրութիւնը կորսըն-  
ցուցեր էր խնդճը : իսկ Եղիսաբեթին սիրտը  
անանկ զօրացեր էր որ թագաւորներուն սթը  
չէին կարող վախցընելու :

Սփինճեր որչափ որ շուարած մնաց , Եղի-  
սաբեթ առջիւր ծունկ չսքած էր . մայրը ե-  
կաւ զաւկին քով տեսաւ որ այլայլած է , ու-  
ղեց վերցընելու . բայց աղջիկը մնաց հաս-  
տատ իր խորհրդին վրայ : Ետքը Ֆէոտորա  
ըսաւ Սփինճերին , թէ ինչու չես պատմեր  
մեր ծածուկը մեր զաւկին . չես ցաւիր մատ-  
ղաչ հասակին վրայ . կը վախնաս որ Եղի-  
սաբեթին սիրտը մեզի ցաւակից չըլլար :  
Պատասխանեց այրը . ես չեմ վախնար , թէ  
տկար է ու մեզի ցաւակից չըլլար . այլ . . .  
Սիրտը լեցուելով կարեց խօսքն ու աղաղա-  
կեց . ով ստեղծող աստուած իմ , ներէ ողոր-  
մագին ձայնիս . ես բարիք կը ճանչնայի զա-



նոնք՝ որ առիր ինձ մէ, և ոչ զանոնք՝ որ ինձի համար կը կարգադրէիր: Եղիսաբեթ, դուն այսօր տատուերկու տարուան քաշածներս մոռցուցիր:

Պատասխանեց աղջիկը. Հայր իմ, մի կտակածիր, իմ բերնէս ուրիշ խօսք չելլեր, եթէ ոչ այն՝ որ պիտի պատճառէ երջանկութիւնդ: Պատմէ ինձի, հողիդ սիրես, ինչ է քու անունդ, ուր է հայրենիքդ, և ինչ է դժբաղդութեանդ պատճառը: Իմ դժբաղդութիւնս, ըսաւ, կը հարցընես, չունիմ՝ դժբաղդութիւն. իմ հայրենիքս, ուր տեղ որ քեզ ինձի մօտ կը տեսնեմ՝ հոն է. իսկ իմ անունս է երջանիկ հայր Եղիսաբեթի: Ֆէոտորա խօսքին վրայ գալով ըսաւ. սիրելի զաւակ իմ, քանի մէկ սիրտդ կը մաշես, ինչպէս պիտի մխիթարես հայրդ:

Աս խօսքով յաղթուեցաւ Սփինճերին հաստատութիւնը. առաւ քովը կիներն ու զաւակը, սկսաւ լալով աղաղակել. Աստուած իմ, ներէ իմ ապերախտութեանս. ներէ մի պատուհասեր որչափ որ տրտնջացեր եմ. գիտեմ որ ամեն բան իմ լաւութեանս համար տնօրինեցիր բարերար կամօքդ: Ետքը դարձաւ աղջրկանն ըսաւ. սիրելի զաւակ իմ, ալ չեմ դիմանար, ահա կը պատմեմ քեզի ինչ որ կ'ուզես զխոնալ. բայց քանի մը օր համբերէ, որ քիչ մը ցաւերս մոռնամ և սիրտս հանդարտի. վասն զի այսօր չեմ կրնար պատմելու իմ անբաղդութիւնս: Եղիսաբեթի

հնազանդութիւնը չհամարձակեցուց զինքն որ նորէն ստիպէ . ուստի ակնածութեամբ ելաւ անկէ ու կը սպասէր ժամանակին որ լսէ . բայց պարապ տեղը կը սպասէր . կ'երևնար թէ Սիփինճեր կը վախնար և կը հրաժարէր պատմելու . վասն զի հասկըցաւ որ սիրական զաւկին կեանքը վտանգի մէջ պիտի դնէ իրեն համար . զիտէր սրտին արիւթիւնն որ յանձն պիտի առնէր ան սարսափելի ճամբորդութիւնն ընելու , անոր համար չէր ուզեր պատմել . չէր ուզեր իր ազատութիւնն որ զաւկին վտանգովը միայն կրնար ըլլալու :

Ծնողական սէրն սկսաւ պատերազմիլ զաւկին սիրոյն հետ , այլ կը ջանար որ ամեն դժուարութեանց յաղթէ իր անձին վտանգովը , միայն թէ կարենայ ծնողքն ան թշուառութենէ ազատելու . իսկ անոնք կը ջանային անոր մտքէն աս բանը հեռացընելու , որ մի միայն մխիթարանքն էր իրենց սրտին : Ինչպէս կարելի էր մատաղ կուսին ութ հարիւր փարսախ ճամբայ ընել , քալելով ան սաստիկ ցուրտ օդին մէջ և վայրենի անապատներուն մէջ : Եղիսարեթ սկսաւ ճամբու կրթութիւն ընելու . ամեն օր որչափ ցուրտ բուք ըլլար՝ կ'ելէր կ'երթար , իր զօրութիւնը փորձելով օրէ օր քիչ քիչ առաջ կ'երթար , ետքը կը դառնար տեղը . թէպէտ ծնողքը կը մտնէին վրան , բայց ճար չէր ըլլար իր քաջութեանը յաղթելու :

Պատգամ շրջորդ .

Սիպերիայի ձմեռը յանկարծ փոթորիկ կը հանէ . նայիս երբոր օդը պարզ է , յանկարծակի փոթորիկներ կ'ելլեն հորիզոնին երկու հակառակ կէտէն՝ սարսափելի խառնակելով օդը . կը խորտակեն ծառերը , ձիւնն ու սառը լեռներուն բարձրութեանը վրայ կը պտըտցընեն և կը զարնեն ժայռերուն ծայրին . ինչուան տուն խրճիթ մարդ և անասուն կը յափըշտակեն սոսկալի կերպով : Յունուար ամսուն մէջ առաւօտ մը երբոր Եղիսաբեթ կըրթութեան համար դէպ 'ի փայտաշէն մատուռը կ'երթար , տեսաւ որ փոթորիկ ելաւ . երկինքը մթնեցաւ , հոյն սկսաւ . վազեց արագութեամբ , փոթորիկն իրեն չհասած՝ ինկաւ սուրբ մատուռին մէջ ազատեցաւ . երբոր քամին կը զարնէր մատուռին՝ կարծես թէ հիմը պիտի տապալէ . Եղիսաբեթ խորանին առջևն ընկած կ'ազօթէր . փոթորիկն որոտալով ամեն բան կը սարսեցընէր բաց 'ի սրտէն Եղիսաբեթի . վասն զի գիտէր որ իր կեանքը ծնողացն համար էր , կը յուսար որ աստուած կը պահէ զինքն անոնց համար , ու չէր զինքը կորսընցընէր զանոնք չազատած : Աս ներքին ապահովութիւնը կամ երկնաւոր ձայնը միայն բարեպաշտ սիրտը կրնայ լսելու , ինչպէս էր Եղիսաբեթինը , որ ան շփոթութեան մէջ հանդարտ դրաւ գլուխը խորանին ոտքին ,

ուսկից կ'աղաչէր զաստուած . հանդիստ քնացաւ , ինչպէս անմեղ զաւակ մը ծնողաց գիրկը , և ինչպէս առարկնութիւն աստուածային հաւատքին վրայ :

Աս օրերն Սմբլոֆ պատանին թոպուլքէն դարձեր էր Սախմբա . իր առաջին հոգն էր որ երթայ Սիինճերին խրճիթը , վասն զի հրաման բերեր էր Ֆէոտորային ու դասերը համար որ ազատութեամբ կարենան երթալ ամեն կիրակի Սախմբա պատարագ տեսնելու . վասն զի արքունի հրամանը միայն Սիինճերին համար էր սաստիկ . ուստի իշխանը հրաման տուեր էր Սմբլոֆին որ նորէն տեսնուի հետը , և աս պիտի ըլլար վերջին այցելութիւնը . ինչու որ՝ պատանին երգուընցեր էր հօրն որ միանգամ միայն տեսնուի . ու մեծ արտմութիւն ունէր այսչափ սաստիկ խստութեան վրայ :

Արդ Սմբլոֆ ուրախական կրիւք գնաց խրճիթը , տեսաւ որ Եղիսաբեթ չկայ , պաղեցաւ մնաց , որ չըլլայ թէ խեղճերուն դիպում մը պատահած ըլլայ . բայց երբոր իմացաւ թէ Եղիսաբեթ քալելու գնացեր է , թիչ մը ուշացաւ որ գայ տեսնուի . ահա աս միջոցը վերոյգրեալ փոթորիկն սկսաւ անանկ սաստիկ որ սարսափեցան մնացին . կը հոգային թէ ինչ եղաւ Եղիսաբեթին . մայրը վրշտանալով կը կանչէր , ո՛վ Եղիսաբեթ , ինչ եղաւ արդեօք իմ Եղիսաբեթս :

Վերջապէս Սիինճեր չգիմացաւ , առաւ

դաւազանն որ երթայ նայի թէ խեղճ աղջիկն  
 ինչ եղաւ : Սմբլոֆ մէկէն վազեց դնայ հե-  
 տը : հօֆն անանկ սաստիկ էր որ անտառին  
 ծառերը կտոր կտոր կ'ըլլային ամեն կողմա-  
 նէ : Սփինճեր կ'արգիլէր պատանին որ վտան-  
 գի մէջ չիյնայ . իսկ պատանին կը մխիթարէր  
 բարեկամը : Երկուքն ալ անտառին մէջէն  
 կ'երթային : Սմբլոֆ հարցուց թէ ո՞ր կողմն  
 երթանք . պատասխանեց Սփինճեր , դէպ 'ի  
 մեծ դաշտն երթանք ուր ամեն օր կ'երթար .  
 և յուսամ թէ հոն մատուռին մէջ փախած  
 է : Այսպէս միակերպ արագութեամբ կը  
 վազէին երկուքն ալ իբր երեսի վրայ երթա-  
 լով . վասն զի սոսկալի քամին ծառերուն  
 ճիւղերն ու ձիւնը երեսնին կը զարնէր և  
 ժայռերուն փայլատակունքը վրանին փոթոր-  
 կելով աչուրնին կը շլացընէր : Թէպէտ ան-  
 տառէն ելլելով աս երևոյթններէն ազատե-  
 ցան , բայց քամին անանկ սաստկացաւ որ  
 ինչուան վար կը զլորէր զիրենք :

Վերջապէս շատ մեծ աշխատանքէն ետև  
 հաղիւ հասան մատուռը , ուր կը յուսային  
 որ գտնեն . բայց վախերնուն ոտուրնին ա-  
 ուջ չէր երթար որ ներս մտնեն , չըլլայ թէ  
 հոն չգտնեն . Սմբլոֆ առաջ անցաւ՝ մտաւ  
 տեսաւ որ Եղիսաբեթ աղաւնիի նման խորա-  
 նին առջև անոյշ կը քնանար , ցցուց հօրն ,  
 ու երկուքն ալ զարմանալով ինկան պահա-  
 պան հրեշտակին առաջն ու աղօթք ըրին .  
 շնորհակալ եղան ստեղծողին , որ զինքը պա-

հեր էր ան մեծ վտանգէն . ապա մտեցան նայեցան Եղիսաբեթին շնորհալի երեսն որ անմեղութեամբ կը փայլէր :

Աս միջոցս արթընցաւ Եղիսաբեթ ու վազեց հօրը փաթթուեցաւ ըսելով . սէ գիտէի որ զիս կը հօգօք : Ա՛վ անբաղդ զաւակ իմ , ըսաւ հայրը , ի՛նչ նեղութեան մէջ ձգեցիր զիս ու ցաւալի մայրդ : Պատասխանեց . հայր իմ , ներէ ինձի . երթանք շուտով մօրս արտասուքն ալ սրբենք : Նայեցաւ որ Սմբլոֆ հօրն ետին կեցեր է՝ զարմանալով ըսաւ . իրաւ դուք էք իմ պաշտպանս , բայց ինձի համար ի՛նչ կը հօգօք , զի աստուած վերէն զիս կը հօգօյ . հայրս և դուն ինչո՞ւ աշխատեցաք հասկաք :

Ըսաւ հայրը , թէ դուն կ'ուզես շուտով երթալ մօրդ . բայց մենք հրաշքով հաղիւ կրցանք դալու , դուն ի՛նչպէս պիտի երթաս : Փորձենք ըսաւ . աստուած ինձի ալ բաւական ոյժ տուեր է , որ չես կարծեր : Այսպէս խօսելով կ'երևնար վրան մեծ քաջալերութիւն մը , մինչև հայրը սիրտ առաւ , ելան գլուխը ծածկեցին ու առին աղնիւ աղանին իրենց մէջ սկսան երթալ , որ թեթև և քաջութեամբ երթալով անոնց ալ սիրտ տուաւ , մինչև ոչ վտանգէն և ոչ աշխատանքէն վախցան :

Ան ատենն երկինքն սկսաւ պարզիլ , և փոթորիկը մեղմացաւ : Եղիսաբեթ իր զօրութիւնը յայտնելու համար թողուց զանոնք

ու սկսաւ միայնակ վազել հասնել մօրը , որ երբոր տեսաւ զաւակը , առաւ զիրկնն ու օրհնեց աստուած մեծ շնորհակալութեամբ , և մայրական սիրով կը դգուէր . ապա ամենքը միատեղ նստան : Սմուլֆի կը զարմանար Ֆէոտորային ազնուագութ սիրոյն վրայ , և շնորհալի զաւկին քաղաքաւարութեանը վրայ :

Երբոր իրիկունն եղաւ , Սփինճեր բռնեց Սմուլֆին ձեռքէն ու ցաւագին սրտով նշան տուաւ որ ժամանակ է երթալու : Եղիսաբեթ լսեց որ վերջին գալն էր հոն , ալ հրաման չունէր գալու , ուստի խռովելով աղաղակեց . ինչ ըսաւ , այլ պիտի քեզ չտեսնենք : Պատասխանեց պատանին . կը տեսնուինք աստուծով . ես անպակաս կուգամ Սաիմքա . և հոն եկեղեցին կրնանք տեսնուելու , կամ դուրսը կը հանդիպինք : Ահա այսպիսի տրամութեամբ մեկնեցաւ պատանին գնաց Սաիմքա :

Իսկ երբոր կիրակին եկաւ , Եղիսաբեթ և Ֆէոտորա պատրաստուեցան երթալ եկեղեցին Սաիմքայի : Սփինճեր զիրենք ճամբայ դրաւ , ու գարձաւ տրամութեամբ խըրճիթը . վասն զի առաջին անգամն էր որ միակ մնաց խրճիթը . բայց իր կսկիծն անոնց չիմացուց , այլ օրհնելով յանձնեց զիրենք աստուծոյ , որոնք կ'երթային ու կուլային : Օղը գեղեցիկ ըլլալով ճամբայն կարճ երեցաւ իրենց . գեղացի թաթար ծառայն ալ հե-



տերնին զնաց մինչև զեզը : Երբոր մտան եկեղեցին՝ ամենքը երեսնին կը նայէին . բայց իրենք միայն աստուծոյ կը նայէին . սրտերնին լի բարեպաշտութեամբ , զլուխնին խոնարհած՝ խնդրեցին ստեղծողէն օգնութիւն , մանաւանդ Եղիսաբեթ որ առաջադրեց և ուխտեց աստուծոյ ծնողքն ազատելու համար :

Մինչև հանդիսին ժամանակը քօզը երեսէն չվերուց . միայն աստուած կը խորհէր , և հայրը կը հօգար : Երբոր հօգևոր երգերն սկսան երգել եկեղեցւոյ մէջ , Եղիսաբեթ սաստիկ զգացողութեամբ յափշտակեցաւ . մտքով տեսաւ թէ երկինքը բացուեր է , և աստուած իրեն հրեշտակ մը տուաւ որ առաջնորդէ ճանապարհին : Երբոր երգը դադրեցաւ , աս տեսիլքս ալ դադրեցաւ . Եղիսաբեթ աչքն որ բացաւ , նախ և առաջ տեսաւ Սմոլոֆ պատանին . իրեն անանկ երեցաւ թէ ան էր հրեշտակն որ պիտի օգնէր՝ հայրը ազատելու համար :

Եկեղեցիէն ելլելէն ետև Սմոլոֆ ուզեց որ ինչուան անտառը հետերնին երթայ . զընացին ինչուան լճին մօտ . հոն մնաց Սմոլոֆ . մեծաւ երախտադիտութեամբ զատուեցան անկէ գնացին իրենց խրճիթը . և Սմոլոֆ դարձաւ դէպ ՚ի անտառը . և միտքը յափշտակուեր էր Եղիսաբեթին վրայ . կը զարմանար իւր դեղեցկութեան և շնորհալի շարժուածքին վրայ , կը զմայլէր բարեպաշտ ջերմեռանդութեանը և ծնողասիրու-



Թեանը վրայ, վասն զի չէր տեսած անանկ բան. մանաւանդ որ անտառի մէջ մեծցած դաւակ մը ինչպիսի խոհեմութիւն և կատարելութիւն կը ցուցնէր գործքով:

Եղիսաբեթ առաւօտուն ըստ իւր սովորութեան գնաց քալելու, և հասաւ ինչուան մեծ դաշտին մատուռը. անանկ արագութեամբ կը փորձէր քալելու որ կարենայ անով իր ծնողքն ազատելու: Արեգակը իւր ճառագայթը ձգելով ձինապառ դաշտին վրայ, և բխրաւոր սառոյցներ կախուելով ծառերէն վար, իւր փայլուն երևակայութիւնը և սիրտը կը բացուէր, ու զօրութիւնը կը շատնար՝ ասոնց վրայ նայելով: Երբոր հոն կ'ազօթէր, նայիս Սմոլոֆ հոն հասաւ. ու երբոր տեսաւ աղջիկը՝ աչքն երկինքը ութևերը վեր վերուցած, նորէն զարմանքն աւելցաւ:

Եղիսաբեթ երբոր տեսաւ պատանին՝ մէկէն կանչեց. սով պարոն Սմոլոֆ, աստուած կ'ուզէ քու ձեռքովդ ծնողքս ազատելու. խոստացիր ինձի առաջի աստուծոյ քու օգնութիւնդ: Աս բանս որ լսեց պատանին, խռովեցաւ մնաց. ապա ըսաւ. եթէ աստուած իւր սղորմութիւնը ձեզի պիտի ցուցնէ, ես ինչպէս կրնամ հրաժարելու, հնազանդ եմ բարերար կամացը, ահա կամք առաջի աստուծոյ:

Ան ատենն Եղիսաբեթ սկսաւ այսպէս խօսիլ. Պարոն Սմոլոֆ, ես շատոնց կը փա-

փառքէի հետդ առանձին խօսելու և իմ միտքս  
 քեզի յայտնելու որ աստուած դրաւ, ու քու  
 ձեռքովդ պիտի ըլլայ. ահա աստուծոյ առ-  
 ջնն ենք. գիտէ ստեղծողս որ խելքս միտքս  
 տուեր եմ ծնողքս ազատելու համար. քա-  
 նի որ ես զիս կը ճանչնամ, միայն անոնց վրայ  
 կը մտածեմ, անոնց երջանկութիւնն է բո-  
 լոր կենացս նստատակը: Իմ ծնողքս թշուա-  
 ոութեան մէջ են, աստուած զիս կը կանչէ  
 որ օգնեմ իրենց. զքեզ ալ այսօր հոս բե-  
 րաւ որ ինծի օգնես, ու իմ վիճակս լրացը-  
 նես: Լաւ զիտնաս որ ես պիտի երթամ  
 Բեթրպուրկ ազատութիւն խնդրեմ հօրս  
 համար. ահա աս է իմ կամքս. ինծի կ'երե-  
 նայ թէ աստուած աս վիճակն ինծի որոշեր  
 է իմ կենացս հետ միատեղ. աս գութն ու  
 սէրը ծծեր եմ կաթին հետ մէկտեղ: Ես,  
 պարոն Սմոլոֆ, առջի անգամն որ զքեզ  
 տեսայ, միտքս կաթեց որ օր մը յայտնեմ  
 քեզի և օգնութիւնդ խնդրեմ. բայց այս օ-  
 րուան պահուած էր. ահա աս է իմ խոր-  
 հուրդս՝ թէ ննջեմ, թէ զարթնում. աս է ան  
 որ զիս հոս բերաւ, աս է որ սիրտս շարժեց  
 քու վրադ եղբայրական սիրով որ յայտնեմ  
 աս խորհուրդը. վերջապէս աս է միայն որ  
 կուտայ ինծի քաջալերութիւն, ոչ աշխա-  
 տանքէ, ոչ դժբաղդութենէ և ոչ մահուը-  
 նէ վախնալ. և աս կարծեմ զիս անհնա-  
 զանդ պիտի ընէ ծնողացս թէ որ զիս արդի-  
 լեն երթալու:

Մմուտի պատանին զարմացեր էր աս մա-  
տաղ կուսին այսպէս մեծամեծ բաներ մտա-  
ծելուն համար . ապա ըսաւ . Երանի և հա-  
զար երանի է ինծի եթէ զիս ընտրես քեզ  
օգնական և լսող . բայց դուն չես ճանչնար  
թէ ինչ մեծ գթուարութիւններ կան : Կըրկ-  
նեց աղջիկը . ես երկու գթուարութիւն մի-  
այն կը ճանչնամ . մեծ բան էր եթէ կըր-  
նայիր բառնալ . մէյմը որ ճամբայ չիցտեմ ,  
մեր պիտի երթամ և շունիմ ապահովու-  
թիւն . երկրորդ՝ չըլլայ թէ իմ երթալովս  
մնաս մը դայ հօրս : Ուրեմն պէտք է որ դուն  
ինծի ճամբայ ցըրնես , ինչ քաղաքներէ պի-  
տի անցնիմ , ինչ տներ պիտի իջնամ , և ինչ  
միջոցով պիտի աղերսագիրս կայսեր ներ-  
կայացընեմ :

Պատասխանեց Մմուտի . դիտես Եղիսա-  
բեթ , թէ կայսրն ինչպէս բարկացած է  
հօրդ դէմ , որ մահացու թշնամիի տեղ դրեր  
է : Պատասխան տուաւ , թէ ամենևին չիցտեմ  
թէ ինչ յանցանքով հայրս ամբաստանուեր  
է . ոչ հայրենիքը դիտեմ և ոչ ճշմարիտ ա-  
նունը . բայց ապահով եմ անմեղութեանը  
վրայ : Աղաղակեց պատանին . ինչ , չես գի-  
տեր ծնողացդ վիճակը , չես գիտեր ինչ մե-  
ծութիւն և գերազանցութիւն ունէին աշ-  
խարհիս վրայ : Աղջիկը խօսքը կտրեց , թէ  
ահա աս էր հօրս ծածուկն որ ինծմէ պա-  
հեց . անանկ է նէ պէտք է իրմէն իմանալ և  
ոչ ուրիշէն . և անկէ ետե երթամ աշխատիմ

սիրական ծնողքիս համար, որոնց պարտա-  
կան եմ իմ կեանքս : Կրկնեց պատանին . Ե-  
ղիսաբեթ , կրնան 3500 վերստ անցնելու ,  
որ կ'որոշէ Իսքիմայ շրջանակը Ինկրա դաւա-  
ռէն . և ան ալ ստրով միայն , անտէր անօղ-  
նական : Ազգականց աղջիկը խորանին առջին  
ընկած . զիս խրկող տէրը ծնողացս օգնելու  
համար չիժողուր զիս անտէր :

Մանուֆին սիրտը չգիմացաւ , սկսաւ լալ .  
ապա ըսաւ . աս քու խօսքդ շատ սիրտս շար-  
ժեց . պէտք է որ առաջարկութեանդ վրայ  
մտածեմ . ժամանակս ձմեռն է , ու քիչ ժա-  
մանակէն ետե Սիպերիայի անտառները կը  
խոնաւանան սոսկալի . ուստի ես հիմա կ'եր-  
թամ Թոպուլք , և հօրս կը յայտնեմ . ան  
գթասիրտ բարի մարդ է , ոգորմութիւն մը  
կ'ընէ անբաղդից , ետքը նորէն կը տեսնուինք .  
յուսամ թէ չպատժեր զհայրդ այդպիսի ա-  
ռաքինի գործքի համար , թէ որ կարելի ըլ-  
լայ : Ասկէց ետե իմ հանգստութիւնս և եր-  
ջանկութիւնս կը համարիմ ան օրը երբոր  
ծնողքդ կ'ազատին աս դառն աքսորանքէն ,  
ու կ'երթան կը վայելեն իրենց հայրենիքը .  
բայց , Եղիսաբեթ , յիշէ ան ատենը թէ Ման-  
ուֆ աս անապատին մէջ տեսաւ գքեզ , խօ-  
սեցաւ հետդ սիրով . և իրեն շատ քաղցր  
է ապրիլ ու բարեկամ մնալ ազքատ և իմաս-  
տուն կուսիդ հետ , քան ամեն ճոխութեամբ  
մեծնալ :

Աս բանիս վրայ Եղիսաբեթ տեսաւ որ ժա-

մանակն անցաւ, ելաւ երթալու՝ ամօթիա-  
ծութեամբ ըսելով. ես եկայ հետդ խօսելու  
ծնողացս օգտին համար. շնորհակալ եմ՝ որ  
լսեցիր ինձի, հիմա պէտք է երթամ գտնեմ՝  
դիրենք: Կրկնեց պատանին. ան արնուական  
գուտը, զնա զնա կատարէ առաքլինութեան  
պարտքը. իմ սիրտս պիտի չհեռանայ քեզ-  
մէ, և իմ խորհուրդս միայն պիտի զբաղի  
քեզի օգնելու համար: Ս. ըսելով խոստա-  
ցաւ որ հետեւեալ կիրակին տեսնէ զինքն ե-  
կեղեցնայ դուռն ու պատմէ ամեն հարկաւոր  
դիտելիքն իր ճամբորդութեան համար. ա-  
սանկով զատուեցան իրարմէ: Կիրակի եղաւ  
Եղիսաբեթ մօրը հետ զնաց եկեղեցին Սաիմ-  
քայի. պատարագէն ետեւն համբերութեամբ  
ելաւ, բայց մայրը դեռ կ'աղօթէր. նայեցաւ  
որ Սմնլօֆ չէր եկած, մեծապէս վշտացաւ. և  
այսպիսի արտմութեամբ մօրը հետ տուն դար-  
ձաւ. անհամար վախ ու վտանգ միտքը կու-  
ղային նոյն իրիկունը. Սմնլօֆն ալ չտեսնե-  
լով բոլորովին անհանգիստ եղաւ, ուստի  
չուտով առանձնացաւ իրեն բնակարանն ու  
սկսաւ երկնաւորէն օգնութիւն խնդրել ար-  
տասուօր:

Երբոր անմեղ գաւակը զնաց քովերնէն,  
մայրն սկսաւ ուրիշ մտքի երթալ. դարձաւ  
ըսաւ Սփինճերին. կը տեսնե՞ս Եղիսաբեթի  
սրտին փոփոխութիւնը, որ միշտ կը մտածէ,  
ու Սմնլօֆին հեռանալն իրեն անհանգստու-  
թիւն կը բերէ. այսօր եկեղեցին ալ չաս

հանդիստ չէր . աս ինչ մեծ ցաւ է մեղի :  
Ո՛վ Ստանիսլաւս , կը յիշեմ ան օրերն որ  
իմ զլխէս անցան՝ երբոր երջանիկ հարսդ ե-  
ղայ . անանկ որ երբ քեզի համար ինծի հետ  
կը խօսէին , կ'ամբշնայի ու աչքս միշտ քեզ  
կը փնտրուէր : Ա՛հ ինչ պիտի ըլլայ զաւկիս  
վերջը . ինծի որ երջանկութիւն էր ան բա-  
ները , վախնամ թէ անորն անանկ չըլլայ :

Սփինճեր կանչեց լալով . ինչ երջանկու-  
թիւն է որ քաղցր կեանքդ արտօրանաց դառն  
անապատին մէջ անցուցիր : կրկնեց կինը .  
այս երջանկութիւն է ինծի՝ թէ և արտօրա-  
նաց մէջ մաշիմ . բաւական է որ սիրելեաց  
սիրտը իրարու մօտ գտնուին , ուր որ ըլլան  
նոյն է : Աս խօսքէս ետև նորէն շարունակեց  
առջի խօսքը . վախնամ որ Սմոլոֆ պատա-  
նին աղքատ տեսնելով զաւակս՝ չուղենայ  
առնելու , և իմ ազնիւ զաւակս տրամու-  
թեամբ մեռնի , իւր մայրն ալ հետը : Այս-  
պէս խօսելով խեղճ կուլար . բայց սյրը հաս-  
տատ սրտով մխիթարէր զինքն ըսելով . Սի-  
րելի իմ ֆէոտորա , մի վախնար և մի խռո-  
վիր . Եղիսաբեթ ուրիշ հոգւոյ տէր է , և  
ուրիշ առարկնական վարք ունի , որ պիտի  
յայտնէ գործքովը : Թէ որ մենք կամենանք  
Սմոլոֆին տալու զինքը , ապահով եմ թէ  
չհրաժարիր առնելու մեր ազնիւ կոյսը՝ թէ  
և անապատիս մէջ արտօրած ըլլանք : Սա-  
կայն Եղիսաբեթ պիտի չմնայ անապատիս  
մէջ անծանօթ և ոչ զժբաղղ երկար ատեն .

վասն զի անհնարին է թէ անոր այնչափ առաքինութիւններն առանց սրակի մնան . երբ որ է՝ պէտք է երևնայ անոր փառքը :

Յէտտորա այսպիսի քաջալերական բան լսելով զօրացաւ ու սկսաւ մխիթարուիլ : Իսկ Նղիսաբեթ կը նայէր որ Սմալթի Սախմբա դայ . երկու ամիս ամեն կիրակի եկեղեցին կ'երթար , տեղ մը շտեասա զինքը , սիրտը շատ կոտորած էր , կարծեց թէ խնդիրքը մոռցեր է , և շատ անգամ կուլար : Սպրիլի վերջերը գեղեցիկ արև օրեր եղան , ձիւներն սկսան հալիլ , և լճին աւազուտ կղզիներն երևցան կանաչադեղ . և ջրային եղեգնուտին մէջ տեսակ տեսակ թռչուններէն զատ՝ գետափին քովերն ալ կը թռչըտէին Պարսկաստանի սևակտուց բազեր զլիւրնին բբուկ , ու սուր ձայնով կ'երգէին : Ահա աս բաները Սիպերիայի կանխահաս գարուն մը կ'աւետէին : Իսկ Նղիսաբեթ իր ճամբորդութեանը համար ասանկ յարմար եղանակին կորստեանը հետևանքը դուշակելով որոշեց որ միտքը դրածն առաջ տանի , յաջողութիւնն աստուծոյ յանձնելով :

Ղիսաբեթ կինֆերդրդ .

Մէկ առաւօտ մը Սիինճեր կ'աշխատէր պարտիզին մէջ , Նղիսաբեթ ալ քովը նըստած կը մտածէր . շատ խորունկ մտածելով երևակայեց ճամբուն գժուարութիւնները ,



և թէ ինչպէս յայտնէ իր խորհուրդը ծնողաց . անոնք որ դէմ գան չթողուն զինքը՝ ինչ պատասխան պիտի տայ , և ինչպէս պիտի սիրան ամբողջնէ և անոնց միտքն իրեն գարձընէ : Աս մտածմունքներն իրեն մողցուցին թէ հայրը քովն է . լալով ծնկան վրայ եկած խնդրեց ստեղծողէն զօրութիւն , որ կարենայ քաջութեամբ կատարելու : Սփինճեր երբոր աս լալագին աղաղակը լսեց՝ վազեց եկաւ աղջրկանը քովն ու ըսաւ . Եղիսարեթ , ինչ ունիս և ինչ կ'ուզես . սէ այդ ինչպէս սիրտդ կը մաշես . յայտնէ ինծի՛ ես մաշուիմ : Պատասխանեց աղջիկը . Հայր իմ , այլ մի պահեր զիս հոս . ես պէտք է որ երթամ , ճամբէ զիս , զի աստուած է որ զիս կը կանչէ : Աս խօսքս չմընցած թաթար ծառայն վազելով եկաւ ըսաւ . ահա պարոն Սմուֆ , ահա պարոն Սմուֆ : Եղիսարեթ լսելով ուրախութենէն չզիտցաւ ինչ ընելիքը . բռնեց հօրը ձեռքը դէպ 'ի սիրտը տարաւ ըսելով . կը տեսնես , ահա աստուած է որ զիս կը կանչէ . ինքը կը խրկէ ինծի օգնական , որ ճամբաս բանայ , ստեղծողիս դժուար բան մը չկայ . սով հայր իմ , սիրական հայր իմ , քու երջանիկ դուստրդ պիտի կտարէ շլթայդ ու դըքդ աղատէ : Աս բանս խօսելով գնաց դէպ 'ի տուն . մօրը հետ մէկտեղ ներս մտան , տեսն պատուաւոր մարդ մը յիսուն տարուան , միակերպ հազուստով , նստած էր շատ մարդիկներով . զարմացան մնայլին , վասն



զի այնպիսի բան չէր եղած . Եղիսարեթին սիրտը նորէն կտորեցաւ , գէմբը գեղնեցաւ և ծնկերը կը գողային :

Վերջապէս իմացան որ թոպուրք մայրաքաղաքին կառավարիչ մեծ իշխանն էր և Սմաւոթին հայրը , որ սկսաւ այսպէս խօսիլ Սփինճերին հետ . Պարոն Սփինճեր , արքունական խոհեմութիւնն Ռուսիոյ աքսորեց գրեզ հոս . և մինչև հիմա չկրցայ դալու . ահա առջի անգամն է որ այցելութեան եկայ աս շրջանակիս . քաղցր էր ինծի թէ որ թոյլտուութիւն ըլլար բարեկամութիւնս յայտնելու քու պայծառ անձիդ , և մեծ բազում օրութիւն կը համարէի ինծի . այլ կը ցաւիմ որ ան պարտաւորութիւնը կ'արգիլէ զիս օգնելու և պաշտպանելու քեզի : Պատասխանեց Սփինճեր . ես չեմ ուզեր մարդկային պաշտպանութիւն և ողորմութիւն , և չեմ ապաւինիր անոնց արդարութեանն ու գթութեանը . աղէկ թող ըլլան իրենք , որ զիս հեռացուցին այսչափ իրենց մէ . ես պիտի անցընեմ իմ օրերս աս անապատին մէջ առանց տրտնջման : կրկնեց կառավարիչը . քեզ նման պայծառ մարդու շատ ահա ելի բան է աս ողորմելի անապատիս մէջ կեանքը անցընել :

Սփինճեր այնպէս հանդիստ և տուաքինի սրտով պատասխանեց որ յայտնի ցցուց թէ իր անձը մեծ էր քան իր թշուառութիւնը : Իսկ Եղիսարեթ մօրն ետին կեցած կը զի-

տէր , թէ կառավարչին երեսն ինչ գութ և մարդասիրութիւն կը տեսնէ որ համարձակի սիրան անոր բանալու : կառավարիչ իշխանը տեսնելով Եղիսաբեթին շարժմունքն՝ իմացաւ , ինչպէս որ որդին ալ իրեն պատմեր էր . ըսաւ իրեն . աղնուուհի , որդիս քեզ ճանչցեր է , ինչպէս որ պատմեց ինձի : Պատասխանեց Ֆէօտարա . յիրաւի է , պարօն , զի պարտական է անոր հօրը կեանքն որ ազատեց : Արկնեց իշխանը . տասնկ չէ , տիկին . վասն զի ան ինձի պատմեց թէ Եղիսաբեթ իր կեանքը կ'ուզէ տալ հօրն ու քեզի համար : Աս տայ , ըսաւ Սփինճեր , աս զաւակն է մեր մի միայն բարին որ ունինք . աս բարին միայն մնաց մեզի , որ մարդիկ չկարողացան մեզմէ հանելու :

Ան ատենն իշխանը դարձաւ ըսաւ Եղիսաբեթին . աղնուուհի , երկու ամիս է որ որդիս Սախմբա էր , կայսերէն հրաման առաւ որ երթայ հասնի զօրքին , որոնք կը հաւարին երթալու Լիվոնիա . բայց երթալէն առաջ երդումով խնդրեց ինձմէ , որ քեզ հասցընեմ իր թուղթը . ահա ան թուղթն իմ ձեռքովս կուտամ քեզի :

Եղիսաբեթ ամօթխածութեամբ առաւ թուղթն ու առջևը նայեցաւ . երբոր ծնողքը կը զարմանային աս բանիս վրայ , կանչեց իշխանը . երջանիկ հայր , երջանիկ մայր , որ այսպիսի զաւակ ունիք , որ ձեզմէ ծածուկ ձեր փրկութեանը համար կ'աշխատի : Ետ-

քը Սփինճերին ըսաւ , թէ թագաւորին հրամանը զիս կը պարտաւորէ որ միշտ արգիլեմ , չըլլայ թէ մարդ հանդիպցընես բնակարանդ . սակայն լսեցի որ աղքատ քարոզիչ քահանայներ պիտի դան Չինիմաչինու կողմէն , պէտք է որ աս լեռնէն անցնին . թէ որ դալու ըլլան աս խրճիթն ու խնդրեն դիշեր մը կենալու , հրաման է՝ կրնաս զանոնք պահելու :

Կառավարիչ իշխանն անկէ զատուելէն ետև Եղիսաբեթ վար ծռած կը նայէր թըղթին վրայ , ու չէր համարձակեր առանց ծընողացը հրամանին բանալու . ուստի ծնողքը հրաման տուին որ բանայ կարգայ . թուղթը կարդացածին պէս՝ ընկաւ ծնողացը գիրկն ու լալով աղաղակեց . հասաւ ժամանակը , օգնեցէք առաջարկութեանս . երկնային նախախնամութիւնն ինձի ապահով ճամբայ կը բանայ . ստեղծողս զիս ընդունեց ու օրհնեց իմ մտածութիւնս , ով սիրական ծնողքրս , դուք ինչպէս պիտի չհաւնիք ու չօրհնէք զիս : Սփինճեր միտքն իմանալով խռովեցաւ սիրտը . իսկ Ֆէոտորա ամենեին բան մը չգիտնալով շփոթեցաւ . Եղիսաբեթ , ըսաւ , այդ ինչ խորհուրդ է , և ինչ կայ գրիդ մէջ : Աղջիկը համարձակեցաւ պատասխանելու . ով մայր իմ , ներէ ինձի . կը դողամ խօսելու քու առջևդ . չէս իմանար թէ ինչ կայ . քու ցաւդ սիրտս կը տրորէ , որ է մի միայն իմ արգելքս . ով մայրիկ , թող որ

յայտնեմ հօրս առջին . դուն տեղեակ չես ա-  
նոր պէս . . . կարեց խօսքը Սփինճեր . չէ ,  
դուստր իմ , չէ . մի ընե՛ր առ բանը , որ ոչ  
աքսորանքը և ոչ դժբաղգութիւնը կրցաւ մեզ  
խրարմէ զատելու : Խեղճ մայրը բանն իմա-  
նալով սկսաւ զարհուրելի ձայնով աղաղա-  
կել . սիրական զաւակ , առաքինի դուստրս ,  
խնդրէ ինձմէ իմ կեանքս , և մի խնդրեր  
հրաման մեզմէ հեռանալու . թող ես մեռ-  
նիմ , իմ մահուամբս ձեզմէ զատուիմ , չէ  
կենդանութեամբս : Այսպիսի ողորմելի խօս-  
քերով շատ լացին : Եղիսաբեթ սիրտ առնե-  
լով ըսաւ . մայր իմ , հօրս երջանկութեանը  
համար կը խնդրեմ քիչ մը ժամանակ : կան-  
չեց մայրը . և ոչ օր մը , և ոչ ժամ մը . ինչ  
երջանկութիւն է ան՝ որ կարենայ գնել քու  
հեռաւորութիւնդ . ոչ , ոչ , և ոչ օր մը . սով  
ստեղծող երկնի և երկրի , մի թոյլ տար զայն ,  
որ ինձմէ կը խնդրէ :

Աս խօսքէն Եղիսաբեթին սիրտը կտարե-  
ցաւ . չէր գիտեր ինչ ընէ և ինչ խօսի . ետ-  
քը հանեց թուղթը հօրը տուաւ որ կարգայ :  
Սփինճեր առաւ թուղթն ու քաջալերեց կինն  
որ հանդարտի . ապա սկսաւ ձայնով կարգալ-  
այսպէս . « Ազնուուհի դուստր , ցաւ է ինձի  
որ չկրցայ քեզ տեսնելու և օգնելու առաջ-  
նորդելով թէ ինչ ճամբայ պիտի բռնես . ա-  
հա թագաւորական սաստիկ հրամանը զրկեց  
զիս իմ փափաքէս . զի թողուք հասածիս  
պէս՝ հայրս իմացուց ինձի եկած հրամանն

երթալու հազար փարսախ հեռու ասկէց . որուն հնազանդելով՝ մէկէն ճամբայ կ'ելլ լեմ՝ բայց չիյտես թէ լինչ սէր և գութ հետս կը տանիմ : Ահա ես ամեն բան յայտնեցի հօրս , ու գրեց ալ իրեն ծանուցի . որ երբոր լսեց քու միտքդ՝ սիրտը լեցուեցաւ լացաւ . կարծեմ թէ կ'ուզէ քեզ տեսնելու և մխիթարելու : կարելի է թէ աս տարի կ'երթայ իսրիմա շրջանակն այցելութեան համար , և աս թուղթս կը հասցընէ քեզի : Աղնիւ եղիսարեթ , ես հանգիստ կ'երթամ իմ ճամբաս , որովհետեւ յանձնեցի գրեց իմ հօրս պաշտպանութեանը . բայց կը խնդրեմ որ իմ դառնալէս առաջ ճամբայ չելլես , ես տարիէն ետե կուգամ ու կը տանիմ գրեց Բեթրպուրկ , ու աստուծով ամեն ճամբորդութիւնդ հողալով կայսեր ալ կը ներկայացընեմ գրեց . մի վախնար , ես ոչ միայն բարեկամ եմ , այլ և պիտի ըլլամ եղբայր հարազատ և սիրելի՝ անջնջելի սիրով » :

Աս բարեւարին տակը հայրն ալ ձեռք դընելով հաստատեւր էր քաջալերական խօսքերով . անանկ որ երբոր լմնցուց Սփինճեր կարդալը՝ շատ սիրտ առաւ և զօրացաւ , որ դատերը վրայ այնչափ համարում ունէին , ու կ'ուզէին օգնելու անոր հայրասէր առաքինութեանը : Սակայն մայրը տրտմութեան ծովն ընկղմած՝ միակերպ ազջրկանն երեսը կը նայէր , ու կենար կենար աչքը երկինք կը

վերցընէր : Իսկ Եղիսաբեթ ինկաւ առաջնին ու սկսաւ այսպէս խօսիլ . ո՞վ ծնողք իմ, հրաման տուէք որ խօսիմ ձեր առջին . ես իմ կեանքս դրեր եմ ձեր երջանկութեանը համար . ես պիտի հեռանամ ձեզմէ, որ դուք մօտենաք ձեր քաղցր հայրենեացը . ես տարի մը ձեզմէ զուրկ պիտի մնամ, դուք ձեր կեանքը հայրենեացը մէջ պիտի անցընէք ինչպէս կը յուսամ ստեղծողիս օգնութեամբը և կարողութեամբը, որ օգնական է անբաղդից և յուսացողաց . սէ, թէ որ ասկէ աւելի բան մը խնդրեմ ձեզմէ, մի կատարէք : Սփինձեր ձեռքը դրաւ աղջկանը գլխուն՝ լուռ կեցաւ : Մայրը աղաղակեց . միայն, ոտքսով, անօգնական . ինչպէս ըլլալու բան է . ոչ ոչ, անկարելի է որ քեզմէ դատուիմ : Պատասխանեց Եղիսաբեթ . դիտնայիր թէ ես որչափ ժամանակէ՛ ի վեր է որ աս առաջադրութիւնս ըրեր եմ . երբոր ձեր դժբաղդութիւնը հասկըցայ՝ անկէ՛ ի վեր է . ես զիս ձեզի զոհ եմ ըրեր . երջանիկ է ինձի ան օրն որ ձեր ազատութեան համար պիտի անցընեմ . երջանիկ է ան յոյսն որ զիս զօրացուց . եթէ աս յոյսը կ'ուզէք վերցընել ինձմէ, նախ իմ կեանքս վերցուցէք . եթէ պիտի մնամ այսպէս առանց օգնելու ձեր անբաղդութեանը, թող մի՞նէ իմ լոյսս և վերնայ իմ արևս : Սղաչեմ ներքեցէք եթէ ձեզ կը վշտացընեմ . ինչո՞ւ համար կ'ուզէք որ ձեզմէ չդատուիմ, երբոր ամենքնիս ալ

նոյն անբաղդութեան մէջն ենք . թողէք երթամ . բաց է ողորմածիս դուռը , չկորսընցըներ իմ յոյս , իմ ջանքս , իմ տառապանքս ձեր ազատութեան համար : Մի բռնք թէ աս բանս անկարելի է . չկայ աշխարհիս մէջ անկարելի բան , եթէ աշխատի մարդ՝ կը վայելէ . սիրտս ձեզի կը պատասխանէ , որ այսքան զօրացեր է արդարութեան համար . չունի վախ ոչ աշխատանքէ , ոչ վտանդէ , ոչ նախատինքէ և ոչ թագաւորէն . ուրիշ տեղէ ահ չունի , միայն ձեզմէ՝ որ չըլլայ թէ չհաւանիք :

Միիններ չդիմացաւ կանչեց . թող եղիտարեթ , բաւական է . խոովեցիր հողիս , մաշեցիր սիրտս , որ մինչև ցայսօր գերազանց առաքինութեանց և մեծամեծ գործոց համար քաջ էր . ահա այսօր թուլացաւ . ես չէի կարծեր զիս այսչափ տկար . ահա տկարացայ , չեմ կարող հաւանիլ առաջարկութեանդ , որ կը խնդրես : Երբօր Ֆէօտորա լսեց աս խօսքս , սիրտ առաւ , բռնեց աղջկանը ձեռքը , դէպ 'ի սիրտը տանելով ըսաւ . լէ ինձի , եղիտարեթ , ողորմէ ողորմելոյս . թէ որ հայրդ տկարացաւ առջևդ , պէտք է որ ներես մօրդ տկարութեանը որ չկրնար թուլ քեզի դիւցազնական առաքինութիւնդ գործելու . թէպէտ մայր մը իր զաւկին առաքինութիւնը պակսեցընելը լսուած բան չէ , բայց կը խնդրեմ , չէ թէ կը հրամայեմ , ով սիրուն զաւակս :



Երկնեց Եղիսարեթ . մայր իմ, քու խըն-  
 դիրքդ միշտ արդար է . թէ որ հրամայես  
 ինձի հոս կենալ չիրթալ, պէտք է որ հնա-  
 ղանդ իմ . բայց ես կ'աղաչեմ, թողէք զիս որ  
 ձեզի ցաւակցիմ, ձեր ազատութիւնը հոգամ .  
 իմ յոյսս հաստատուն է, վասն զի մէկ օ-  
 րուան մտածութիւն չէ, այլ շատ ժամանա-  
 կուան . ես իմ տկար զօրութեանս չեմ ա-  
 պաւինած, այլ աստուածային ողորմութեան .  
 կայ ուրիշ առիթ ազատելու հայրս ասկէ 'ի  
 զատ : Ահա տասուերկու տարի է հոս ընկեր  
 ենք, որ բարեկամն օգնեց և պաշտպանեց  
 մեզի . որչափ մեծ բարեկամ ըլլայ, կրնայ  
 համարձակ խօսելու մեզի պէս . կը հոգայ  
 սրտանց մեզի պէս : Թողէք կ'աղաչեմ, որ  
 յոյսս ամուր մնայ . մի դէմ կենաք աս սըր-  
 տիս առաքինութեանն, որ աստուած դրաւ  
 միտքս գործելու, և պատրաստ է օգնելու և  
 կատարելու : Ո՛ր թողունք այն, թէ որ զիս  
 մարդու տայիք, չէր կրնար զիս ձեզմէ զա-  
 տելու . ինչ պիտի ընէիք ան ժամանակը .  
 միթէ վտանգ չէր կրնար գալու : Ես հիմա  
 սորված եմ աս ցրտերուն ու կը զխմանամ  
 հեռու ճամբայ քալելու թեթեւութեամբ .  
 իմ մանկութենէս կը վախնաք . կարող է աս-  
 տուած օգնելու անոր՝ որ իրեն միայն ապաս-  
 տաներ է և ոչ զօրութեան անձին : Իրաւ  
 անփորձ եմ, բայց բարեգութ կառավարիչն  
 որ կ'ուզէ օգնել առաջարկութեանս, ինձի  
 կը սորվեցընէ . որ եթէ ներէ ազբատ քարո-

դիչնեբուն , ահա զանոնք կուտայ ինծի ա-  
ռաջնորդ և սրաշտպան : Ահա կը տեսնէք որ  
աստուած նախատեսութեամբ կը հողայ ա-  
մեն բանս , չկայ վտանգ և ոչ դժուարութիւն .  
ուրիշ պակասութիւն չունիմ՝ եթէ ոչ ձեր  
հաւանութիւնն ու օրհնութիւնը :

Հայրը սաստիկ վշտանալով ազազակեց .  
սով խոնարհ զաւակ , քու նախնիքդ թագ ու-  
նէին լեհաստանաւ մէջ , և մօրդ նախնիքը  
մինչև Սիպերիա կը տիրէին . դուն ինչպէս  
պիտի մուրանալով երթաս մինչև Բելթըր-  
պուրկ : Պատասխանեց համեստութեամբ  
Եղիսարեթ . եթէ ես թագաւորական զար-  
մէ եկած եմ , պէտք է որ գործքովս յայտ-  
նեմ զիս արժանի անոնց ու ձեզի . և չպըզ-  
տիկցնեմ անոնց փառաւոր անունն որ ինծի  
թողին . ինչո՞ւ համար պիտի ամչնայ դուստրն  
Սէյասի և Սոպիէսքիոյ (\*) երթալ ողորմու-  
թիւն խնդրել իրեն նմաններէն : Այլսար-  
հիս շատ մեծամեծներն ինկան կործանե-  
ցան , որոնք իրենց համար պատիւ ստացան .  
ես աւելի երջանիկ ըլլալով հօրս համար պի-  
տի ստանամ :

Աս մանուկ կուսին ազնուական հաստա-  
տութենէն կը փայլէր աչքին մէջ աստուա-

(\*) Սյուպէս է՛անուանին ազնուան Ռաբար-  
նէրն որ Սիպերիայի նախնի արքայորդիներէն է-  
կած էն :

Ճափայլ գերազանցութիւն մը , և խոնարհ  
հնազանդութիւնն ու քաջութիւնը յաղթե-  
ցին Սփինճերայ . մինչև խիղճ եզաւ իրեն  
թէ ինչպէս արդիւէ զաւակն ան մեծ առա-  
քինութենէն , և ողորմելի պահել ան ա-  
նապատին մէջ : Ետքը դարձաւ ըսաւ Ֆէո-  
տորային . ինչպէս թողունք Եղիսաբեթն որ  
հոս մեռնի . ինչպէս զրկենք զինքը յաջողու-  
թիւններէն , որ աստուած կուտայ իրեն ազ-  
նուութեանը համեմատ : Սիրա ան , սիրելի .  
վասն զի ուրիշ բանով չենք կրնար մեր ա-  
ռաքինի զաւակը փառաւորելու , թողունք որ  
երթայ :

Ազազակեց Ֆէոտորա ողորմելի ձայնով .  
ոչ ոչ , ես չեմ թողուր որ երթայ , կրնամ  
դէմ կենալու . ինչպէս թողում մէկհատիկ  
զաւկիս կեանքը որ վտանգի մէջ կ'ընայ . ինչ-  
պէս թողում ու լեմ' օր մը թէ կորաւ Եղի-  
սաբեթ , պազեցաւ սոսկալի անապատին  
մէջ . ու Ստանիսլաւս , ինչպէս անմեղ դառ-  
նուկս զոհ ընենք մեզի համար , մատնենք  
դժբաղդութեանց և մահու :

Երբոր այսպէս կը խօսէր , Սփինճեր յու-  
սահատելով կ'անչեց . դուստր իմ , մինչև որ  
մայրդ չհաճի , դուն կարող չես երթալու :  
Եղիսաբեթ դարձուց խօսքը . մայր իմ , ը-  
սաւ , եթէ դուն հրաման չտաս , չեմ եր-  
թար . ես հնազանդ եմ քեզ միշտ . բայց  
կարելի է թէ աստուած ինքը պիտի կատա-  
րէ . խնդրենք մայր իմ միաբան , որ իւր բա-

ըրբար կամբը մեզի յայտնէ և յաջողէ ինչ որ պարտական ենք ընելու . ամեն յաջողութիւն և ճշմարտութիւն միայն անկէ կուգայ որ աշխարհս կը խնամէ : Առաքինի զբատեր աս բարեպաշտ խօսքերը մեղմացուցին Ֆէոտորային ցաւը , քաջալերեցին ու հանդարտեցին ցաւած սիրար :

Հետեւեալ օրն անանկ պատահեցաւ որ Սփինճեր ու աղջիկը մինակ դտնուեցան . սկսաւ աղջկանը պատմել իր զլխէն անցած խեղճութիւններն ու ձախորդ պատերազմներն որ Լեհաստան բաժնեցին : Ապա ըսաւ . իմ դժբաղդութիւնս՝ հայրենիքս աւելի սիրելուս համար պատահեցաւ , իմ միակ յանցանքս է իմ հայրենիքս սիրելը և չղիմանալ անոր գերութեանը . իմ արիւնէս մեծ թագաւորներ նստան , անոր համար պարտաւորեցայ պաշտպանելու մեր տէրութիւնը , ուսկից առեր էի այնչափ պատիւ . գլուխ եղայ ազնուական Լեհերուն , և պաշտպանեցի հայրենիքս՝ որուն պարտական էի : Ես էի որ կը կուուէի երեք մեծամեծ աէրութեանց զէմ , երբոր եկան բաղմութեամբ պաշարեցին վարսավիա մայրաքաղաքը . մէկ զիէն կրակ , մէկալ զիէն յափշտակութիւն . ես տակաւին զէմ կեցեր էի , որ հայրենիքս չկործանի . ևս էի զօրացընողն ու զէնք և օգնութիւն խնդրողը :

Անօգուտ եղաւ իմ ջանքս . իմ երկիրներս անցան Ռուսաստանու աէրութեան , ուր կը

բնակէի. բայց սաստիկ հայրենասիրութեանս համար կասկածելի եղայ մեծ կայսերութեան առջին: Յր մը զիս անէս դուրս հանեցին ու տարին Բեթրազուրկ բանտը դրին. ան առենը դուն չորս տարուան էիր: Յէստորտ մայրդ հետս եկաւ, որ մեծ խնդիրքներով շնորհեցաւ իրեն աս թոյլտուութիւնը: Տարի մը ողորմելի մնացի. չէի կարծեր թէ զիս այսպիսի սոսկալի պատժոյ արժանի կը համարին, որ հայրենիքս ուղեցի պաշտպանելու, թէպէտ խօստացեր էի ետքը՝ տէրութեան հպատակ մնալ: Վերջապէս արստուեցայ Սիպերիա. իմ առաքինի Յէստորտաս չթողուց զիս մինակ, հետս եկաւ. աւելի լսող եղաւ սրտին քան թէ պարտականութեանը. անանկ որ եթէ արստուէի Պերսզովայ զարհուրելի խաւարը, և Պայքալ լճին կամ Բամիլեաքայ միայնարանը, զիս մինակ չէր թողուր. ահա այսչափ է անոր դիւցազնական առաքինութիւնն ու սէրը. եթէ քաղցրութիւն մը տեսնես վրանիս՝ մնորդ է, իսկ եթէ դառնութիւն՝ իմս է:

Այսպէս խօսելով Սիինճեր՝ հաննց Սմալաֆին թուզթը առաւ Եղիսաբեթին ըսելով. դուստր իմ, ես պարտական եղայ քու սիրոյդ և քու քաջութեանդ. աս թուզթը քեզ կը կոչէ մեր բարերարը, և յիշատակ ըլլայ առաքինի սրտիդ երախտաւորութեանը: Ազնիւ զուակը խոնարհութեամբ առաւ թուզթն ու լռեց. անկէ ետեւ ալ չէր

խօսեր երթալու վրայ . բայց մերը սիրան ա-  
մեննին հանդիսա չէր , ու միշտ տրամու-  
թեամբ կը մաշուէր :

ՊԵՂՈՒՄԻ ԷՅԵՐԻՐԴ .

Ժամանակ անցաւ , նայիս կիրակի իրի-  
կուն մը Ֆէոտորա մինակ նստած էր տունը ,  
զաւազանով զարկին դուռը՝ բացաւ տեսաւ  
որ ծեր ճերմակ մօրուք միախոնար մը կայ-  
ներ է . խեղճ Ֆէոտորային սիրաբ ճմլեւով ա-  
զազակեց . ս՛հ աստուած իմ՛ , չըլլայ թէ աս  
ըլլայ որ եկաւ զիս զակէս զրկելու համար .  
ուստի ինկաւ երեսի վրայ կուլար , բայց մի-  
սիոնարը մտաւ ներս բոլորովին հոգնած ,  
թէպէտ անանկ փորձ և հոգևոր անձն էր  
որ երեսէն շնորհը կը կաթէր , ու իր շարժ-  
մունքէն յայտնի կ'երևնար թէ այր աստու-  
ծոյ է , և բոլոր աշխատանքն աստուծոյ ըն-  
ծայած և աստուծով մխիթարուած , ուրախ  
և պայծառ :

Մփինճեր հասաւ և խոնարհութեամբ  
ընդունեց իրր սուրբ աստուծոյ : Միախոնարն  
սկսաւ այսպէս խօսիլ . Պարոն , մեծ ուրա-  
խութեամբ կը մանեմ՝ տունդ . զի կը տես-  
նեմ ազքատ խրճիթիդ վրայ աստուածային  
օրհնութիւն . հոս եղած հարստութիւնն է  
առաքինութիւն որ ոսկիէն ու մարգրրտէն  
աւելի յարգոյ է . իսկ ես եկայ հոս որ մէկ  
զիշերուան հանգստութիւն խնդրեմ՝ քեզ-

մէ : Եղիսաբեթ վազեց ակթու դրաւ որ նըստի , յետոյ ըսաւ պարկեշտութեամբ . Հայր սուրբ , շատ քաղեր ես առաքինութեան ճամբուն մէջ , և առաջին աստիճանէն շատ հեռու թողեր ես զմեզ , զի երկար միջոց կայ հասնելու քեզ : Միսիոնարը տեսաւ որ Ֆէոտորա տրտում կուլայ , դարձաւ ըսաւ . մայր բարեպաշտ , ինչո՞ւ կուլաս : Պատասխանեց Ֆէոտորա . ինչպէս չլամ , մէկ հատիկ զաւակ՝ մէկ հատիկ մխիթարութիւն ունիմ աշխարհիս վրան , անկէց ալ կ'ուզեն զատել զիս :

Միսիոնարը հասկընալով բանը՝ մխիթարական խօսքերով ըսաւ . մի տրտմիր տիկին , վասն զի առաքինութիւնն է միայն որ կ'որոշէ զաւակդ քեզմէ քիչ մը ժամանակ . ուրիշ մայրերն ինչ ընեն որ ախտի պատճառով կը բաժնուին զաւակներէն և յաւիտեան կը կորսնցընեն : Յաւալի ձայնով աղաղակեց Ֆէոտորա . վախեմ թէ ալ պիտի չտեսնեմ զաւակս : կը տեսնես զաւակդ , ըսաւ ծերը , թէ հոս և թէ երկինքը . իրաւ մեծ է աշխատանքը , բայց աստուած կը զօրացընէ , որ դառներուն բրդին փափկութեանը նայելով հովը կը մեղմացընէ :

Սրբակաց ծերն այնչափ հօգևոր բան խօսեցաւ , մինչև ամենուն ալ սիրաբը զօրացաւ . կամեցան որ Եղիսաբեթ երթայ իրեն հետ . սակայն Եղիսաբեթին սիրան սկսաւ ճմլիլ , կը մտածէր որ ինչպէս պիտի զատուի ծնո-



դացմէն : Որովհետև ժամանակը հասաւ սիրտը շարժեցաւ, վաղը պիտի չլսեմ կ'ըսէր՝ հօրս ձայնը . մինչև տարի մը մօրս զգուանքը պիտի չտեսնեմ . այնչափ ժամանակ ինչպէս պիտի զուրկ մնամ այս քաղցր ուրախութենէս : Սիրտը խռոված, աչքը ցաւագին, ամեն բան խաւար կ'երևնար իրեն, իբր թէ անգունդ մը բացուած էր առջին : Կ'ըսէր ինքնիրեն . ահ վախկոտ ողորմելի, ահա առջի քայլդ չառած վար կ'իյնաս անյենարան որթի պէս . հապա ինչպէս պիտի անցնիս աշխարհիս մէկ մասը :

Ասանկ տրամալի խորհուրդներով սեղան դրին միախոնարին, նստան իրիկուան կերակուրն ուտելու . բայց իրենք միայն իրենց արտասուքով կշտացան, թէպէտ դրսէն զիրենք կը բռնէին որ չլան : Բարեսիրտ կրօնաւորը կը դիտէր զանոնք զթալիր ցաւակցութեամբ : Աս քահանայն երկար ճամբորդութեամբ աշխատեք էր, ու անհամար բան եկած էր զլիսուն . իր առջի ուսումն էր ամեն վիշտ քաղցրացընել համբերութեամբ, ամեն մէկ ձախորդութեան դտեր էր մխիթարութեան ճարը . ուստի ան իրիկուն ամեն մէկ խօսակցութեան անոյշ խօսք մը յարմարցընելով սրտերնին կ'անուշցընէր . երբեմն ալ թող կուտար որ լային : Պատմեց անոնց իր զրգրազդ ճամբորդութիւններն ու տեսած խեղճութիւններն որ զլխէն անցեր էին . և այնչափ ձախորդ գիպուածներ պատմեց որ ոչ

միայն մխիթարեց զանոնք , այլ և ցաւակից եղան ան խեղճերուն , որոնց քաշածը իրենց ունեցածէն շատ վեր էր :

Աս յարդելի անձը վաթսուն տարուրնէ ետև երկու հազար փարսախս աշխարհիս ծայրն երթալով՝ բարբարոս և մարդակեր մարդկանց հետ երկար կենակցեցաւ զանոնք շահելու համար , ու չլսուած հալածանքներ քաշեր էր , և ամենքն իրեն դահիճն էին : Մտեր էր թագաւորական քաղաքը փէքին , և զարմացեր էին անոր առաքինութեանը վրայ . իսկ մարդակերներուն աշխարհը շատ մարդ գարձուցեր էր , և սորվեցուցեր էր երկրագործութիւն և քաղաքականութիւն . իրենց անբեր դաշտերը՝ ազարակ և պարտէզ եղան , գեղ ու քաղաք դարձան . ունեցան տոհմի անուան , զաւկի և փեսայի . և որ մեծն է , ճանչցեր էին աստուած , իմացեր էին թէ մարդ են և ունին տէր և արարիչ :

Ահա աս ամեն բանն ան սրբակայ քահանային աշխատանքովն եղած էր . կ'օրհնէին ան մարդիկը միշտ ան քահանայն . գիտէին սուրբ կրօնքի՝ յարգութիւնը , և շատ զբժուարութեամբ զինքը թողեր էին որ երթայ . վասն զի հրաման եկեր էր իր մեծաւորէն որ երթայ Սպանիա իր հայրենիքը հանդի , որովհետև շատ ծերացած էր : Պէտք էր որ անցնի Ռուսիա , Գերմանիա և Գաղղիա . ասոր անունն էր Հայր Պօղոս : Բոլոր պատմածներն հիանալու բաներ էին .

ղարմանալի սովորութիւններ, ահռելի աղ-  
ղեր, սոսկալի դիպուածներ, մանաւանդ ա-  
նապասնեբուն մէջ, Չինու մաշինի պարսպին  
կողմերը, ուսկից անցաւ ու մտաւ մեծ թա-  
թարստան և Սիպերիայի սահմանը :

Աս յարդելի քահանային համար պատ-  
րաստեցին պղտի խուցը, հանգիստ տեղ մը  
պառկելու, արջու մարթերով անկողին շի-  
նեցին, և ինքը զանոնք օրհնելով գնաց պառ-  
կեցաւ : Առաւօտուն Եղիսաբեթ կանուխ  
ելաւ, մտաբցաւ քահանային դրանը, լսեց որ  
կ'աղօթէ և խնդրեց հրաման որ ներս մտնէ՝  
առանձին խօսի հետը, զի ծնողացն առջև  
չէր համարձակեր խօսելու. ուստի ծունկ չո-  
քած պատմեց իւր բոլոր պատմութիւնն ու  
խորհուրդը : Երբոր Հայրն Պօղոս լսեց Ե-  
ղիսաբեթին ցաւալի պատմութիւնը՝ շատ  
սիրաւր ցաւեցաւ վրան. զի թէպէտ շատ բան  
տեսեր էր և աշխարհիս մէկ ծայրէն մէկալ  
ծայրը ժուռ եկեր էր, բայց Եղիսաբեթին  
սրտին նման գթած ծնողասէր սիրտ չէր տե-  
սած :

Սփինճեր և Ֆէոտորա չէին գիտեր Եղի-  
սաբեթի գիտաւորութիւնը թէ միւս օրը  
կ'ուզէ ճամբայ ելլել. երբոր առաւօտուն  
զրկեց զիրենք ու սկսաւ լալ ողորմագին՝ ի-  
մացան և խռովեցան, իբր թէ մէկ մեծ փո-  
թորիկ մը ելաւ իրենց խրճիթին մէջ. թո-  
ղին իրենց ամեն բանն ու աղջրկանն երեսը  
կը նայէին. ուր նայէր՝ հոն կը նայէին, ուր

քաղէր՝ հոն կ'երթային . իսկ Եղիսարեթ չկոտէր թէ զինքը հողայ, թէ զանոնք . մայրը գրկելով զաւակը՝ կ'ապսպրէր . որ տանը բաները նայի, հրաման կուտար որ երթայ հօրը հետ մէկտեղ ձուկ որսալու . իսկ աղջիկը ձայն չէր հաներ, միայն արտասուք թափելով կուլար :

Հայրը դարձաւ ըսաւ . Գուստր իմ, հընազանդէ մօրդ, վազն եկուր հետս երթանք ձուկ որսալու : Աղջիկը գլուխը խոնարհեցուց հօրն ու ըսաւ . վաղը պէտք է որ մխիթարես մայրս : Աս խօսքէս նորէն այլայլեցաւ հօրը սիրտն ու զանազան կրքերով կը տրորուէր . կը մտածէր զաւկին սէրն որ պիտի զատուէր . կը մտածէր կնոջը կսկիծը թէ ինչպէս պիտի մխիթարէր . թէ որ թողուր երթալու, զիտէր որ անոր առաքինական գործքը պարապ չելներ . աստուած կը վարձատրէ, ու փափաքը կը կատարէ, և հոս մընալով ինչ պիտի ըլլան :

Ան օրը շատ ողորմելի տեսարան եղաւ հոն . ամենուն ալ սիրտը տակնուվրայ եղած էր . ծնողացն ու զաւկին մէջ կ'երևնար չես գիտեր ինչ սաստիկ զգածմունք մը, վառվռուն գորովանք ու զգուանք մը : Քարոզիչ քահանայն կը ջանար որ զօրացնելով մխիթարէ զանոնք, զանազան պատմութիւններ կը բերէր աստուածաշնչէն, թէ աստուած ինչպէս հատուցմունք կ'ընէ այսպիսի որդիական բարեպաշտութենէ և հայրական հա-

մակերպութենէ եղած մեծամեծ զոհերուն .  
և թէ կարող էր նոյն ամենակարող զօրու-  
թիւնն իրենց ալ օգնելու՝ հանգիստ հասցը-  
նելով զաւակնին ուղած տեղը , և անկէ եր-  
ջանկութեամբ դարձընել : Շատ հողեշահ  
խրատներէն ետև՝ իրիկուն որ եղաւ , Եղի-  
սաբեթ ծնկան վրայ եկաւ ու ողորմելի ձայ-  
նով խնդրեց ծնողքէն որ ղինքն օրհնեն :  
Հայրն իմացաւ որ կեցիք բարով կ'ուզէր ը-  
նել , արտասուալի աչքով մօտեցաւ զաւակին ,  
զրկեց լացաւ , ձեռքը դրաւ ղխուն , ու յանձ-  
նեց աստուծոյ :

Իսկ շնորհալի զաւակը գորովական ղթով  
նայեցաւ մօրն ու ըսաւ . Սիրական մայր իմ ,  
քաղցրիկ մայր իմ , դուն ալ չես ուզէր զա-  
ւակդ օրհնելու : Աղաղակեց խեղճ մայրը .  
հողեսէր զաւակս , մէկհատիկ զաւակս , վա-  
ղուան թող մնայ : Կրկնեց . ինչո՞ւ այսօր չես  
ուզեր : Կ'ուզեմ , ըսաւ , ամեն օր օրհնելու .  
ամեն ժամանակ օրհնած ես : Եղիսաբեթ  
ծուեց զլուխը ծնողացն առջին . աչքն երկինք  
վերուցած ու ձեռք ձեռքի բերած : Միսիո-  
նարը խաչը ձեռքը օրհնեց զամենքն ալ , և  
քաջալերական խօսքով մխիթարեց , ու հաս-  
կըցուց թէ ինչ պէտք է ընեն և ինչպէս զա-  
ւակնին տան աստուծոյ , որ երթայ իրենց ա-  
ղատութեանը համար աշխատի :

Ժամանակն էր մայիսի մէջ , ուր հազիւ  
երկու ժամ ղիշեր կ'ըլլար . Եղիսաբեթ սկը-  
սու ճամբու պատրաստութիւն տեսնել՝ քիչ

մի ուտելու պաշար, հագուստ և այլն. նոյն իրիկունն ամեն բան պատրաստելէն ետև առաւօտուն կանուխ գնաց դուռը Հայր Պօղոս միսիոնարին ըսելով. ժամանակ է երթալու. ծնողքս կը քնանան, մենք ճամբայ ելլենք, որ լալով և կսկըծով չմնասին: Որովհետև իրիկունէ հաւանութիւն ու օրհնութիւն առեր էր, չէր ուզեր ծնողայր սիրտը նորէն բորբոքելու, բայց չօրհնաւ ծնողայր դրանն առջին ու աղաղակեց. Ո՛վ աստուած իմ, դուն հոգա զասոնք, պահէ ու ամեն փորձանքներէ ազատէ. արժանի ըրէ որ նորէն տեսնեմ ծնողքս և ուրախանամ: Աս միջոցին հայրն ելաւ դուրս: Հայր իմ, ըստ, ինչո՞ւ ելար: Նա պատասխանեց. քեզ սիրելու, քեզ օրհնելու ելայ, ով ազնիւ սիրական զաւակ. թէ որ մանկութեանդ ժամանակ եղած ըլլայ որ իմ դուժս քեզի չեմ ցցուցած, կամ թէ ծանր խօսքով եթէ սիրտդ ցաւցուցեր եմ, ներէ ինձի զաւակս. կարելի է թէ ինձի չէ սահմանած որ երջանկութեամբ նորէն քեզ տեսնեմ, գէթ խաղաղութեամբ մեռնիմ:

Նշխարելի սիրտը ճմլեցաւ, կանչեց լալողին. մի ըսեր աղաչեմ, մի ըսեր ասանկ բան. ես քեզի պարտական եմ, դուն ինձի ներէ: Կրկնեց հայրը. երբոր ողորմելի մայրդ ելլէ՝ ինչ ըսեմ իրեն և ինչ պատասխան տամ. երբոր հարցնէ սիրական զաւակը, դայ փնտրուէ անտառին մէջ, և աս լճին քով:



ես ալ իրեն հետ ամեն տեղ խնդրենք լիըն-  
արունք, հարցընենք մեր ազնիւ զաւակը,  
ո՞վ մեզի պատասխան պիտի տայ: Եղիսա-  
բեթ ասոնք լսելով սաստիկ տրտմութենէն  
թալկացաւ մնաց պատին կռթընած: Հայրը  
տեսաւ որ աղջիկը կը մտշուի՝ սիրտը զօրա-  
ցուց, սկսաւ քաջալերական խօսքերով ը-  
սել. զօրացիր դուստր իմ, որ ես ալ քաջա-  
լերութիւն ունենամ. մի հոգար, ես կը մխի-  
թարեմ մայրդ և կը զօրացընեմ, որչափ որ  
տրտմած ըլլայ երթալուդ համար. նաև կը  
յուսամ աստուծով որ ներկայացընեմ քեզ  
մօրդ երբոր առողջութեամբ դառնաս գաս.  
յիրաւի, զաւակս, կրնայ ըլլալ որ քու բա-  
րեպաշտական ճամբորդութիւնդ պսակուի,  
կամ ոչ. բայց ծնողքդ պիտի չմեռնին ա-  
ռանց քեզ տեսնելու: Ան ատենը դարձաւ  
ըսաւ միսիօնարին, որ խորին մտածութեամբ  
կը զիտէր ասոնց ողորմելի կերպը. Ո՞վ հայր  
իմ, ահա կը յանձնեմ քեզի իմ բարի զա-  
ւակս. մէկ զանձ մը, որուն չկայ հաւասար  
բան. զի աւելի է քան իմ արեւս, իմ արիւնս  
և իմ սիրտս. կը յանձնեմ քեզ ապահովու-  
թեամբ, առ տար, գնա հետը. բիւրաւոր  
հրեշտակներ հետերնիդ ըլլան ու ձեզ պաշտ-  
պանեն. երկնային զօրքը ձեզի օգնական ըլ-  
լան, և ողորմած ձեռքն ստեղծողին չկորսըն-  
ցընէ իմ Եղիսաբեթս:

Ամբիծ աղաւնիին աս հօրն օրհնեհըն առ-  
նելով մէկ ձեռքն աչքին դրաւ ու սկսաւ լալ,

Գիտակ  
Արեւիկ  
Գանիրէ — Մարտիրոս



մէկալ ձեռքը տուաւ միախոնարին ու գողալով սկսաւ հեռանալ : Արշալոյսն ալ սկսեր էր լուսաւորել լեռներուն ծայրը . ամենեկին ոչ հով կար և ոչ ձայն կենդանեաց , կարծես թէ բնութիւնն ակնածելի լուսթիւն մը կը պահէր , որպէս զի Սփինճերի ձայնն որ կը կանչէր զաւկին ետևէն՝ երթաք բարով լըսուի . խեղճ հօրն ազազակը անտառը կը դողացընէր , և զաւկին լացը քարերը կը լացընէր , մինչև ալ ձայնը չլսուեցաւ :

Յաւալի հօրը ըրածները քիչ մը կրցանք պատմելու . բայց մօրը վիշտը անկարելի է գրով պատմել . մանաւանդ երբոր Սփինճերին ազազակովն արթընցաւ վազեց դուրս , տեսաւ որ զաւակը չկայ՝ չորս դին մթնեց , կորսընցուց խօսքն ու խելքը , ինկաւ հօգեվարքի նման : Սփինճեր այնչափ բան ըրաւ , այնչափ բաներ պատմեց որ քիչ մը զգաստանայ , ճարչեղաւ . քիչ մը միտքը վրան կուգար կ'ազազակէր ո՛ր է զաւակս , մնացի անզաւակ . նուրէն սիրտը կ'անցնէր : Ահա այսպէս ողբով լեցուեցաւ իրենց տունը , մինչև աստուած ողորմելով քիչ մը սիրտ տուաւ զօրացուց որ կրցաւ գէթ կսկիծն իմանալու :

Պիեղո—ած Է՛ւնէրորդ .

Մայիս ամսուն 18 էր Եղիսաբեթ ճամբայ ելաւ սրբակաց ծերուն հետ . բայց նախ գնա-

ցին թոպուլքի իշխանին, որ պէտք եղած բաները հոգաց, և անկէ ճամբայ ելան. մէկ ամիսը հազիւ կրցան անցնիլ Սիպերիայի թաց անտառը, որ աս եղանակին մէջ շատ տեղ ջուր կօխած է. ցորեկը շատ անգամ գեղացի թաթարներուն սայլովը կ'երթային, ու գիշերն ողորմելի խրճիթներուն մէջ կը պառկէին. որ հազիւ քիչ մը ժամանակ կըրնային հանգչելու: Թիումէն քաղաքէն 40 վերստ անդին անտառէն անցան որ թոպուլքի կառավարութենէ դուրս է. Եղիսաբեթ կը մտածէր թէ իր արտօրանաց երկրէն դուրս ելաւ, իբր թէ երկրորդ անգամ զատուեցաւ ծնողքէն. ուստի լալով կ'ըսէր. ահա հիմա հեռացայ իմ երկրէս ու իմ ծնողքէս: Այս պէս ողբաց նաև երբոր ետքէն կօխեց Եւրոպայի հողը, վասն զի թոպուց իր ծնողքն Ասիայի մէջն ու անցաւ Եւրոպա երեք ամիսէն ետև: Աս հեռաւորութիւնն աւելի սիրաւ կը տրորէր քան թէ ճամբուն վիշտը. թէպէտ լսեր էր Եւրոպայի գեղեցկութիւնը, հարստութիւնն ու լուսաւորութիւնը, բայց իրեն աչքին ամենը ոչ ինչ կ'երևնար, միայն ծնողացն աղատութիւնը կը մտածէր միշտ: Թոպուլքէն մինչև Բերմէ 900 վերստ է, ուր դաշտերը պաղարբեր են և կը մշակուին. տեղ տեղ Ռուսաց գեղեր կան հարուստ, ու բնակարաններ անցաւորներու համար. բնակիչները կը զարմանային Եղիսաբեթի պարզութեանը վրայ: Աս Բերմէ քաղաքն ուրիշ տե-

սած քաղաքներէն մեծ էր, բայց գեղեցկութիւն չունէր. ճամբաները նեղ և աղտոտ, օդը անշահ և տներն անշուք: Սակէց մինչև Ղազան՝ մեծ քաղաք չկայ. շատ տեղ անբեր մացառոտ են, երբեմն կայծակը կը զարնէ հին ծառերուն, և մէկէն կ'երևնան իբր կրակէ սիւն. շատ անգամ տեսաւ Եղիսաբեթ որ ճամբուն երկու կողմն ալ այսպիսի հրդեհ կ'ըլլար, և երբեմն խորտակելով ծառերը կ'էյնային: Սակէց աւելի վտանգաւոր էր գետերէն անցնելը. սակայն Եղիսաբեթ առանց տրանջալու համբերութեամբ առաջ կ'երթար իր հողևոր հօրը հետ մէկտեղ, որուն սըրբակայ դէմքն ամենուն սիրտը կը շարժէր. և շատ անգամ ճամբորդները զիրենք կ'առնէին իրենց սայլին վրայ կը տանէին. և երբեմն թղթատարներուն սայլով ալ կ'երթային, մինչև հասան հոն, որ 200 վերստ մնացեր էր Ղազանին:

Օգոստոսի ամսուն հասան Վամայի գետին եզերքը, ու սկսաւ խեղճ Եղիսաբեթի ցաւն ու վախը աւելնալ, վասն զի կը նայէր որ իր հողևոր հայրը քանի կ'երթայ կը տկարանայ. մէկ ձեռքը դաւազան մէկալ ձեռքը Եղիսաբեթ բռնած՝ հազիւ կրնար առաջ երթալու. ան կողմի սայլերն ալ աւելի ցընցելով չէր կարող սայլով երթալ, երբոր հասան Սարաբուլ քաղաքը՝ նայեցաւ ծերն որ ալ պիտի չկրնայ առաջ երթալու, մնայ

ողորմելի խրճիթի մը մէջ, որ ոչ պատու-  
հան ունէր, և ոչ նստարան. քիչ մը խոտ  
դրին տակը պառկեցուցին: Եղիսաբեթի  
հոգն ու մտածութիւնը զինքը կը տանջէին  
չարաչար. ուստի բժիշկ խնդրեց՝ չգտան, ու  
իրմէ ՚ի զատ հիւանդը նայող չկար. կ'երթար  
դաշտէն առողջարար արօտներ կը ժողվէր  
կ'եփէր կը խմցընէր ծերուն, ինչպէս որ մօր-  
մէն սորվեր էր. բայց ինչ շահ՝ ծերութիւնը  
տիրելով, հիւանդին ոյժն անցեր էր. ողոր-  
մելի Եղիսաբեթ կուլար կ'ողբար թէ ինչ պի-  
տի ընէ. սուրբ ծերը լսելով անոր հառա-  
չանքը՝ ինքն ալ կ'ողբար անոր ողբին վրայ.  
Վաթսուն տարի աշխատեր էր աստուծոյ հա-  
մար՝ ամենեւին վախ չունէր մահէն, կը վա-  
ւաքէր որ քիչ մը ժամանակ ալ ունենայ որ  
աւելի բարի դործէ. կ'աղաղակէր ցած ձայ-  
նով. Աստուած իմ, չեմ՝ ընաւ տրտնջար բա-  
րերար կամացդ դէմ, սակայն ներէ, ժամա-  
նակ տուր մինչև տեղը տանիմ աս ողորմելի  
որբս, և անկէ ետև հանգիստ մեռնիմ:

Եղիսաբեթ ոտքի վրայ կը ծառայէր, ա-  
մանով ջուր տուաւ իրեն. ծերը ձեռքն ա-  
ռաւ ջուրը, վերցուց ըսաւ. Աստուած իմ,  
կը յանձնեմ աս զաւակս անոր, որ խոստա-  
ցաւ բաժակ մը ջուր տուողին չկորսնցնելու  
վարձքը: Եղիսաբեթ լսելով աւելի մեծ ցաւ  
ունեցաւ, զի այրն աստուծոյ կ'իմանար որ  
պիտի մեռնի. ուստի Եղիսաբեթ ինկաւ հի-  
ւանդին առջին կուլար ողորմազին: Ծերը

մեծ ցաւակցութեամբ ըսաւ . Աստուած իմ, ողորմէ ասոր, ասոր ողորմէ տէր իմ, վերջապէս տեսաւ որ ցաւը սաստիկ է, ըսաւ . դուստր իմ, անուամբ աստուծոյ և քու հօրդ աջ մի լար : Եղիսաբեթ մէկէն ելաւ, սրբեց արտասուքն ու խոնարհութեամբ ծերուն բերանը կը նայէր, թէ ինչ պիտի խօսի : Ծերը քիչ մը զօրանալով թեին կռթննեցաւ ու ըսաւ . զաւակ իմ Եղիսաբեթ, մեծ եղաւ քու անբաղդութիւնդ որ մինակ պիտի մնաս զանազան վտանգի և անբաւ աշխատանայ մէջ . սակայն աստուած ապաշտ սիրան ու առաքինի համբերութիւնն ամենուն ալ կը յաղթէ . եթէ այսպէս մնայ քաջասրտութիւնդ ապաւինելով ամենակարողին՝ որ կը հասնի ամեն տեղ, մի վախնար, տէր ընդ քեզ է : Իսկ եթէ անզգամ մարդիկ պատահին քեզ ու ջանան հեռացընել զքեզ յառաքինութենէ՝ մի հաւատար, թէ և խոտանան քեզ անցողական մեծութիւն . զի աստուծոյ երկիւղն ու ծնողաց սէրն ամենէն վեր են . միշտ յիշէ թէ մէկ պղտի պակասութիւն մը մահ կը բերէ ծնողացդ որ քու կեանացդ պատճառ եղած են :

Եղիսաբեթ խօսքին վրայ դալով ըսաւ . ո՛հ հայր իմ, մի վախնար : Ես չեմ վախնար, ըսաւ ծերը . յուսամ թէ աստուած քեզ կը պահէ ամեն փորձանքէ քու բարեպաշտութեանդ ու հպատակութեանդ համար : Հիմա դուստր իմ, ա՛ն հաղուստիս մէ-

Չէն քսակն որ թողարձի առատասիրտ իշխանը տուաւ երբոր դքեղ ինծի յանձնեց . պահէ առ դրամը ծածուկ , որ կենացդ հարկաւոր է ու մինչև բեթըպուրկ կը տանի քեզ . երբոր հոն հասնիա , դնա մետրապօլտին պատմէ . կարծեմ թէ զիս չէ մոռցած . անտարակոյս քեզի տեղ կուտայ կուսանաց վանքին մէջ և քու աղերսագիրդ կը ներկայացընէ կայսեր : Անկարելի է որ դքեղ արհամարհեն . վասն զի քու առաքինու թիւնդ մեծ է և զարմանալի . աշխարհք պիտի կարեկցի քեզի , վասն զի քու նմանդ քիչ է տեսեր . առաքինութիւնը պէտք է փոխարէնն առնէ աշխարհիս վրայ՝ երկինքն առնելէն առաջ :

Երբոր այսպիսի քաղցր մխիթարութեամբ կը խօսէր սուրբ ծերը՝ շնչառութիւնը տկարացաւ , ու պաղ քրտինք մը կը վաղէր ճակտէն : Խեղճ Եղիսաբեթը գլուխը ծռած կուլար լռիկ : Ծերն երկար ժամանակ հանդչելէն ետև , առաւ սրտին վրայէն խաչելութիւնն որ սև փայտէ շինած էր , մեծ ջերմեռանդութիւն կատարելէն ետև տուաւ Եղիսաբեթի ըսելով . Դուստր իմ , սոռ զայս , որ է իմ մի միայն բարիս՝ որ ժառանգեցի աշխարհիս վրայ , որով բանի մը չկարօտացայ : Եղիսաբեթ առաւ համբուրեց կենդանի հաւատքով և մեծ ցաւով , զի կ'երևնար որ բարի ծերը հոգին պիտի աւանդէր : Ծերը զօրանալով նորէն ըսաւ . Ան-

մեզ դառնուկ , ողորմելի անտէր , մի վախ-  
նար բանէ մը . ահա բարի հովիւը քեզ կը  
խնամէ ու կը հատուցանէ՝ կրկին աւելի ,  
միայն թէ դուն հաւատարիմ մնացիր . ան  
որ ճնճղուկներուն կերակուր կուտայ և ծու-  
վու աւազին թիւը դիտէ՝ քեզ չմոռնար :

Երբոր ձեռքն երկնցուց որ օրհնէ , Եղի-  
սաբեթ բռնեց ձեռքը լալադին կանչեց . սի-  
հայր իմ , ինչպէս պիտի որոշուիմ քեզմէ ,  
մեր պիտի դառնամ : Կրկնեց ձերը . բարի  
զաւակ իմ , աստուած այսպէս հրամայեց ,  
պէտք է որ համակերպելով կամքդ՝ մեզմեա-  
ցաւդ . յուսամ ստեղծողիս ողորմութեանն  
որ մէկ պահեկէն պիտի առնէ զիս երկինքը ,  
և պիտի ողորմի քեզ ու ծնողացդ : Խօսքը  
չմընցուց , միայն շրթունքը կը շարժէին ,  
բայց խօսքը չէր որոշուեր . դուլսը դրաւ խո-  
տին վրայ , աչքը երկինք վերցուց . կ'երևնար  
թէ կ'ազաչէ աստուծոյ որբ Եղիսաբեթին  
համար . և այսպէս սրբութեամբ աւանդեց  
հոգին երանելի ձերը . որուն հոգին ու սիրտն  
այնչափ ողորմածութեամբ լեցուած էր որ  
բոլոր կենացը մէջ ամենեկին իր յատուկ շա-  
հը չէր նայած . այլ միայն ուրիշները կը հո-  
գար վաթսուռն տարուան առաքինական աշ-  
խատանացը մէջ . ինչպէս ան վերջին սոսկա-  
լի կէտն ալ նոյն ողորմութեան գործքով ե-  
լաւ առաջի երկնաւոր դատաւորին , և նոյն  
առաքինութեամբ մտաւ յաւիտենական վի-  
ճակին մէջ :



Ողորմելի Եղիսաբեթն ինչ խեղճութեան մէջ ինկաւ . անանկ կուլար կ'ողբար որ ամենքը հոն վաղեցին թէ ինչ եղաւ . իսկ Եղիսաբեթ լալով կը ցուցնէր անոնց իրեն պաշապանն որ մեռած էր . ոմանք կը կսկծային , ոմանք զարմանալով կը նայէին մանուկ ազջրկան վրան . իսկ տանը տիրուրտանքը վաղեցին եկան որ տուած կերակուրին ստակն առնեն . երբոր կը խառնէին ծերուն հագուստը գտան քսակն որ ըսեր էր Եղիսաբեթին . բայց ան տրամութեամբ լեցուած ըլլալով ոչ նայեր էր և ոչ առեր . անոնք յափըշտակեցին առին , պատճառելով թէ թաղմանն ալ պէտք է :

Նայիս Ռուս քահանայք եկան իրենց ջահերով , ծածկեցին մարմնոյն վրայ սև չուխայ ու սկսան երգել մեռելի պաշտօնը : Եղիսաբեթ աղաղակելով տուաւ վերջին բարեը պատուական մարմնոյն որ կը ցոլար աստուածափայլ լուսով : Ապա ինկաւ ծնկան վրայ ողբալի գուստը՝ սենեկին խաւար անկեան կողմը կուլար կ'ողբար , ու արտասուօք դեռալինը կը թրջէր . գլուխը ծածկեր էր սև թաշկինալով որ զինքը չաեսնեն . դարձաւ գէպ ՚ի մարմինն ու աղաղակեց . ով երանեալ հօգի , մի թողուր ազբատ ողորմելի զաւակդ . ով հայր իմ , սիրական մայր իմ , արդեօք հիմա ինչ կը մտածէք . ահա ամեն օգնութիւն վերցաւ ձեր սիրական զաւակէն :

Իսկ ծերուն մարմինն երգելով զրին դա-

դադին վրայ որ տանին . Եղիսաբեթ թէպէտ արամութենէն տկարացեր էր , բայց կամեցաւ երթալ մարմնոյն ընկերակցիլ մինչև դերեզմանը , որ է դաշտ և քովն է աւերակ հին բերդի . իսկ մէջ տեղը փայտաշէն մատուռ ու փայտէ խաչ :

Շատ բազմութիւն կ'երթային մեռելին հետ զանազան ազգերէ խառն 'ի խառն . իսկ Եղիսաբեթ ծանրաքայլ համեստ սգով զլուխը ծածկած կ'երթար ետեւն : Երբոր մարմինը սխաի դնէին փոսը , թաղող քահանայն ըստ իւրեանց սովորութեան՝ փոքրիկ դրամ մը դրաւ մեռելին ձեռքն որ ճամբան տայ անցնի . քիչ մը հող վրան լեցրնելէն ետև հեռացաւ անկէ . իսկ այրն աստուծոյ հոն թաղուեցաւ , որն որ օր մը չէր անցուցած առանց բարիք ընելու այլոց . նման էր ան բարերար հողմոց , որ ամեն տեղ կը տանին օգտակար հունտեր և ամեն տեղ ծլելու և ծաղկելու պատճառ կ'ըլլան : Աս սուրբ անձը քալեր էր քարոզութեամբ հողագնախա կէսէն աւելի , և ամեն տեղ սերմաններ էր իմաստութիւն և ճշմարտութիւն . վերջապէս մեռաւ անձանօթ աշխարհի մէջ և յաւիտենական մուացութեամբ մնաց թաղուած օտարութեան մէջ : Խեղճ Եղիսաբեթը մնաց հոն լի արամութեամբ մինչև իրիկուն . իր աղօթքն ու թափած արտասունքը քիչ մը զինքը մխիթարեցին , զի շատ լաւ և օգտակար է մտածել 'ի մէջ երկնից և մահու . դերեզ-

մանէն կ'ելլեն առաքինական մտածութիւնք .  
իսկ երկընթէն կ'իջնայ մխիթարական յոյս .  
ուր տեղ որ վախճան կայ՝ դժբաղդութիւն  
չատ վախ չտար , և ուր որ հատուցմունք կայ՝  
դժբաղդութիւնը կը սիրուի :

Եղիսաբեթ այսպէս բարի մտածմունք-  
ներով կուլար առանց տրտնջալու . մանա-  
ւանդ միշտ շնորհակալ կ'ըլլար բարերարու-  
թեանցն աստուծոյ , որ ըրեր էր մինչև հոն  
հասցընելով . կը տեսնէր զինքն առանց ա-  
ռաջնորդի անօգնական բերմէին սահմանը .  
բայց նոյն հաւատքով զինուորած և նոյն քա-  
ջութեամբ ամբըցած , սկսաւ կանչել . ո՞վ  
հայր իմ և մայր իմ , սիրական ծնողքս , մի  
վախնաք , ձեր զուակը չմնար անյոյս . վասն  
զի աստուած է իրեն յոյսը , որ ամեն տեղ կը  
հասնի : Այսպէս որչափ որ սարսափելի բան  
պատահէր իրեն , մէկէն կը կանչէր . ո՞ւր էք  
սիրական ծնողք իմ . և ասով մէկէն սիրտ  
կ'առնէր բնական ազդեցութեամբ :

Երբոր իրիկունը մօտեցաւ՝ ընկաւ Եղի-  
սաբեթ միսիոնարին սուրբ գերեզմանին վը-  
րայ . և երեսը հողին քսելով շնորհակալ ե-  
զաւ որչափ որ հողացեր էր զինքը . ուստի  
վերջին բարևը տուաւ գերեզմանին . բայց  
գառնալու ատենը կամեցաւ որ հոն յիշատակ  
մը թողու , փայտէ մեծ խաչին վրայ փորե-  
լով զրեց Եսայի մարգարէին աս խօսքը .  
Արդարն Բարձաւ , և ոչ ոք իօրհի զնմանէ . Ս՛ի 1 :  
Սն ատենը մեծաւ տրտմութեամբ ելաւ դե-

րեղմանատնէն զնաց իր խուցը՝ որ էր Սարա-  
բուլայ հիւրանոցը . հեռեեալ օրը երբոր ճամ-  
բայ պիտի ելլէր՝ պանդոկապետը տուաւ ի-  
րեն իրեք ռուբլի՝ հաստատելով թէ այսչափ  
մնաց քարոզչին քսակէն . շնորհակալութեամբ  
առաւ ու ելաւ անկէ լալագին . Աս քու ողոր-  
մութիւնդ է, կ'ըսէր, ողորմած առաջնորդ-  
իմ, պաշտպան իմ . ինչպէս զրկուեցայ . քեզ-  
մէ, ո՛ր երթամ, ո՞վ զիս խնամէ հայրաբար .  
գէթ քու սուրբ օրհնութիւնդ ինձի հետ ը-  
լայ ու զիս պաշտպանէ ճամբուս մէջ :

Գլխաւորած ուրեւորդ .

Եղիսաբեթ բարի հաւատքով և հաստատ  
յուսով միտքը դրաւ թէ անոր համար աս-  
տուած առաւ իրմէն իւր պաշտպանն որ ինքը  
պաշտպանէ և ողորմի անոր, ինչպէս որ ողոր-  
մեցաւ անմեղ Շուշանին : Ուստի երբոր  
ճամբայ ելաւ Ղազան երթալու՝ հանդիպե-  
ցան իրեն աղքատ գեղացի քրիստոնեայ կա-  
նայք որ պիտի Ղազան երթային . անոնց  
հետ ընկերանալով Ռուսի գեղերէն կ'անց-  
նէին և կը մուրային : Սակայն սոսկալի հիւ-  
սիսային հովը վշելով՝ Եղիսաբեթ սեպտեմ-  
բերի առջի օրն հազիւ կրցաւ հասնելու  
Ղազան քաղաքը . տեսաւ որ վոլկայ գետին  
եզերքը սառեր են ան տարուան սաստիկ ցր-  
տէն . շատ դժուար և վտանգաւոր էր անցնի-  
լը, զրեթէ կէսը սառած էր : Եղիսաբեթ

երբոր կը մտածէր թէ ինչպէս անցնի, տեսաւ բարեպաշտ նաւաւար մը՝ մօտեցաւ հարցուց թէ ինչպէս կրնամ անցնելու աս սոսկալի գետէն: Պատասխանեց թէ մինչև որ բողբոջին չսառի ջուրը՝ անհնարին է: Հարցուց թէ քանի՞ օր պէտք է. ան ալ ըսաւ թէ երկու շաբաթ: Եղիսաբեթ հառաչելով ըսաւ. վասն սիրոյն աստուծոյ ողորմէ ինձի, և անցուր զիս գետէն, զի ես կուգամ թոպոլքէն ու կ'երթամ Բեթրպուրկ որ կայ սերէն ազատութիւն խնդրեմ՝ արտորուած հօրս համար. այնչափ քիչ է ունեցած ստակս որ եթէ 15 օր մնամ Ղազան՝ բան մը չմնար որ շարունակեմ ճամբայս:

Աս խղճալի խօսքն անանկ շարժեց նաւաւարին սիրան որ բռնեց Եղիսաբեթին թեւէն. եկուր, ըսաւ, ես մէկ ճար մը ընեմ. դուն բարի զաւակ ես՝ երկիւղած յաստուծոյ և սիրող հօրդ, աստուած զքեզ կը պահէ: Առաւ սառուցին վրայէն մտցուց նաւը. և որովհետև գետին կէսը չէր սառած, մինչև կէսէն անդին տարաւ. բայց հոն սառոյց ըլլալով՝ զգուշութեամբ հանեց նաւէն մէկալ կողմի սառուցին վրայ. ինքն ալ ելաւ՝ առաւ կունակը Եղիսաբեթն ու սառոյցներուն վրայէն ցատքելով անցուց վոլկային միւս կողմը առանց վտանգի, որ շատ մարդ չէր համարձակեր անցնելու:

Եղիսաբեթ մեծաւ շնորհակալութեամբ հանեց քսակն որ ունեցած երեք ուրբլին տայ

իրեն : Նաւաւարն ըսաւ . խեղճ աղջիկ , ան  
էջունեցած հարստութիւնդ որ քեզ պիտի  
տանի բեթրպուրկ . մի կարծեր թէ նիկո-  
ղոս փիղըլով քեզմէ բան առնէ . աւելի կ'ու-  
զեմ քեզ օգնելու , որպէս զի աստուած տայ  
ինձի և իմ վեց զաւակացս յաջողութիւն :  
Ան ատենը հանեց դրամ մի տուաւ Եղիսա-  
բեթին ու դարձաւ իր նաւակն ըսելով .  
դուստր իմ , աստուած հանգչեցընէ սիրտդ :  
Եղիսաբեթ շնորհակալ ըլլալով ազօթք ըրաւ  
նաւապետին , ու դրամը պահեց ըսելով . ես  
աս կը պահեմ որ հօրս ցցընեմ . որպէս զի  
իրեն վկայէ թէ իր ազօթքը լսեց աստուած ,  
և իր հոգին չձգեց զիս , ամեն տեղ հասան  
ինձի պաշտպան , որոնք հայրական զթով կը  
խնամեն զիս :

Եղիսաբեթ նորէն ընկեր եղաւ ուրիշ  
ճամբորդներու , և սկսաւ շարունակել ճամ-  
բայն , մինչև չորս ժամ գնաց առանց հանգ-  
չելու . տեսաւ որ շատ հոգներ է՝ նստաւ ժայ-  
ռին տակը , որ զինքը հովէն պաշտպանէ . զի  
թէպէտ պարզ էր օդը , բայց հիւսիսային հո-  
վը սասաիկ պաղ կը փչէր : Ասկէց կը սկսէր  
մեծ անտառ մը և կը տարածուէր վոլկայի  
եզերքը . Հոն տեսաւ նոր տեսակ ծառ մը որ  
չէր ճանչնար , զի էր Եւրոպայի ծառ գեղեցիկ  
կաղնի . միտքն ընկան Սիպերիայի եղևին ան-  
զարդ ծառերը , որոնք էին իրեն ծանօթ ծառ  
սքսորանաց , և իւր մանկութիւնը պաշտպա-  
նեցին . անոնց տակը կը հանգչէին սիրական

Ճնողքն որ այնչափ իրմէն հեռու մնացեր էին : Աս մտմտութիւնով սկսաւ լալ և աղաղակել . ո՛հ երբ պիտի զձեզ տեսնեմ ու ձեր ձայնը լսեմ . երբ պիտի դառնամ ձեր գիրկն իյնամ : Այսպէս լալով դարձուց աչքը դէպ 'ի Ղազան , տեսան քաղաքէն վեր երևելի հին բերդը , որ առջի թաթար խաները շիներ էին ժայռերուն վրայ :

Եղիսաբեթ աս ճամբորդութեանս մէջ միշտ արստրուած մարդիկներուն ողորմելիութիւնը տեսնելով՝ սիրաբար կտոր կտոր կ'ըլլար . ոմանք երկերկու շղթայով կապած ներշնչութի մետաղները կը խրկէին որ ինչուան մահ աշխատին . ոմանք իբրուցքիին դաշտերը և Անկարայի անմարդարնակ տեղերը կ'երթային որ հոն բազմանան : Երբեմն կ'երթային հատուածներ Չինուամաչինի սահմանը՝ ոմանք կառօք և իրենց բաներով , ոմանք ալ ոտքով կ'երթային : Կը նայէր ոմանց աչնուական ձևն որ յանցանքով մը Սիպերիա կ'երթային . հայրը միտքը կ'իյնար որ անոնց նման անանկ փորձանքի եկած էր . սիրաբար ցաւելով աչքերն արտասուալից կը մօտենար խեղճերուն ու մխիթարէր զթութեամբ , վասն զի մխիթարութենէ զատ ուրիշ բան չունէր որ տար խեղճերուն . որչափ աւելի առաջ կ'երթար , այնչափ աւելի կը տեսնէր անոնցմէ :

Ահա այսպէս հասաւ վլատիմիր՝ քաղաքը , և ունէր մէկ ուրբլի . վասն զի երկու ուրբլի



ծախսեր էր Սարգսիսիւն մինչև հոն, իսկ Սիւսերիայէն երեք ամսուան ճանապարհ քաղեր էր. բայց Ռուս գեղացիներուն մարդավարութիւնը շատ եղաւ Եղիսաբեթին, որ ամեն տեղ զինքը հողալով մինչև հոն հասուցին. ուստի իր խեղճ ստակը դեռ չէր լըմընցած: Սակայն կօշիկներն ու հագուստները մաշած էին, և չէին կրնար զինքը ցրտէն պաշտպանել, որ արդէն 30 աստիճանէն աւելի էր, ու որ աւուր վրայ կ'աւելնար. ձիւնը երկու օտնաչափէն աւելի ծածկած էր դատինը. երբեմն ձիւնը վար դալով կը սառէր, երբեմն սաստիկ անձրև դալով ճամբայներ կը բանար, և երբեմն անանկ սոսկալի քամի կ'ելէր որ Եղիսաբեթ ձիւնը կը բանար ու զլուխը մէջը կը խոթէր որ պահպանուի:

Երբոր վլատիմիրէն ճամբայ ելաւ՝ որ մը հանդիպեցաւ անանկ սաստիկ փոթորիկի որ ձիւնն երկինքը բարձրացընելով կը խաւարէր օդը. անանկ որ Եղիսաբեթ ճամբայն կորսընցուց. հարկադրեցաւ որ մեծ ժայռին սակը մտնէ կենայ անշարժ. բայց հովը լեռները կը դողացընէր: Մն միջոցին ձայն մը եկաւ իրեն. ելաւ անկէ դժուարութեամբ մէկալ կողմն անցաւ. տեսաւ որ գեղացիի խրճիթ մը կայ, վազեց գնաց դուռը զարկաւ. նայիս սլառաւ կին մը դուռը բացաւ, ու զարմանալով ըսաւ. խեղճ աղջիկ, ուսկից կուգաս աս մատղաջ հասակովդ մինակ և ձիւնով ծածկած: Պատասխանեց Եղիսաբեթ. թոպուքէն կու-

դամ ու կերթամ Բեթրալուրկ՝ հայրս ազա-  
տելու համար: Ներսը մնորդ մը կար՝ զլուխը  
ձուած մտիկ կ'ընէր. երբոր լսեց՝ զարմանա-  
լով կանչեց. Ընչ կը խօսիս, հիմա դուն Սի-  
պերիայէն կուգաս աս հասակովդ ասանկ  
խեղճ անօգնական, այսպէս մըրիկներով:  
Ա՛հ, իմ ողբալի զաւակս ալ քեզի պէս պի-  
տի ընէր, բայց բաժնեցին զիս անկէ՝ առանց  
զիտնալու թէ զիս սըր պիտի տանին. ուստի  
չկցտէ թէ սըր եմ որ կարենար զիս հոգալու.  
ս՛հ պիտի չտեսնեմ զինքը, և այնպէս պիտի  
մեռնիմ. զի սիրական զաւկէս հեռու չեմ  
կրնար ապրելու:

Եղիսաբեթին սիրաը խռովելով ըսաւ.  
պարոն, մի յուսահատիր, աստուած քեզ  
ալ կը համնի, զաւկիդ ալ, որուն ձեռքին  
մէջն է բոլոր աշխարհ աւազի հատի նման:  
Պատասխանեց սքսորուած մարդը. իրաւ է  
խօսքդ, բայց կ'ուզեմ որ իմ վիճակս զաւկիս  
խմացընեմ, ճարը չեմ գտներ. ահա թուղթ  
մը գրեք եմ իրեն, որ է Ռիկայ, թղթատա-  
րը ներսն է հիմա պիտի երթայ. ես ստակ  
չունիմ որ տամ, վասն զի առանց ստրկի  
չտանիր: Եղիսաբեթ հանեց տուաւ իրեն  
մէկ ռուբլին, որ մնացեր էր, ներում խըն-  
դրելով, զի աւելի չունէր որ տայ: Աքսո-  
րուածն առաւ ձեռքէն, վազեց տարաւ թըղ-  
թատարին տուաւ. ան ալ առաւ թուղթը:  
Եղիսաբեթ ունեցածը տալով շատ առատա-  
սիրտ երեցաւ. մանաւանդ պատճառ եղաւ

որ ան աքսորուածին զաւակն օգնէ խեղճ հօրը : Երբոր հանդարտեցաւ քամին՝ Եղիսաբեթ ուզեց ճամբայ ելլել, շնորհակալութեամբ գրկեց ան պառաւն որ զինքը հանգուցեր էր. բան մը չունիմ, կ'ըսէր, որ քեզի հատուցանեմ. ուրիշ բան չունիմ, եթէ ոչ ծնողացս օրհնութիւնը, որ է իմ մի միայն հարստութիւնս : Ողորմելի աղջիկ, ըսաւ պառաւը, հապա ինչո՞ւ բոլոր ունեցածդ տըւիր. Եղիսաբեթ ամբնալէն կարմրեցաւ : Իսկ աքսորուած մարդն ելաւ թևերը վերցուց օրհնեց Եղիսաբեթն ըսելով. պահապան հրեշտակն առաջնորդ ըլլայ քեզ ու պահէ ամեն փորձանքներէն, որ հասար ինծի : Եղիսաբեթ ան ատենը առաւ մկրտան ու մազէն կտրեց փունջ մը տուաւ անոր ըսելով. որովհետև Սիպերիա կ'երթաս, տար աս մազս տուր թոպուքի կառավարիչ իշխանին, և ըսէ թէ Եղիսաբեթ խրկեց իրեն սիրելի ծնողացը. կ'աղաչեմ տար աս յիշատակս որ պիտի իմացընէ իրենց՝ թէ դեռ զաւակնին ողջ է : Առաւ աքսորուածն ըսելով. երգում ըլլայ քեզի որ ամբողջ կը տանիմ. նաև պիտի գտնեմ ծնողքիդ խրճիթն ու պիտի պատմեմ ինչ որ ըրիր ինծի : Եղիսաբեթին սիրտը մեծապէս մխիթարուեցաւ ծնողացն համար, որ պիտի ուրախանային իր առողջութեանը վրայ. և իր տուած մէկ զրամս այնչափ բարութեան պատճառ եղաւ. զի անով թէ աքսորուածին զաւակը լուր առնելով ուրախացաւ, և թէ իր ծնողքը :

Վլատիմիրէն մինչև ցփոքրով քաղաքն ան-  
տառային է ճանապարհը , ծառերն ամառը  
տերևալից զարդարուելով գողերու բնակա-  
րան է . բայց ձմեռն այնչափ չեն կրնար պա-  
տըսպարուելու : Թէպէտ Եղիսաբեթի վախ  
տուողներ եղան , սակայն իր աղքատութիւնն  
ու յոյսը մեծապէս զինքը քաջալերեցին . ուս-  
տի ելաւ ճամբայ ու քանի մը վերստ առաջ  
որ գնաց՝ հանդիպեցաւ մեծ ճամբուն մէջ  
ճամբորդներու բազմութեան , որոնք Մոս-  
կով կ'երթային՝ լծին մէկալ կողմն անցնելով  
որ շատ ամուր սառած էր . Եղիսաբեթ աս  
ճամբով սկսաւ սառուցին վրայէն առաջ եր-  
թալ . բայց սրովհետև ճամբայն չէր երևնար՝  
սխալեցաւ գնաց ընկաւ տղմալից տեղ մը ,  
որ շատ դժուարութեամբ հազիւ կրցաւ ելլե-  
լու . բոլորովին շողախած ըլլալով հանեց կօ-  
շիկներն ու վրայի լսթը՝ դբաւ արևն որ չոր-  
նայ , ու ինքը նստաւ քարին վրայ :

Աս տեղս վայրի անբնակ ըլլալով՝ բան մը  
չէր երևնար . ոչ ձայն կը լսուէր և ոչ մարդ  
կ'անցնէր . իմացաւ որ մեծ ճամբէն շատ հե-  
ռացեր է , ետևն էր լիճն ու առաջն էր մեծ  
անտառը . օրն ալ սկսաւ իրիկուն ըլլալ . ելաւ  
քաջասրտութեամբ զօրացաւ , աագին անգին  
կ'երթար մտրոբելով որ ճամբայ մը կամ մարդ  
մը գտնէ : Երբոր կը փափաքէր մարդու ձայն  
մը լսելու , նայիս շատ մարդու ձայն լսեց ան-  
տառին կողմէն . շատ շանցաւ իրենք ալ երև-  
ցան որ դէպ 'ի իրեն կուգային : Տեսաւ որ

դէմքերնին ստակալի, ձայներնին վայրենի, վախցաւ որ աւաղակներն էին. և լսեր էր որ շատ կան ան կողմը: Կը մտածէր որ չըլլայ թէ աստուած զինքը պատժէ յանդգնութեանը համար, որ բանէ մը չէր վախնար. ուստի խոնարհելով առաջի աստուծոյ ծնկան վրայ եկաւ աստուածային օգնականութիւնը խնդրեց:

Իսկ ան բազմութիւնն առաջ դալով եկաւ մօտեցաւ Եղիսաբեթին. հարցուցին իրեն թէ ուսկից կուգաս և ինչ կը պաշտիս հոս: Կտրիճ աղջիկն աչքը խոնարհած ցած ձայնով ըսաւ թէ կուգամ Թոպուլքին կողմանէ, և կ'երթամ կայսերէն շնորհք խնդրելու հօրս ազատութեանը համար: Շատ զարմացան, հարցուցին թէ սրչափ ստրկով ճամբայ ելար: Ան ալ հանեց նաւավարին տուած պղտի ստակը. կրկին աւելի զարմանալով իրարու երես նայեցան ու անանկ երեւեցաւ իրենց թէ աս մատաղ կոյսը գերբնական և աներևոյթ զօրութենէ մը կը պահուի: Այնչափ ակնածութիւն ունեցան որ չհամարձակեցան երեսը նայելու. երթանք երթանք, ըսին, զի անտարակոյս աստուած իրեն հեան է:

Անոնք անցան անկէ, Եղիսաբեթն ալ ելաւ շուտով մտաւ անտառը. քիչ մը առաջ գնաց տեսաւ մեծ ճամբայ մը խաչաձև, որուն մէկ կողմը կար աստուածածնայ մատուռ մը. Եղիսաբեթ ընկաւ մատուռին առջևն ու շը-

նորհակալ եղաւ աստուծոյ որ զինքն ազատեց  
աւազակներէն : Աս մատուռին դիրքը կը  
յայտնէր թէ ամեն մէկ ճամբայ որ քաղաք  
կը հանէ . ուստի աւելի զօրանալով սկսաւ  
թեթեւութեամբ երթալ փոքրովին ճամբայն ,  
և առաջ երթալով տեսաւ ազքատ կուսանաց  
վանքին պատը : Հասաւ վանքն ու դուռը  
զարկաւ մտաւ ներս , պատմելով քաջածնե-  
րը՝ խնդրեց իրեն բնակարան . ինչ որ ուզեց՝  
տուրն կուսանքն ու քրոջ պէս զինքն ընդու-  
նեցան , և չորս դին շարուած երբոր կը պա-  
տուէին զինքը՝ Եղիսաբեթ կը կարծէր թէ  
մայրը տեսաւ :

Եղիսաբեթ պարզ և համառօտ պատմեց  
իր պատմութիւնը , որ մեծ շինութիւն տը-  
ւաւ բոլոր միաբանութեան : Աս սրբասէր կու-  
սանքը զարմացած մնացեր էին անմեղ կու-  
սին զարմանալի առարկնութեանը վրայ . որ  
այնչափ աշխատանքի դիմացեր ու այնչափ  
նեղութիւն քաշեր էր առանց տրտնջալու ,  
և մեծապէս կը վշտանային որ ինչ որ իրեն  
պէտք է ընել և ինչ պաշար պէտք է տալ՝ չէին  
կրնար , վասն զի շատ ազքատ էր իրենց  
վանքը , ու միայն ողորմութեամբ կ'ապրէին .  
բայց ուզեցին որ իրենք զիրենք մերկացնեն  
ու զինքը հագուեցնեն . հանեցին իրեն պատ-  
ռած հագուստն ու կօշիկները և իրենց ըզ-  
գեստը հագուցին : Եղիսաբեթ կ'ուզէր հրա-  
ժարիլ որ չառնէ անոնց հարկաւոր զգեստը .  
իսկ գթած կուսանքը վանքին պատը ցցուցին

ըսելով . մենք աս պատասպարանն ունինք .  
 դուն աս ալ չունիս . մեր քիչը քուկինդ է ,  
 դուն մեզմէ աւելի աղքատ ես :

Եղիսաբեթ ելաւ Մոսկովու ճամբուն վը-  
 րայ , տեսաւ բազմութիւն սայլերու , մար-  
 դիկներու և կրնկտոց , որ մեծ մայրաքաղաքը  
 կ'երթային , շատ զարմացաւ , և որչափ աւելի  
 առաջ գնաց , այնչափ բազմութիւնը շատ  
 տեսաւ : Երբոր ելաւ վանքէն հասաւ գեղը ,  
 տեսաւ որ մարդով լեցուն էր , իջևանները  
 կնիկ մարդ՝ աղջիկներ և ամեն տեսակ ճամ-  
 բորդներ կային . կը զարմանար երբոր կը  
 տեսնէր որ պզտի խցի մը համար շատ ստակ  
 վարձք կուտային , և շատ կը ցաւէր անհնա-  
 րին տառապանօք . վասն զի աղքատ կոյսը  
 ստակ չունէր որ տար ու հանգիստ տեղ ու-  
 նենար , այլ շատ անգամ անձրևի և ձեան  
 տակ կը մնար . բայց ծնողացը սիրոյն համար  
 որ զիրենք ազատելու կ'երթար՝ ամեն նեղու-  
 թեան կը համբերէր :

Երբոր մօտեցաւ Մոսկով , ամեն տեղ  
 զանգակներու ձայն կը հնչէր և ամեն տեղ  
 կոյսեր անունը կը լսուէր : Աւելի մօտենա-  
 լով մեծ մայրաքաղաքին՝ լսեց թնդանօթի  
 ձայներ որ Մոսկովէն կուգար . և որովհետև  
 Եղիսաբեթ այնպիսի ձայն չէր լսած , շատ  
 զարհուրեցաւ : Նայիս բազմութիւն կառաց  
 կ'անցնէին և խուռն մարդիկ դիզուեր էին  
 մեծ ճամբուն վրայ . Եղիսաբեթ զարհուրե-  
 լով հարցուց պատճառը . ըսին որ կայսրը



կուգայ Մոսկով երթալու : Ի՞նչ, ըսաւ ,  
միթէ կայսրը Բեթրպուրկ չէ : Խեղճ ազքատ  
աղջիկ , ըսին , չես լսած որ Սղեքսանդր  
կայսր կուգայ որ թագաւորութեան հանգէ-  
սը կատարէ Մոսկով : Եղիսաբեթ ձեռքը  
ձեռքին բերելով աչքն երկինք վերուց , հաս-  
տատեց յոյսը և զարմացաւ աստուածային ու-  
ղորմութեանը վրան որ ինքնակալն իրեն առ-  
ջին կը խրկէր որուն ձեռքն էր ծնողաց վիճա-  
կը . և ան անանկ ժամանակ որ ազգային և  
ընդհանուր ուրախութիւն կար ամենուն  
սրտին մէջ , ևս առաւել կայսեր որ գլխու-  
թեամբ լեցուած էր : Եղիսաբեթի սիրտը  
լեցուելով զարձուց գլուխը դէպ 'ի Սիպերիա  
ըսաւ . ո՞ր էք ծնողք իմ , յուսամ թէ իմ  
աշխատանքս սրարապ չեն ելլեր . շուտով պի-  
տի իմանաք ձեր զաւկին երջանիլութիւնը ,  
թէ պէտ հիմա իմ ձայնս ձեզի չհասնիր :

Ղեպտած Իննէրորդ -

Յամի տեառն 1801 սեպտեմբերի 13 Ե-  
ղիսաբեթ մտաւ Մոսկով մայրաքաղաքը . եր-  
բոր կը տեսնէր մեծամեծ պալատներ , թա-  
գաւորական ապարանքներ և այնչափ զար-  
դարանք և մեծութիւն՝ զարմանար կը մնար .  
միտքը դրաւ թէ ալ իրեն վիշտն ու նեղու-  
թիւնը լմնցաւ , ու մտքէն չէր անցներ որ  
նոր վիշտ պիտի ունենայ : Տեսաւ որ ճամբայ-  
ներն ու հրապարակներն անանկ լեցուն էին

մարդով որ հազիւ կրնար քալել բազմութեան մէջէն, ու զինքը մէկ կողմէն մէկալը կը հրէին: Վերջապէս ելաւ փողոցէն տեսաւ զուարճալի ծառնոց քաղքին մէկ կողմը. հոն հանգչեցաւ:

Աս զուարճալի զբօսարանին մէջ անհամար մարդիկ կը պտըտէին. և ամենքն ալ կը խօսէին կայսեր թագադրութեան հանդիսին վրայ: Շատ կառքեր վեր վար կը պտըտէին ու մայր եկեղեցիներուն մեծամեծ զանգակներն անդադար կը զարնուէին: Երբեմն երբեմն թնդանօթներ կը նետուէին, ու բոլոր քաղաքը կը սարսէր:

Եղիսաբեթ ելաւ անկէ գնաց դէպ 'ի կրեմէլեան հրապարակը, վասն զի հոն կ'երթար խուռն բազմութիւնը, ուր կրակներ վառեցին հանգիսի համար. Եղիսաբեթ քաշուած նստաւ մէկ կողմը, վասն զի չտեսած բաները կը տեսնէր: Նոյն գիշերն անանկ անցուց բայց մէկալ օրն սկսաւ մտմըտալ տրտմութեամբ. վասն զի այնչափ քալեց, տեղ մը չգտաւ բնակարանի համար որ քիչ մը հանգչի. տեսաւ շատ մեծամեծ պալատներ, բայց ինչ շահ որ չգտաւ իրեն համար խուց մը. տեսաւ անչափ բազմութիւն, բայց չգտաւ իրեն պաշտպան բարեկամ մը:

Երբոր գիշերը մօտեցաւ՝ ցուրտը սաստկացաւ, խեղճը բան ալ չէր կերած նոյն օրը: Կը նայէր անցնողներուն երեսն որ գթութիւն մը գտնէ. բայց ամենքը զբաղած ըլ-

լալով մարդ երեսը չէր նայեր, իրեն երեսն ալ չէր բռներ որ երթայ մէկին դուռը : Վերջապէս համարձակեցաւ գնաց աղքատի մը դուռ դարկաւ . չբացին, ու երեսն ալ չնայեցան . վասն զի ամեն մարդ աւելի վաստակ ընելու կը ջանային ան մեծ հանդիսին տանը, ուստի ամենուն դուրսը փակուած էր և օտարական աղքատը նայող չկար :

Մանուկ կոյսը կրեմէլեան հրապարակին մէջ մօտեցաւ կրակին ու նստաւ կուլար . տրտմութենէն սիրտ չունէր որ պատառ մը հաց ուտէ որ տուեր էր իրեն պառաւ կին մը : Նոյն գիշերն այնչափ սաստիկ ցուրտ եղաւ որ Եղիսաբեթ մտածեց թէ որ դուրս մնայ՝ պէտք է որ վտանդի . ուստի սիրտ ըրաւ ելաւ տեսաւ որ մարդիկ կ'անցնին՝ մօտեցաւ առջի անցնողին ըսաւ . վասն անուան հօրդ որ քեզ կը սիրէ, և վասն սիրոյ մօրդ ուսկից կեանք ես առեր, քիչ մը ողորմութիւն ըրէ ինձի որ գիշերն տեղ մը վարձեմ նստիմ : Մարդը կրակին լուսովն երեսը նայեցաւ ըսաւ . մանուկ աղջիկ, ամօթ չէ որ չես աշխատիր ու կը մուրաս . աստուած տայ, ես մուրացկան չեմ սիրեր . այնպէս խօսելով անցաւ գնաց : Ողորմելի Եղիսաբեթը ամօթէն գետինն անցաւ . աչքն ու սիրտը երկինք վերուց, խնդրեց ստեղծողէն որ օգնութիւն հասնի իրեն, զի ընդունայն է փրկութիւն մարդոյ :

Վերջապէս գիշերն աւելի անցաւ, բազ-

մութիւնը պակսեցաւ, կրակն ալ կը մարէր : բայց Եղիսաբեթ մնաց խեղճ անօգնական : Աս միջոցս հրապարակի պահապան զօրքն ելան պտըտեցան, երբոր մօտեցան Եղիսաբեթին, զարմանալով կանչեցին, թէ ինչ բան ունիս հոս : Ասոնց սոսկալի ձայնն ու խստութիւնն անանկ դողացուց մատաղ կուսին սիրտը որ փոխանակ պատասխանելու սկսաւ լալ, կը կարծէր թէ լացով կրնայ անոնց սիրտը շարժելու . բայց անոնք աւելի խստանալով նորէն կանչեցին, ո՞վ ես դուն : Կոյսը դողալով պատասխանեց . ես Թոպուքի կողմանէ կուգամ որ կայսերէն շնորհք խնդրեմ հօրս համար, ողորմեցէք խեղճութեանս, բոլոր այսչափ ճամբայն քաշելով եկեր եմ . փող չունէի որ տեղ մը վարձէի, անոր համար հոս մնացի :

Աս խօսքն որ լսեցին՝ աւելի կատղեցան, կարծելով թէ ասանկ անյարմար ստերով զիւրենք կը խաբէ : Միամիտ աղջիկը զինքը Սեպերիա կարծելով ուղեց փախչելով ազատիլ . պահապանները հասան ետեէն բռնեցին զինքն որ բանտը տանին : Ան ատենը ողորմագին ձայնով ազազակեց Եղիսաբեթ . ո՞վ աստուած իմ, ստեղծող տէր իմ . ո՞ր են ողորմութիւնք քո առաջինք . արդեօք երեսէ ձգեցիր ողորմելի Եղիսաբեթը . ահա ժամանակ՝ հասիր տառապեալ ազախնոյդ :

Աս ողորմագին ձայնը շատ մարդ հոն հաւաքեց . երբոր տեսան անմեղ աղջկանը

խեղճութիւնը՝ սկսան պահապաններուն սաստեղ թէ ինչո՞ւ կը շարշարէք ողորմելի աղջիկը : Իսկ խեղճը թևերը տարածեալ կ'աղաղակէր . երդում՝ ըլլայ առաջի աստուծոյ , որ սուա չեմ խօսիր . քաշելով եկեր եմ Սիպերիայէն հոս որ հօրս համար աղատութիւն խնդրեմ . աղատեցէք զիս՝ աստուծոյ համար ըլլայ , աղատեցէք զիս , որ չմեռնիմ . գէթ հայրս աղատելէս ետև մեռնիմ : Աս խօսքէն ամենուն սիրտը դուր շարժեցաւ . հոն գըտնուողներուն մէջէն մէկ բարեպաշտ մարդ մը առաջ անցաւ , ըսաւ թէ աս խեղճ աղջիկն աս իրիկուն իմ հիւրս է . և իմ հիւրանոցս է սուրբ Բարսղի հրապարակին վրայ , հոն կը բնակեցընեմ . թէ որ պակասութեան տէր եղած ըլլայ , վաղը ինձմէ զիտցիք : Այսպիսի հասուն խօսքերով առաւ անոնց ձեռքէն , ու սկսաւ անկէ հեռանալ :

Եզխաբեթ շորհակալ ըլլալով աստուածային ողորմութեանը՝ կ'երթար իր պաշտպանին ետևէն , ինչուան հասան տունը : Բայց որովհետև նոյն ժամանակն ամեն տուն լեցուն օտարական էր , ըսաւ թէ ես աւելի խուց չունիմ որ քեզի տամ , ահա ամենը լեցուն է , ուստի մէկ զիշերուան համար կ'նստաքով կեցիր , թող քիչ մը անհանգիստ ըլլայ քեզ ընդունելու համար : Եզխաբեթ ձայն չհանեց . մտան փոքրիկ դաւիթը , տեսաւ որ անոր մանկահասակ կիներն ալ տղայ ունէր զիրէկը : Աս բարեսիրտ կիներ տեսածին պէս Ե-

ղիսարեթին խեղճութիւնը, ելաւ զնաց քովը: Այրը պատմեց կնկանը թէ ինչ վտանգէ ազատեց խեղճն ու իր անուամբը խոստացաւ զինքն ընդունելու: Կինը ուրախութիւն ցըրնելով բռնեց Եղիսարեթին ձեռքէն, ու ծիծաղերես ըսաւ. հազար բարով եկար, խեղճ աղջիկ, ինչպէս զեղնե՞ր ու խոսվեր ես. բայց մի վախնար, մենք քեզ զաւկի պէս կը սիրենք զթալով. ուրիշ անգամ չըլլայ թէ ոչ ատեն հրապարակին մէջ նստիս. հաւատա խօսքիս որ մեծ քաղքըներուն մէջ կարելի չէ որ քեզի պէս աղջիկ հրապարակներուն մէջ մնայ աս ժամանակս: Եղիսարեթ պատասխանեց լալազին, թէ ինչ կարող էի ընել. ես տէր չունիմ, ճար չունիմ. հեռու աշխարհէ եկայ, բոլոր օրս խնդրեցի տեղ մը չգտայ, ամեն դուռ ինձի փակուեցան: Սկըսաւ պատմել բոլոր ճամբորդութիւնն ու քաշած նեղութիւնները: Բարեսիրտ կինը լսելով խեղճ աղջրկանը քաշածներն սկսաւ լալ, նոյնպէս այրը շատ զարմանալով սիրտը լեցուեցաւ. վասն զի յայտնի կ'երևնար թէ ինչ որ կը պատմէ ճշմարիտ է, ոչ սուտ էր և ոչ երազ լսածնին: Ծայրէ 'ի ծայր պատմութիւնը լմընցուց, և ճշմարտութիւնը հաստատելով հաւանեցուց լսողները:

Աս պարոնին անունն էր Յակոբ Ռոսսի պանդոկապետ. երբոր Եղիսարեթ խօսքը լմընցուց, մխիթարելով ըսաւ՝ թէ իրաւ ես աս քաղքին մէջ շատ անուանի մարդ չեմ,

բայց շատ բարեկամ լունիմ, ձեռքէս եկածին  
 չափ քեզի համար կ'աշխատիմ, և որչափ իմ  
 ազէկուծիւնս կ'ուզեմ՝ այնչափ ալ քու ա-  
 ղէկուծիւնդ : Կի՛նն ալ հաստատելով աս  
 խօսքս՝ հարցուց թէ մարդ մը չե՞ս ճանչնար  
 հոս որ քեզ թագաւորին տանի : Եղիսա-  
 բեթ՝ չէ ըսաւ . վասն զի յոյս չունէր թէ  
 Սմոլոփ պատանին ան կողմերը գտնուի :  
 Կրկնեց կի՛նը, թէ աս խնդիրդ մեծ բան  
 մը չէ մեր մեծահոգի զթած կայսեր հա-  
 մար, աստուծով քեզ ալ կ'ուրախացընէ :  
 Յակոր հաստատելով ըսաւ . այո այո, Ա-  
 ղեքսանդր կայսր կարող է ամեն բանի, որ  
 վաղը պիտի պսակուի կայսր և թագաւոր վե-  
 րափոխման եկեղեցնայ մէջ . պէտք է որ  
 դուն ալ ճամբուն վրայ գտնուիս ու ոտքն  
 իյնաս խնդրես շնորհք հօրդ ազատութեա-  
 նը համար . մի հողար . ես ալ հետդ կու-  
 ղամ, աստուած կ'օրհնէ զքեզ ողորմու-  
 թեամբ :

Եղիսաբեթի սիրան ելաւ, կանչեց լալա-  
 գին . սհ իմ առատասիրտ հիւրընկալներս .  
 աստուած լսէ ձեզ, և օրհնէ զձեզ ծնողացս  
 օրհնութեամբ . դուք ինծի ընկեր եղիք,  
 հաստատեցէք ողորմելիս ու տարէք կայսեր  
 ոտքը, զի աստուծով դուք պիտի ըլլաք վկայ  
 իմ երջանկութեանս . քան զայս մեծ երջան-  
 կութիւն չկայ ինծի համար՝ որ կրնայ վայե-  
 լել մէկ ստեղծուած մը : Արդեօք պիտի ըլ-  
 լայ ինծի աս շնորհքը . արդեօք պիտի տա-



նիմ զայն հօրս , և պիտի տեսնեմ մօրս ուրախութիւնը : Նորէն խեղճին սիրան ելաւ , չկրցաւ խօսքն առաջ տանելու . անանկ եկաւ իրեն թէ արժանի չէր ան երջանկութեան , անոր համար անձայն կուլար :

Բարեպաշտ հիւրընկալները քաջալերեցին յոյսը . սիրտ տուին իրեն մեծ զովեսաներով աս մեծ առաքինութեանը համար , որ կը մաշուէր ծնողացը սիրոյն : Աս ալ հասկըցուցին իրեն թէ Աղեքսանդր կայսրը շատ կը խղճայ ու կը գթայ ասանկ անմեղ խեղճերուն վրայ . զի ով որ ինչ խնդիրք ըրեր էր՝ պարագ չէր ելած . և ս առաւել ան առաքինի աշխատանքը պէտք էր որ պարագ չելլէ ու պսակուի : Եղիսաբեթին քունն ու հանդիսը կորաւ , շարունակ մօտիկ կ'ընէր անոնց քաջալերական խօսքերն ու կը զօրանար : Արդ ժամանակն հասնելով կամեցան որ Եղիսաբեթ հանգչի , որ մէկալ օրուան աշխատանքին պատրաստ դանուի , թէպէտ և ժամանակը շատ ուշ էր : Ուստի Յակոբ Ռոսսի քաջուեցաւ գնաց վերի պղտի խուցը պառկելու , իսկ կինը առաւ Եղիսաբեթն իրեն քովը : Բայց խեղճին սիրտը սաստիկ խռոված ըլլալով երկայն ժամանակ չկրցաւ քնանալու : Շարունակ շնորհակալ կ'ըլլար աստուծոյ՝ որ ողորմութիւնն ամեն տեղ կը հասցընէր . և ան նեղ ժամանակն առատասիրտ հիւրընկալներն իրեն հանդիպեցան ու օգնական եղան : Թէ որ հրապարակին մէջ

ան մեծ նեղութեան մէջ ըլլայի, կ'ըսէր, Յակոբ Ռոսսի ինձի պիտի շողորմէր ու տուն բերէր. ուրեմն ան քաջած խաչս ալ աստուած խրկեց որ համբերեմ, որ աւելի յաջողութիւն գանեմ. փառք ստեղծողիս՝ հազար փառք, յուսամ հաստատութեամբ թէ ընծողուր զիս: Այսպիսի երախտագիտութեամբ և բարի յուսով քնացաւ. բայց երեակայութիւնը սաստիկ շարժած ըլլալով՝ քաղցր երազներ կը տեսնէր. երբեմն հայրը կը տեսնէր, որ սիրտ կուտար իրեն. երբեմն դորովայի տեսեամբ մայրը կը տեսնէր ուրախութեամբ փայլած. երբեմն կուգար իրեն թէ կայսեր ձայնը կը լսէ, և երբեմն զանազան առարկայներ կը տեսնէր. և այսպէս անոյշ քնով մինչև 'ի լոյս հանգստացաւ: Հետեւալ օրն սկսաւ հրատարակուիլ ամեն տեղ քաղքին մէջ տօն ցնծութեան, զանգակները մէկ զիէն կը զարնուէին, հրացանները մէկալ դիէն. ամեն զի ուրախութիւն, երգ ու նուագարան կը լսուէր: Փողոցները զարդարուեցան, ու ժողովուրդն սկսաւ դէպ 'ի եկեղեցին երթալ: Ան ատենը Յակոբին բարեսիրտ կիներ հազուց Եղիսաբեթին իր համեստ զգեստը. որուն ներքին ազնուութիւնը դրսէն ալ փայլեցաւ, և իր դեղեցիկ տեսքն ու պարկեշտ շարժուածքը յայտնի կը քարոզէին հոգւոյն մեծութիւնը:

## Պիպոսած ասաներորդ .

Եղիսարեթ՝ Յակոբ Ռոսսիին թեէն ընճած ելաւ դուրս խառնուեցաւ բազմութեան մէջ, նազելի դնացրով հասան վերափոխման եկեղեցին, ուր որ կայսրը պիտի պսակուէր թագադրութեամբ :

Աս սուրբ տաճարը պայծառ կը փայլէր . հազար ջահէն աւելի կը վառէին և անթիւ զարդարանքներով գեղեցիկ զարդարած էր . մէկ կողմը շինած էր կայսերական փառաւոր դահճ՝ վրան մեծագործ ամպհովանի, ու մեծապանծ կայսրը բազմեր էր փառաւորապէս, կայսրուհին ալ քովը մեծագին զարդարանքներով և հագուստներով . անանկ պայծառ և ահեղ կը փայլէին որ տեսնողներուն արեգական նման կ'երևնային : Նայիս կայսրուհին ելաւ չոքեցաւ կայսեր առջին և առաւ փեսայէն կայսերական փառաւոր թագն ու դրաւ զլուխը իբր գերազանց կապ իրենց անմեկնելի միութեան : Ասոնց ղիմացն էր Մոսկովու մեծապատիւ Պղատոն արքեպիսկոպոսը, որ ծանր ոճով և ճոռով խօսքով կը յիշեցընէր կայսեր և կայսրուհւոյն կայսերական պարտքը, թէ ինչ մեծ պարտաւորութեան և սարսափելի երաշխաւորութեան տակն ինկան առաջի աստուծոյ . և թէ որչափ աւելի պատասխան պիտի տան ստեղծողին՝ որ չխաբուիր : Կը ցցընէր բազմութեան

մէջ զանազան ազգերը, որոնց պիտի տիրէր . կը ցցընէր . քամչատացիներն որ Արքանկելէն եկեր էին . նոյնպէս Սև ծովուն, կասպից ծովուն և մեծ թաթարստանու բնակիչները, նաև մէկ մեծ մասն աշխարհի մինչև բևեռն իրեն պիտի ըլլար :

Վերջապէս ասանկ լմընցուց խօսքը . Ինքնակալ տէր, ահա փառաւոր ինքնակալութեանն աշխարհի տիրեցիր . այսօր եկար հոս երդում ընելու առաջի երկնաւոր թագաւորին, որպէս զի տիրես ամեն նահանգներուն, որ է հինգերորդ մասն տիեզերիս . մի մոռնար բնաւ որ պիտի երթաս պատասխան տալու աստուծոյ այսչափ բիւրաւոր մարդկանց համար . չըլլայ թէ ամենափոքր անիրաւութիւն մը ընես ասոնց մէջէն ամենէն պզտիկին . այլ բարերար եղիր ամենուն որ բարիք գտնես վերջի օրը :

Աս բանով շատ սաստիկ շարժեցաւ երևտասարդ կայսեր գլխած սիրտը, նոյնպէս շատ շարժեցաւ Եղիսարեթի սիրտն՝ որ գնաց հօրն ազատութեան համար շնորհք խնդրելու : Ան ատենն Աղեքսանդր կայսրն սկսաւ ընել իր հրապարակական երդումը, որով զինքը պարտաւորեց առաջի աստուծոյ, որ իր կեանքն ու ժամանակը զոհէ վասն երջանկութեան ժողովրդեան : Աս բանէն ետև Եղիսարեթ լսեց ողորմութեան ձայն մը . իբր թէ կայսրը հրամայեց որ ամեն արտուած անբաղղններն ազատին . ալ սիրտը

չդիմացաւ քաջ աղջրկանը , զօրացաւ զեր-  
բնական զօրութեամբ՝ ճեղքեց այնչափ բաղ-  
մութիւնն ու անցաւ զօրքերուն շրջապատէն  
մէկալ կողմը՝ ցատքեց գահին առաջն աղա-  
ղակելով . Շնորհք , շնորհք : Աս անսովոր  
ձայնը խափանեց հանդէսն ու շշնջիւն ելաւ  
եկեղեցնայ մէջ . մինչև պահապանները բռ-  
նեցին դուրս վարեցին խեղճը մեծ նախատա-  
նօք . թէպէտ չատ լալազին պաղատեց , բայց  
մտիկ բնող չեղաւ ամենեկին :

Ողորմած կայսեր բարի սիրտը չդիմացաւ  
երբոր տեսաւ որ խեղճ աղջիկը լալազին  
դուրս հանեցին . շուղեց որ ան մեծ հանդի-  
սաւոր օրը մարդու մը սիրտ ցաւի . ուստի  
հրամայեց մօտն եղած հազարապետին , որ  
երթայ հասկընայ թէ ինչ շնորհք կը խըն-  
դրէր աղջիկը : Աս հազարապետը կտրիճ  
մարդ ըլլալով վազեց անցաւ բազմութենէն  
դուրս ելաւ . տեսաւ որ խեղճ եղիսաբեթը  
պահապաններուն կ'աղաչէ կը ստիպէ որ թող  
տան երթայ իյնայ կայսեր ոտքը :

Երիտասարդ հազարապետն երբոր տե-  
սաւ՝ ճանչցաւ կոյսն ու շուարեցաւ մնաց ,  
ուստի սկսաւ կանչել . հոս է աղնիւ եղիսա-  
բեթը : Իսկ ցաւալից կոյսը չէր կարծեր թէ  
նոյն կէտին մէջ ալ մեծ երջանկութեան պի-  
տի հանդիպի , ու Սմոլտֆ պատանին պիտի  
գտնէ հոն որ դինքն ու հայրը ազատէ խեղ-  
ճութենէ : Կը նայէր որ ձայնը Սմոլտֆինն  
է , թէպէտ փառաւոր հազուսաներով փո-

խուած էր . պաղած կը նայէր իրեն բազկա-  
տարած ողորմադին տեսքով ու չէր կրնար  
խօսելու . անանկ կուգար իրեն թէ երկնից  
դուռն իրեն համար բացուած էր նոյն օրը :  
Սակայն պատանի հազարապետը զինքը ճանչ-  
նալով որ էր ինքն Սմուլֆի , վազեց մօտն ու  
բռնեց ձեռքէն վերցուց ըսելով . դո՞ւն ես ար-  
դեօք , Եղիսաբեթ . ուսկից կուգաս հրեշ-  
տակի նման : Ես կուգամ , ըսաւ , թոպուլ-  
քէն : Թոպուլքէն , ըսաւ , մինակ ու քալե-  
լով եկար : Այո՛ , ըսաւ , մինակ ու քալելով  
եկայ , որ ողորմած կայսերէն ազատութիւն  
խնդրեմ հօրս համար . բայց աւա՛ղ , ահա  
հեռացուցին զիս կայսեր առջեւէն : Կրկնեց  
Սմուլֆի . մի վախնար , եկուր հետս երթանք .  
ոչ միայն քեզ կայսեր կը ներկայացնեմ ,  
հապա խնդիրքդ ալ կատարել կուտամ . վասն  
զի զթած է , չկրնար քեզ չողորմիլ :

Սմուլֆի մէկդի ընելով պահապան զօրքը՝  
բռնեց Եղիսաբեթին թեւէն մտաւ ներս : Աս  
միջոցս կայսերական մարդիկ մեծ դրանք կող-  
մը կը շարուէին : Սմուլֆի ինկաւ կայսեր ա-  
ռաջն ըսելով . տէր արքայ , լուր ձայնի զրթ-  
բազդիս որ է դուստր Ստանիսլաւս փոթովս-  
քիին . և կուգայ Իշխմայ անապատէն , ուր  
տասուերկու տարի է որ իր ծնողքը կը տան-  
ջուին սքսորանաց մէջ . կուգայ անկէց միայ-  
նակ անօգնական և ոտքով , որ խնդրէ ողոր-  
մութիւն ծնողացն համար : Եղիսաբեթ բազ-  
կատարած չօքած կ'ազազակէր . Շնորհք հօր  
խմոյ :

Մեծ զարմացում և շնչիւն ելաւ բազմութեան մէջ . կայսեր սիրտն ալ շարժեցաւ , վասն զի գիտէր որ ինչ մարդու զաւակ է : Հայրդ ազատ է , ըսաւ , կը շնորհեմ իրեն ողորմութիւն : Աս բանն որ լսեց ողորմած կայսերէն՝ սիրտն անցաւ մարեցաւ ինկաւ Եղիսաբեթ , բռնեցին դուրս տարին . անհամար մարդիկ վրան թափեցան , ոմանք կը գովէին գիւցաղնական առարինութիւնն որ այնչափ ճամբէն եկեր էր հայրն ազատելու համար . ոմանք ալ կայսեր ողորմութիւնը կը գովէին , որ հանդիսէն ետեւ աս մեծ և առջի կայսերական ողորմութիւնն ըրաւ խեղճին՝ ու ելաւ հանդիսով գնաց պալատը :

Իսկ Եղիսաբեթը մտաթափ տարին Յակոբ Ռոսսիին տունը . Սմոլոֆի հանդիսէն ետեւ հոն հասաւ , ճարելով հազիւ կրցան սիրտը զօրացընելու . խեղքը վրան եկաւ՝ աչքը բացաւ տեսաւ որ Սմոլոֆի մօտն է , որուն առջի խօսքն աս եղաւ իրեն . Եղիսաբեթ , հայրդ ազատեցաւ . վասն զի կայսրը շնորհք ըրաւ իրեն : Սակայն Եղիսաբեթ չէր կրնար խօսելու . միայն նայուածքը կ'երեցընէր սրտին ուրախութիւնն ու երախտադիտութիւնը : Վերջապէս հազիւ կրցաւ հօրն ու մօրն անունը տալու , թէ պիտի տեսնեմ զանոնք և պիտի ուրախանամ անոնց երջանկութեանը վրայ :

Սմոլոֆի պատանին աս աղջրկան ծնողա-



կան սէրը տեսնելով և իմաստուն խօսքերը լըսելով աւելի սիրտը վառեցաւ անոր վրան սիրով . միտքը դրաւ որ այսպիսի առաքինի կոյսը յաւիտենական սիրով սիրելու և պատուելու արժանի է : Ուստի որչափ կարելի էր կը հոգար զինքը բարեպաշտ Յակոբին ձեռքովը , որուն կնոջը հետ մնաց մինչև որ ամեն խնդիրը կատարուեցաւ : Բայց շատ օր անցաւ ինչուան որ ազատութեան շնորհքն եղաւ . վասն զի Ստանիսլաւսին ամեն ըրածները քննեցին : Ան քննութենէն հասկըցաւ կոյսը՝ որ ազնուական իշխանին շղթայները խորտակելն արդարութիւն էր . բայց աս արդարութիւնը դեռ չհասկըցած՝ ըրածը շնորհք էր , որ աքսորեալներն ամենևին չմոռցան :

Սմբու՞թ առաւօտ մը կանուխ եկաւ Յակոբ Ռոսսիին դուռը զարկաւ ներս մտաւ . որ հանդիսի օրէն ետև դեռ չէր համարձակած հոն երթալու . կանչեց Եղիսարեթը ցցուց մազաղաթ հրովարտակը կայսերական կնքով կրնքած : Ահա աս է , ըսաւ , կայսեր հրամանագիրն որ կը խրկէ հօրս 'ի Թոպուք՝ հօրդ ազատութեան համար : Ազնիւ կոյսը խլեց ձեռքէն հրովարտակն ու քսեց աչքին՝ լացաւ ողորմագին : Սմբու՞թ կրկնեց . այսչափս բաւական չէ , վասն զի մեր մեծահոգի ողորմած կայսրը ոչ միայն պիտի ազատէ հայրդ , այլ և պիտի տայ իրեն հարստութիւնը , պատիւն ու մեծութիւնը :

Աս խօսքերն որ շատ մարդու հպարտութիւն կը բերեն՝ ամենեւին Եղիսաբեթի սիրտը չմեծցուցին . այլ խոնարհելով առաջի աստուծոյ , շնորհակալ եղաւ . ետքը խընդրեց զիտնալ թէ երբ կ'երթայ թղթատարը : Պատասխանեց Սմելոֆ թէ վաղը առաւօտ պէտք է ճամբայ ելլել . ես ալ հրաման առի կայսերէն որ հետն երթամ : Եղիսաբեթ աղաղակեց . հապա ես ինչ ընեմ , չերթամ ծնողացս : Ըսաւ պատանին՝ թէ պէտք է որ դուն ալ երթաս անտարակոյս . զի քու բերնէդ 'ի զատ որոն բերանն իրաւունք ունի աւետիս տալու ծնողացդ աս շնորհքին համար . ես աս խորհրդով ծանուցի կայսեր . գթացաւ վրադ ու զիս պարտաւորեց որ ծանուցանեմ քեզ անոր հրամանն որ վաղը ճամբայ պիտի ելլես . ահա կը շնորհէ քեզի կառք մը , երկու ծառայող կինն և քսակ մը ոսկի , որպէս զի անաշխատ հանգիստ երթաս :

Եղիսաբեթ հիանալով նայեցաւ երեսն ու ըսաւ . առաջին օրէն 'ի վեր որ քեզ տեսայ , ինչ բարիք որ աստուած ինձի տուաւ , քու ձեռքովդ տուաւ . չիյտեմ ինչ խորհուրդ ունին աստուածային զաղտնէքը , զի առանց քեզի ոչ ես կրնայի աս շնորհքն ունենալու , և ոչ ծնողքս կրնային իրենց հայրենիքը տեսնելու : Ուրեմն քեզի կը վայլէ որ հօրս ծանուցանես ազատութեան շնորհքը չէ ինձի . և աս բարեյաջողութիւնը պիտի ըլլայ միայն

արժանաւոր վարձք քու բարերարութեանդ :  
 Չէ, Եղիսարեթ, ըսաւ պատանին. աս բա-  
 րեյաջողութիւնը թող ըլլայ քեզի վարձք,  
 յուսամ թէ ինձի ուրիշ աւելի գերազոյն  
 վարձք մը կ'ըլլայ : Կանչեց կոյսը. աւելի մեծ  
 վարձք. սլ տէր իմ, քան զայս աւելի մեծ  
 բան կրնայ ըլլալ աշխարհիս վրան : Սմոլոֆ  
 կ'ուզէր ուրիշ բան ալ խօսիլ, լուռ եղաւ  
 սկսաւ վար նայելով մտածել. ետքը ըսաւ,  
 թէ ես քեզի կ'իմացընեմ երբոր աստուծով  
 երթանք հօրդ քով :

### Պիպոսած Ռոստանէրբը .

Սմոլոֆ պատանի հազարապետը նոյն օրն  
 ամեն պատրաստութիւն տեսաւ թէ իրեն և  
 թէ Եղիսարեթին. իսկ առաւօտուն եկաւ  
 հոն թագաւորական կառքը երկու ծառայող  
 կնիկներով և ամեն պատրաստութեամբ : Ե-  
 լաւ Եղիսարեթ իբր թագաւորազուն գշխոյ,  
 հազար նոր շինած ճամբու հագուստը, հա-  
 նեց քսակէն հիւրընկալներուն շատ պարզե-  
 տուաւ և մեծ շնորհակալութեամբ բարեկեց,  
 ելաւ նստաւ կառք ուրախութեամբ. սկսաւ  
 երթալ երկու աղախնով, Սմոլոֆն ալ հե-  
 տը : Զատուեցան Մոսկովէն՝ մտան Սիպե-  
 րիայի մեծ ճամբայն. բայց անանկ կարճ կ'ե-  
 րենար Եղիսարեթի քաղաքներուն միջոցը  
 և անանկ հանգիստ, իբր թէ ան տեղերը  
 չէին՝ որոնցմէ անհնարին տառապանօք ան-

ցաւ : Սմուռֆ ամեն տեղ քոյր կը կանչէր  
Եղիսաբեթին և եղբայրական սուրբ սիրով  
կը սիրէր . անանկ որ քանի առաջ կ'երթայ-  
ին , աւելի իրենց սէրն ու խնդուծիւնը կը  
շատնար :

Ահա այսպիսի ցնծութեամբ հասան Ղա-  
զան քաղաքը . Եղիսաբեթ յիշեց բարերար  
Նիկողոս նաւավարը , հարցուց փնտրուեց թէ  
նր է , որ բարերարութեանը երախտագէտ  
ըլլայ : Պատասխանեցին թէ մեծ դժբաղ-  
դութեան պատահեցաւ , զի վեց զաւկով  
հիւանդ պառկած է ու հաց չունին ուտելու :  
Եղիսաբեթ խնդրեց որ տունը տանին զին-  
քը . գնաց գտաւ զինքն աղքատ ողորմելի .  
բայց ան չճանչցաւ Եղիսաբեթն որ առաջ  
անշուք աղքատ տեսեր էր , հիմա կը տեսնէր  
պայծառ և փառաւոր . ուստի Եղիսաբեթ  
հանեց քսակէն անոր տուած պզտի ստակը  
ցցուց իրեն , ու յիշեցուց թէ իրեն ինչ աղէ-  
կութիւն ըրեր էր ջրէն անցնելու ատենը :  
Ապա հանեց հարիւր ռուբլի զրաւ անկողի-  
նին վրայ . սոս , ըսաւ , զայս , զի ողորմութիւ-  
նը պարապ տեղ չցանուիր . ահա ան ողոր-  
մութիւնն է որ ինձի տուիր անուամբ աս-  
տուծոյ . ահա ան է որ աստուած դարձուց  
քեզի :

Ղազանէն ելան երկայն ճամբով . որչափ  
աւելի առաջ կ'երթային , այնչափ շատ կը  
շարժէր Եղիսաբեթին սիրտն ալ որ շուտով  
հասնի ծնողացը . ուստի գիշեր ցորեկ կ'եր-

Թային անհնարին արագութեամբ թռչունի նման, մինչև հասան Սարաբուլ քաղաքը, ուր որ թաղուած էր սրբակայ քարոզիչ քահանայն : Եղիսաբեթ չուղեց առաջ երթալու ինչուան որ չերթայ անոր գերեզմանին այցելութիւն չընէ, որ իրեն որդիական պարտքն էր : Ելաւ շիտակ գնաց գերեզմանոցը մեծ ջերմեռանդութեամբ . նաև տեսաւ ան փայտէ խաչը որուն քով այնչափ ողորմելի դառն արտասուք թափեր էր . սկսաւ քաղցր արտասուօք լալ ու շնորհակալ ըլլալ ստեղծողին ողորմութեանը . գնաց ինկաւ գերեզմանին վրայ կ'աղօթէր : Անանկ կ'երևնար իրեն թէ սուրբ ծերը երկինքը կ'ուրախանայ անոր երջանկութեանը վրայ, և ողորմած սիրտը այլոց յաջողութեամբ աւելի կը պայծառանայ երկնային փառքերուն մէջ, մանաւանդ իրեն երջանկութեամբը :

Ելաւ գերեզմանոցէն մեծ ջերմեռանդութեամբ ու սկսաւ երթալ թոպուլք . բայց բուր ճամբայն միայն ծնողացը վրան կը խօսէր, թէ ինչպէս պիտի տեսնէ զիրենք և ինչպէս պիտի գտնէ : Միշտ կը մտածէր Սմոլոֆին երախտեացը վրան, որ պիտի պատմէր ծնողացն անոր եղբայրական գութն ու սէրը . իսկ Սմոլոֆ կը ջանար որ ժամ մը առաջ տանի Եղիսաբեթը ծնողացն յանձնէ : Ահա այսպիսի բարի խորհրդով հասան թոպուլք և ներկայացան մեծ իշխանին Սմոլոֆին հօրը, որ շատ ուրախանալով առաւ թագաւորին

Թուղթն ու սկսաւ շուտով գործքի դնել ինչ հրաման որ եղած էր Սփինճերին ազատութեանը համար :

Եղիսաբեթ չուզեց երկայն մնալու թոպուրք . հրաման խնդրեց իշխանէն որ շուտով հասնի ծնողացը . իշխանը հրաման տրւաւ որդւոյն որ մեծ պատուով տանի ծնողացը յանձնէ : Մեծ ուրախութեամբ ելան անկէ հասան Սախմբայ : Եղիսաբեթ ճանչնալով քալած անկերը՝ չկատեր թէ ինչպէս շնորհակալ ըլլայ աստուծոյ : Միայն կը հոգար որ չըլլայ թէ ծնողքը կսկիծով հիւանդ ըլլան . վասն զի դիտէր որ իրեն համար մեծ ցաւի մէջ են անոնք : Երբոր Սախմբայ մըտան , Եղիսաբեթ ուզեց որ հարցընէ իմանայ ծնողացը որպիսութիւնը . բայց Սմբուֆ թող չտուաւ , սկսաւ շարունակել ճամբայն ու երթալ անտառէն :

Երբոր մտան մեծ անտառը՝ Եղիսաբեթին սիրտն ելաւ , արիւնը կ'այլայլէր , մանաւանդ երբոր հասաւ լճին քով . կը ճանչնար ամեն մէկ ծառը և ժայռերը . միտքը կուգար թէ ինչ հոգեր քաշեր է հոն , և որչափ արտասուք թափեր է ծնողացն ազատութեանը համար , և հիմայ ինչ երջանկութեամբ կը դանայ ծնողացը քով : Բռնացաւ կիրքը , սաստկացաւ սրտին այլայլութիւնը . չկատեր թէ որ դին նայի , և ինչպէս շնորհակալ ըլլայ աստուծոյ . նորէն կը դառնար չորս դին կը նայէր և հաւատալիքը չէր գար որ ծնողքը պիտի առողջ տեսնէ :

Մ. աջ երթալով տեսաւ ծնողացը խրճիթը , տեսաւ իր հայրենիքը հեռուէն , սիրտը մարմրեցաւ . ալ չէր կրնար զինքը բռնելու , ուրախութենէն կուլար : Մմուռֆ բռնեց զինքը՝ քաղցր խօսքերով կը մխիթարէր , սիրտ կուտար . բայց ան՝ վախնամ թէ հիւանդ են , կ'ըսէր , ծնողքս . վախնամ ցաւի մը հանդիպեցան իմ պատճառովս . ո՛ւր են , մարդ մը չերենար . վախնամ՝ կորուսի երջանկութիւնս : Ծնողասէր սիրտը ալ չգիմացաւ , թողուց կառքը , ելաւ վազեց մինակ . կիրքը բռնանալով՝ ծնկուրները կը դողային , չէր կրնար տ. աջ երթալու . որչափ աւելի մօտեցաւ խրճիթին , այնչափ սիրտը թուլացաւ , ու ձայնը կը հեկեկար :

Վերջապէս հասաւ Եղիսարեթ խրճիթին դուռը . երբոր ծնողաց ձայնը լսեց՝ ճանչցաւ ու նորէն սիրտը փակուեցաւ . խելքը գնաց չէր կրնար ներս մտնելու . դողալով կանչեց ծնողքը , բացաւ դուռը ներս ինկաւ . տեսաւ հայրն ու աղաղակեց , մայրը հասաւ քովը , լալով փաթտուեցան իրարու . Եղիսարեթ ինկաւ ծնողաց դիրկը՝ մնաց անխօս . Մմուռֆ հասաւ վրանին սիրտ տալով . ահա ձեր մէկ հատիկ առաքինի զաւակն որ բերաւ ձեզի կայսերական շնորհքի և ազատութեան պարգևը , յաղթեց ամեն բանի և ամենն ալ շահեցաւ :

Աս խօսքերն ամենեկին անոնց ականջը չմըտաւ , և ոչ իսկ կրնային մտածել թէ ինչ



Հնորհք է, և ինչ աղէկութիւն. վասն զի հար-  
բածի նման իրարու երես կը նայէին անձայն,  
ու միայն աղնիւ զաւկին փաթտուած կը  
զմայլէին: Այնչափ միայն խելքերնին կը հաս-  
նէր թէ եկաւ Եղիսաբեթ ու իրենց զիրկն է.  
գտան ու ալ պիտի թող չտան. բոլորովին  
մոռցեր էին թէ ուրիշ բարի կրնայ ըլլալ աշ-  
խարհիս մէջ քան զայն որ ունէին:

Երկայն ժամանակ մնացին ասանկ՝ խելա-  
գարի պէս, երբեմն երբեմն բան մը կը խօ-  
սէին՝ որ ոչ կապ ունէր և ոչ հետեանք:  
Կ'ուզէին խօսելու հարցընելու, չէին կրնար  
բան բանի հետ կապելու. ապա սկսան լալ,  
նորէն սրտերնին փակուեցաւ, կորուսին մրտ-  
քերնին. զի գերազանց գութն և ուրախու-  
թիւնը կապեց լեզունին ալ սրտերնին ալ.  
անանկ որ Սմոլոֆն ալ չէին տեսներ որ զար-  
մանալով կը նայէր երեսնին, ու չէր գիտեր  
թէ աս ինչպիսի բան է և ինչ զօրաւոր կիրք  
է: Վերջապէս Սմոլոֆ վախցաւ թէ վտան-  
գի մը չգան սաստիկ ուրախութենէն, վազեց  
քովերնին՝ ոտքերնին ինկաւ սկսաւ սիրտ  
տալ որ արթըննան ու Հնորհակալ ըլլան ըս-  
տեղծողին, որ այսչափ մեծամեծ Հնորհքնե-  
րով ողորմեցաւ իրենց ու սիրական զաւակ-  
նին բերաւ հասուց իրենց զիրկը. պէտք է  
կ'ըսէր ուրախանալ և մխիթարուիլ աստու-  
ծով, չէ թէ կապուիլ մնալ չափազանց կիր-  
քով և չճանչնալ երջանկութիւնն որ աս-  
տուած տուաւ ձեզի:

ՊԻՊՈՒՄԺ ԷՐԿՈՐԱՍԱՆԵՐՈՐԴ .

Երբոր քիչ մը իրենց կիրքը չավաւորեցաւ, տեսան Սմնլոֆ պատանին ու բարեւցին շնորհակալութեամբ: Մն ատենը համարձակեցաւ բարեսիրտ պատանին այսպէս խօսելու. գիտնաք որ հիմա դուք ունիք մէկ զաւակէն աւելի. վասն զի մինչև ցայժմ՝ Եղիսաբեթ զիս եղբայրը անուանեց. սակայն երբոր եկաւ ձեր գիրկը հասաւ՝ ներեցէք ինձի որ ուրիշ անուն ալ արտաբերեմ: Եղիսաբեթ մեծ երախտագիտութեամբ բռնեց ծնողաց ձեռքն ըսաւ. առանց աս եղբորս բանի մը կարող չէի, կարելի է թէ հոս ալ չէի. աս տարաւ զիս կայսեր ոտքը, խօսեցաւ ինձի համար և ձեր ազատութիւնն առաւ. աս է որ բերաւ ձեր զաւակը ձեզի ամենայն յաջողութեամբ: Ո՛վ մայր իմ, ըսէ ինձի ի՞նչ պէս պիտի յայանեմ իմ երախտագիտութիւնս. ո՛վ հայր իմ, սորվեցուր ինձի ի՞նչ պէս պիտի ազատիմ պարտքէս: Ֆէոտորա դգուելով սիրական դուստրը ըսաւ. քու երախտագիտութիւնդ պիտի ըլլայ սէրը, անանկ՝ ինչպէս ես ունիմ հօրդ հետ. Սփինձեր աղաղակեց. ազնիւ սրտիդ պարգևը շատ վեր է քան զամենայն բարերարութիւնս: Պարկեշտ կոյսը կարմրելով չիյաէր ինչ պատասխանէ. զի այնպիսի բան երեակայութեանէն չէր անցած, որ սնած էր առաքինու.

Թեամբ անապատի մէջ . մինչև ան ժամանակը պարզմտութեամբ ամեն բան կը հասկընար , ինչպէս որ ողջախոհ սորված էր : Սակայն կը վախնար անհնազանդ երևնալու ծնողացն որ կը ջանային հաւանեցընել զաւակն որ Սմբլոփին հաւանութիւն տայ : Ուստի Եղիսաբեթ համեստ նշան մը տուաւ թէ իր կամքը միաբան է աստուծոյ բարի կամացը . աստուծոյ կամքն ըլլայ : Աս բանն որ լսեց ազնուական պատանին՝ շնորհակալ եղաւ աստուծոյ և անոնց երախտադիտութեանն որ խնդիրը կատարեցին , ու հաւանեցան զինքը իրենց փեսայ ընելու . ուստի անանկ կը կարծէր թէ ան կէտին քան զինքն աւելի երջանիկ մարդ չկայ աշխարհիս վրայ : Չորսն ալ աս մտքով կ'ուրախանային , և ամենն ալ երջանկութեամբ կը փայլէին : Չարմանալի տեսարան եղաւ հոն . հօրը վսեմութիւնն որ ազատութեանը համար զինքը պարտական կը ճանչնար , մօրը գորովական սէրը , գտերն համեստ առաքինութիւնը և Սմբլոփին սքանչելի սէրը :

Նոյն օրն ու բոլոր գիշերը սիրալրական խօսքերով անցուցին . երբեմն պատմել կուտային Եղիսաբեթի զվստուհ եկածները , երբեմն կուլային , և երբեմն ծնկան վրայ դալով շնորհակալ կ'ըլլային աստուծոյ բարերարութեանցը , Հետեւալ օրն առաւօտանց ելան պատրաստուեցան թոպոլսը երթալու մեծ իշխանին . բայց ամեն կողմը նայելով կը

բարեւէին ան տխրալի անապատին տեղերը , ուր որ տասուերկու տարի մնացեր էին ոլորմելի աքսորանաց մէջ : Մակայն միշտ Եղիսարեթն իրենց աչքին առջևէն չէին հեռացընէր՝ դորովական սիրով կը զգուէին , մինչև հասան Սախմբայ . ծնողքը կը ցցընէին զաւկին ուր տեղերն որ արտասուք թափեր էին և սրչափ ողբացեր էին իրեն համար , մանաւանդ մօրը թափած արտասուքն եկեղեցնայ մէջ :

Ասոնց տրտմութիւնն աւելի սաստիկ եղած էր մազերն առնելէն ետև որ խրկեր էր ճամբայէն . միշտ կուլայլին ու երեսնին քսելով կ'ազազակէին թէ երբ պիտի տեսնենք : Ահա աս ամեն կակիծները նորոգեցան ան տրտմալի տեղերէն զատուելու ժամանակնին : Այսպիսի տրտմախառն ուրախութեամբ հասան թոպոլք : Մեծ իշխանը շատ մեծ սլատուով զիրենք մեծարեց . մանաւանդ մեծ համարում՝ ցցընելով կը սլատուէր Եղիսարեթն որ ծնողացը սիրոյն համար այնչափ չարչարանք քաշեց ճամբայներն ու զանոնք ազատեց :

Իսկ Սիինճեր կամ Ստանիսլաւս իր քաղցր ամուսնոյն ու սիրելի զաւկին հետ միատեղ շնորհակալ եղան իշխանին բարեսիրութեանը , և զաւկին՝ Սմոլոֆ սլատանւոյն , որ այնչափ բարի սրտով հոգացեր էր Եղիսարեթն : Աս բարեկամական խօսակցութիւնները դառնալով զարմանալի բերկրութեամբ ,

վերջը խօսքը հոս բերին որ մնան ոչ միայն անքակ բարեկամ, այլ և խնամութեամբ ազգական ըլլան ու անմահ սիրով կապուին իրարու հետ. ուստի Եղիսաբեթին ու Սմոլոֆին նշանին հանդէսը կատարեցին մեծ ցնծութեամբ: Թէպէտ Եղիսաբեթին աստիճանը և ցեղին պատիւը շատ գերազանց էր քան Սմոլոֆին, սակայն աս բարեսիրտ կտրիճին առաքինի գործքը զինքն արժանի ըրաւ աս երջանկութեանն ու մեծ պատուոյն ինչպէս որ Եղիսաբեթ ալ կը մտածէր որ քան զայն արժանաւոր մարդ չկար աշխարհիս վրայ իրեն համար:

Ահա այսպիսի ցնծութեամբ բարով մնացէք ըսին ոչ միայն մեծ իշխանին որ իրենց ամեն բանը հողաց ըստ կայսերական հրամանին, այլ և ան Սիպերիայի տրտմալի անապատներուն, ուսկից ելան հեռացան իրենց արսորանաց խղճալի տեղերէն. փայլեցան մտնելով եւրոպական բարեշէն քաղքըններուն մէջ և մտենալով իրենց քաղցր հայրենեացը: Զարմանալի էր իրենց ջերմ աւանդութիւնը. ամեն խօսքէն ետև թևերնին վեր վերցընելով շնորհակալ կ'ըլլային աստուծոյ, և ուր տեղ որ եկեղեցի և խաչ կը տեսնէին ճամբուն մէջ, վար կ'իջնային երկրպագութիւն կ'ընէին. մանաւանդ Եղիսաբեթ, որ հրեշտակի նման հողևոր խօսքերով կը զուարճանար իր սիրական ծնողաց և բարեսէր Սմոլոֆին հետ, մինչև հասան

Բեթրպուրի : Երբոր ներկայացան կայսեր ,  
բարեսիրտ կայսրը նայելով վրանին որ տա-  
սուերկու տարի այնչափ տառապանք քաշեր  
էին դառն արտորանաց մէջ , շատ դուժ ցը-  
ցուց իրենց ու ամենայն պատուով պատուեց ,  
և իրենց ամեն մեծութիւնը տուաւ , որ եր-  
ջանկութեամբ ապրին աշխարհիս վրայ :

Բարեպաշտ Ստանիսլաւս մեծաւ շնորհա-  
կալութեամբ խոնարհեցաւ Սղեքսանդր կայ-  
սեր աղօթք ըրաւ , նոյնպէս Ֆէոտորա և Ե-  
ղիսաբեթ . ապա ելան իրենց համար պատ-  
րաստուած պալատը դնացին նստան . ուր ա-  
մեն մեծամեծք կ'երթային զիրենք պատուե-  
լու : Բաւական հանգստանալէն ետքը Եղի-  
սաբեթին հարսնեց հանդէսը կատարեցին :  
Եւ այսպիսի երջանկութեամբ իրենց մնացած  
օրերն անցուցին բարի օրինակ ըլլալով աշ-  
խարհի՝ առաքինի քաղաքավարութեամբ ,  
եղբայրօրութեամբ , երախտագիտութեամբ  
և աստուածպաշտութեամբ :

Վ. Ա. Խ Ճ Ա. Ն







# Յ Ա Ն Կ

---

## ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ


	Ա. ԴԱՍ	
Վարժութիւն գրոց և հեղելու . . . . .		5
	Բ. ԴԱՍ	
Վարժութիւն խօսք կապելու . . . . .		15
	Գ. ԴԱՍ	
Վարժութիւն բարոյական գործոց . . . . .		24
	Դ. ԴԱՍ	
Վարժութիւն Հայոց պատմութեան . . . . .		35
	Ե. ԴԱՍ	
Վարժութիւն աստուածաշնչի պատմութեան		58
	Զ. ԴԱՍ	
Վարժութիւն եկեղեցական պատմութեան . . . . .		88
	Է. ԴԱՍ	
Վարժութիւն ուսումնական զխտելեաց . . . . .		117

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՍՌԱՅԻՆԻ ՕՐԻՆԱԿԱՅ

Ա.	Իմաստութիւն . . . . .	147
Բ.	Սշխատասիրութիւն . . . . .	149
Գ.	Հնարագիտութիւն . . . . .	150
Դ.	Խրատարանութիւն . . . . .	155
Ե.	Ազգատութիւն . . . . .	158
Զ.	Հոգեսիրութիւն . . . . .	157
Է.	Ժամասիրութիւն . . . . .	159
Ը.	Աստուածալաշտութիւն . . . . .	161
Թ.	Արդարութիւն . . . . .	163
Ժ.	Հնազանդութիւն . . . . .	164
ԺԱ.	Անյիշաչարութիւն . . . . .	167
ԺԲ.	Ազգասիրութիւն . . . . .	170
ԺԳ.	Որդեսիրութիւն . . . . .	174
ԺԴ.	Ծնողական կիրք . . . . .	177
ԺԵ.	Հայրասիրութիւն Եղիսաբեթի . . . . .	183







m

m

4

11



g m. 744

1-11-18 1881

1881



119